



## Արաքս ՓԱՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՉԱՆՈՒՄ.  
ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

29

ԿԻ-22

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՐԱՄ  
22 ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Արարս Փաշայան*

ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՉԱՆՈՒՄ.

ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

5029



Երևան  
2014

ՀՏԴ 32.001 : 29  
 ԳՄԴ 66.01 + 86.38  
 Փ 220

Հրատարակվում է «Նորավանք» ԳԿՀ և  
 ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
 գիտական խորհուրդների որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
 ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
 պատմական գիտությունների թեկնածու

### Փաշայան Արարս

Փ 220

Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան/Ա.Փաշայան.  
 - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2014. - 196 էջ:

Մենագրությունում փորձ է արվել քննարկել Ադրբեջանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ իսլամին առնչվող խնդիրներ: Ընդհանուր գծերով լուսաբանվել են երկրի հասարակական, քաղաքական և սոցիալական կյանքում իսլամի դերակատարությունը, «ադրբեջանական իսլամի» առանձնահատկությունները, Ադրբեջանում արտաքին իսլամական ազդեցություններն (հատկապես թուրքական, իրանական և արաբական) ու դրանց ունեցած նշանակությունը, ինչպես նաև Իսլամական համագործակցություն կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին Ղարաբաղյան հակամարտության հարցում: Անդրադարձ է կատարվել նաև «ցարական իսլամի» և «խորհրդային իսլամի» առանձնահատկություններին:

Նախատեսված է հասարակագետների, արևելագետների, դիվանագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 32.001 : 29  
 ԳՄԴ 66.01 + 86.38

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ..... 5

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ  
 ԻՍԼԱՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԻԳՋԱԳԼԵՐՈՒԹՅՈՒՄ (XIX-XX ԴԴ.) ..... 13

Իսլամն Արևելյան Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրապետության շրջանում ..... 13

Իսլամը Խորհրդային Ադրբեջանում ..... 26

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ  
 ԻՍԼԱՄՆ ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 36

Իսլամը հետխորհրդային շրջանում.  
 նոր մոտեցումներ կրոնի հարցում ..... 36

Իսլամը Հեյդար Ալիևի կառավարման շրջանում:  
 «Ադրբեջանական իսլամը»՝ ազգային նախագիծ ..... 44

Իլհամ Ալիևի իշխանության շրջանը (2003-2013թթ.):  
 Իսլամական գործոնի ակտիվացումը ..... 53

«Պաշտոնական իսլամը»՝ աշխարհիկ և  
 կրոնական ընտրանիների համագործակցությունը ..... 67

«Ժողովրդական իսլամը».  
 սրբատեղիների երևույթն Ադրբեջանում ..... 72

Իսլամի ընկալումները և  
 իսլամական վերածնունդն Ադրբեջանում ..... 76

Արտաքին ազդեցություններն Ադրբեջանում  
 իսլամը վերածնունդի հարցում ..... 87

Մունիիական Աբու Բաքր և  
 շիայական Ջումա մզկիթների համայնքները ..... 114

Իսլամական արմատականության դրսևորումներն Ադրբեջանում ... 124

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ	
ԻՍԼԱՄԱՆ ԱԴԻԲԵՋԱՆԻ	
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	135
Հայաստանի դեմ Ադրբեջանի քարոզչության խլամական բաղադրիչը	135
Իսլամական գործոնը Ղարաբաղյան պատերազմում, մոջահիդների մասնակցությունը	154
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	160
ԱՄՓՈՓՈՒՄ	175
РЕЗЮМЕ	183
SUMMARY	190

## ԱՌԱՋԱԲԱՆ\*

Իսլամն<sup>1</sup> Ադրբեջանի Հանրապետությունում (ԱՀ) ապրող մուսուլման<sup>2</sup> բնակչության ինքնության և մշակույթի կարևոր բաղկացուցիչն է: Մուսուլման ազգաբնակչությունն ունի խայտաբղետ խճանկար՝ թուրքական, իրանական և կովկասյան ծագում ունեցող: Ողջ միջնադարի ընթացքում իսլամը ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքում կարևոր դեր է խաղացել քաղաքակրթական գործընթացների վրա: Այստեղ

<sup>1</sup>Շեյխնակը գրքի հրատարակությանն աջակցելու համար հատուկ շնորհակալություն է հայտնում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի (ԳԿՀ) տնօրեն Գագիկ Հարությունյանին, գրքի խմբագրին թուրքագետ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի (ԱԻ) ավագ գիտաշխատող, Հայաստանի ամերիկյան համալսարանի ավագ դասախոս Վահրամ Տեր-Մաթևոսյանին, արաբագետ Շահեն Կարամանուկյանին, Միչիգանի համալսարան-Դիրբոնի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արևելագետ Արա Մանջյանին, ԱԻ արաբական երկրների բաժնի գիտաշխատողներին, նաև՝ ԱԻ, ԵՊՀ և «Նորավանք» ԳԿՀ իր բոլոր այն գործընկերներին, ովքեր մասնակցություն են ունեցել աշխատության քննարկման, մշակման և խմբագրման գործում:

<sup>2</sup>Իսլամը (արաբերեն՝ հնագանդություն) համաշխարհային կրոններից ամենաերիտասարդն է, հիմնվել է 7-րդ դարում, Արաբական թերակղզում, Մուհամեդ մարգարեի կողմից, որը քարոզում էր Աստծուց Ալլահից ստացած հայտնությունները: Իսլամի հիմքում ընկած են միաստվածության (թաուհիդ) և Աստծուն անվերապահ ծառայելու գաղափարները: Իսլամի դրոշի ներքո արաբական ցեղերին հաջողվեց միավորվել և նվաճողական արշավանքների արդյունքում 7-րդ դարի կեսերին ստեղծել արաբախլամական պետություն (խալիֆայություն):

<sup>3</sup>Իսլամի հետևորդները կոչվում են մուսուլմաններ, այսինքն՝ մարդիկ, ովքեր հնագանդ են Աստծուն: Մուսուլմանը պետք է իր երկրային կյանքում անվերապահորեն կատարի աստվածային պատվիրանները: Նշենք, որ մուսուլման եզրից բացի աստվել-օգտագործվող մյուս եզրը մահմեդականն է, որ նշանակում է Մուհամեդի հետևորդ:

ավանդականորեն տարածված են եղել իսլամի սուննի<sup>1</sup> և շիա<sup>2</sup> ուղղությունները, դրանց առանձին ճյուղավորումներն ու կրոնաիրավական դպրոցները<sup>3</sup>, նաև սուֆիականու-

<sup>1</sup> Սուննի իսլամը ծագում է արաբերեն սուննա (բառացի՝ ուղի, օրինակ, նմուշ) եզրից, որը նկատի է առնում Մուհամեդ մարգարեի վարքն ու ասույթները, որոնք արձանագրված են հադիսների (պատումներ) ժողովածուներում: Սուննան իսլամի ամենակարևոր սկզբնաղբյուրն է իսլամի սուրբ գրքից՝ Ղուրանից հետո, որին հավատացյալները պարտավոր են հետևել: Սուննայի հետևորդները կոչվում են աիլ ալ-սուննա վա ալ-ջամաա, որ թարգմանաբար նշանակում է սուննայի և համաձայնության ժողովուրդ (կրճատ աիլ ալ-սուննա՝ սուննիներ): Սուննիները հավատացյալների այն համայնքն են, որն ապրում է՝ հինք ընդունելով Մուհամեդ մարգարեի սուննան՝ ուղին, որպես չափորոշիչ: Քանի որ Մուհամեդ մարգարեն իր հայտնությունները ստանում էր Աստծուց, նրա արտահայտությունները նա համարվում են աստվածային ներշնչանքի արդյունք:

<sup>2</sup> Շիա (արաբերենից թարգմանաբար՝ կուսակից, գիևակից), որը շիաթու Ալի՝ Ալիի գիևակիցներ արտահայտության կրճատ ձևն է: Շիա իսլամը ձևավորվեց 7-րդ դարի կեսերին իսլամական համայնքում իշխանության համար մղված պայքարի արդյունքում: Մուհամեդ մարգարեի (570-632թթ.) մահից հետո մուսուլմանների մի խումբ նրա հորեղբոր որդուն և դստեր՝ Ֆաթիմայի ամուսնուն՝ Ալի իբն Տալիբին (656-661թթ.) համարեց մարգարեի միակ և օրինական ժառանգորդը: Շիաներն առաջ քաշեցին այն թեզը, որ իսլամական պետության իմամաթի մեջ Ումայյի առաջնորդները իմամները, պետք է լինեն բացառապես Ալիի, միևնույն ժամանակ Մուհամեդի անմիջական շարավորները: Միևնույն սուննիները համարում էին, որ Ումայյի առաջնորդները պետք է ընտրվեն ժողովրդի կողմից: Հետագայում սուննիները խախտեցին այս սկզբունքը, երբ Օմայյան հարստությունը (661-750թթ.) դարձավ ժառանգական: Իսլամի սուննի և շիա ուղղությունների մեջ կան սկզբունքային այլ տարբերություններ նա: Սուննիները չեն ընդունում շիաների առաջնորդ Ալիի հատուկ բնույթը, ինչպես նաև բացառում են որևէ միջնորդավորված շիան Աստծո և մարդկանց միջև Մուհամեդի մահվանից հետո, ինչը բխում է Մուհամեդի՝ վերջին մարգարե լինելու դրույթից:

<sup>3</sup> Մագհարները (արաբերեն՝ ընթացք, ճանապարհ) իսլամի կրոնաիրավական դպրոցներն են: Յուրաքանչյուր մագհարի մեջ մշակված են Ղուրանի և սուննայի օգտագործման ու դրանց հիմնարար դրույթների մեկնաբանման որոշակի սկզբունքներ: Սուննի իսլամում գոյություն ունեն չորս մագհարներ (հանաֆիական, շաֆիաիական, մալիքիական և հանբալիական), իսկ շիա իսլամում առավելապես տարածված է ջաֆարիական մագհարը, որոնք տարբերվում են միմյանցից իրենց մեթոդաբանությամբ և շեշտադրումներով: Մագհարների մեկնաբանություններն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

թյունը<sup>4</sup>: Տարածաշրջանում իսլամի զարգացման հարցում էական նշանակություն են ունեցել արաբական, իրանական, թուրքական և ռուսական ազդեցությունները:

Խորհրդային Միության շրջանում (1920-1991թթ.) կոմունիստական գաղափարախոսության տևական ազդեցության պատճառով ներկայումս Ադրբեջանի մուսուլմանների գերակշռող մասը ոչ թե օրինապահ հավատացյալներ են, այլ «մշակութային մուսուլմաններ» կամ «աշխարհիկ մուսուլմաններ»: Օրինապահ հավատացյալ ասելով նկատի ունենք աստվածային պատվիրաններին և իբրադային<sup>5</sup> հետևող մուսուլմանին:

Ադրբեջանի Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը մուսուլման է<sup>6</sup>: Մուսուլման բնակչության մոտ 65-75 տոկոսը շիաներ են, մնացածը՝ սուննիներ<sup>7</sup>: Ադրբեջանական

<sup>4</sup> Սուֆիականությունը (արաբերեն՝ թասավուֆ) իսլամական միստիկ կրոնափիլիսոփայական ուղղություն է, ձևավորվել է 8-րդ դարում, արաբաիսլամական միջավայրում, հունական և հնդկական փիլիսոփայության ազդեցությամբ: Ըստ ամենայնի առաջացել է արաբերեն սուֆ բրդյա ցույճ բառից, ինչը, ըստ վանդողության, սովորություն ունեին հազնիկ ճգնալյաց կյանքով ապրող սուֆիները: Սուֆիականության կրոնափիլիսոփայության հիմքում ընկած է աստվածային հայտնությունը ճանաչելու և նրա հետ մերձենալու գաղափարը՝ հուզավատության (էրասաֆի) միջոցով:

<sup>5</sup> Իբրադան ներառում է աստվածային պատվիրանների անվերապահ կատարում: Դրանց մեջ առանձնանում են պարտադիրները: Մուսուլմանն իր երկրային կյանքում պարտավոր է կատարել իսլամի կամ հավատքի ինչպե՞ս հիմնասյուններով (աքթան ադ-դին) ամբարձրված դրույթները՝ շահադան (միաստվածության թաուհիդի և Աստծո մարգարեի Մուհամեդի մասին վկայությունը), հիկաեզեզամա աղոթքը (սալաթ կամ նամազ), ողորմածությունը (զաքաթ), ծոմը՝ սում (յուրաքանչյուր տարի Ռամադան ամսին) և կանխում անվազել մեկ անգամ ուխտագնացությունը Մեքքա (հաջ):

<sup>6</sup> Mapping the Global Muslim Population. Countries with More Than 100,000 Shia Muslims. Pew Research Center (2009).

<sup>7</sup> Azerbaijan: International Religious Freedom Report. Bureau of Democracy, Human Rights, and Labor of the U.S. Department of State (2006).

պաշտոնական տվյալների համաձայն՝ շիաները մուսուլման բնակչության 85 տոկոսն են, սուննիները՝ 15<sup>1</sup>: Ադրբեջանում սուննիներն առավելապես բնակվում են երկրի հյուսիսային և արևմտյան, իսկ շիաները՝ կենտրոնական, հարավային և արևելյան շրջաններում, այդ թվում՝ մայրաքաղաք Բաքվում: ԽՍՀՄ փլուզումից հետո այստեղ տարածում գտան նաև Ադրբեջանի համար նոր կրոնական ուղղություններ, ինչպես, օրինակ, սալաֆիականությունն ու գյուլենականությունը<sup>2</sup>:

Ադրբեջանի շիաները տասներկուական-իմամականներ են՝ ջաֆարիական մազհաբի հետևորդներ<sup>3</sup>: Սուննիներն առավելապես հանաֆիական<sup>4</sup> և շաֆիայական<sup>5</sup>, իսկ սուննի-սալաֆիները՝ հանբալիական<sup>6</sup>, մազհաբների հետևորդներ են: Ադրբեջանը շիա բնակչության թվով երկրորդ տեղն է զբաղեցնում Իրանի Բալամական Հանրապետությունից (ԻԻՀ) հետո: Շիայադավան<sup>7</sup> է երկրի բնակչության մեծամասնությունը՝ ադրբեջանցիները, որոնք

<sup>1</sup> General Information about Religion in Azerbaijan. Administrative Department of the President of the Republic of Azerbaijan. Presidential Library, <http://files.preslib.az>, p. 2:

<sup>2</sup> Կրոնական այս երկու ուղղությունների մասին տե՛ս Խաչոբրդիվ:

<sup>3</sup> Շիա մուսուլմանների ծանրակշիռ մասը տասներկուականներ (սունաաշարիտուն) են, ովքեր ճանաչում են միայն 12 իմամների օրինականությունը (որոնք Իմամ Ալիի ժառանգներն են): Վերջին 12-րդ իմամը՝ Մուհամեդ իբն Հասան Ալ-Մահդիև, ըստ ավանդության, անհետացել է 873-874թթ. քնթացքում, փոքր տարիքում: Հայտնի է թաքնված իմամ անունով, որի վերադարձին շիաները սպասում են որպես Մահդի (մեսիա): Ջաֆարիականությունը շիա իսլամի կրոնաիրավական դպրոցն է, որի հիմնադիրն աստվածաբան և իրավագետ Իմամ Ջաֆար Ալ-Մադիևն (702-765թթ.) է: <sup>4</sup> Հանաֆիական մազհաբի հիմնադիրը նշանավոր աստվածաբան և իրավագետ Իմամ Աբու Հանիֆան (699-767թթ.) է:

<sup>5</sup> Շաֆիայական մազհաբի հիմնադիրը նշանավոր աստվածաբան և իրավագետ Իմամ Աբու Աբդուլլահ Մուհամեդ իբն Իբրիմ Աշ-Շաֆիային (767-820թթ.) է:

<sup>6</sup> Հանբալիական մազհաբի հիմնադիրը նշանավոր աստվածաբան և իրավագետ Իմամ Ահմադ իբն Հանբալն (780-855) է:

<sup>7</sup> Մեզանում շիայադավան եզրի օգտագործումն ավելի նպաստակա հարմար է, քանի որ արտացոլում է արաբերեն շիա (Shi' ah) բառի ճիշտ տարադարձույթը:

թյուրքախոս շիա մուսուլմաններ են: Ադրբեջանի տեղաբնիկների մի մասը՝ իրանալեզու և իրանական ծագում ունեցող մուսուլմանները (թալիշները, թաթերը՝ կովկասյան պարսիկները և այլն), շիայադավան են, մյուս մասը (կովկասալեզու ու կովկասյան ծագում ունեցող լեզգիները, ցախուրները, ավարները, թաբասարանցիները, ռուտուլները, ագուլները, վրացական ծագմամբ ինգիլուները, շահադաղցիները) սուննիադավան է: Ադրբեջանի քրդերը հիմնականում շիայադավան են: Ընդհանրապես, Ադրբեջանի ոչ թյուրքական ծագում ունեցող տեղաբնիկները թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային շրջանում ենթարկվել են տարաբնույթ ճնշումների, ինչը պատճառ է դարձել վերջիններիս լեզվական և ազգային-էթնիկական զգալի ուժացմանը:

Ադրբեջանում խորհրդային Ժամանակաշրջանում կրոնի նկատմամբ տեսական բռնաճնշումների պատճառով իսլամը լուսանցքային էր: Նշվում էին միայն հաստուկենտ կրոնական ծեսեր: Այս երևույթը բնորոշ էր խորհրդային այլ հանրապետությունների ևս: ԽՍՀՄ փլուզումից հետո, ազգային արժեքների հետ, մեկտեղ վերաթմբորվեցին նաև կրոնական իրողությունները: Իսլամական վերածնունդն Ադրբեջանում տեղի ունեցավ թե՛ արտաքին, թե՛ ներքին կրոնական ազդեցությունների հետևանքով:

Նևտխորհրդային շրջանում աշխարհիկությունն ամրագրվեց Սահմանադրությամբ: Սահմանվեց խղճի և դավանանքի ազատություն: Ադրբեջանի իշխանությունները որոշակի տեղ հատկացրին իսլամին: Պետությունը միջոցներ ներդրեց իսլամի զարգացման, այդ թվում մզկիթաշինության ոլորտում: Ադրբեջանում ստեղծվեցին կրոնական հասարակական նշանակություն ունեցող մի շարք կազմակերպություններ, ավելացան հե-

տագոտություններն Ադրբեջանում իսլամի պատմության և դե-  
րակատարության վերաբերյալ:

Հետխորհրդային տարիներին Ադրբեջանն անմասն չմնաց  
իսլամական մի շարք երկրների կրոնաքաղաքական ազդեցու-  
թյուններից և իսլամի տարաբնույթ ուղղությունների ու մեկնաբա-  
նությունների արմատավորումից, որի արդյունքում պետությունը  
սկսեց խստորեն վերահսկել ազգային անվտանգությանն իսլամից  
սպառնացող թե՛ ներքին և թե՛ արտաքին մարտահրավերները:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանի իշխանությունները կա-  
րողացան շահեկանորեն օգտագործել իսլամական գործոնն ար-  
տաքին քաղաքականության մեջ, որի ապացույցն այդ երկրի  
ակտիվ գործունեությունն էր իսլամական աշխարհի բարձրա-  
գույն քաղաքական մարմնում՝ Իսլամական համագործակցու-  
թյուն կազմակերպությունում (ԻՀԿ, 1969-ից մինչև 2011-ը՝ Իսլա-  
մական կոնֆերանս կազմակերպություն), որի նստավայր-գրա-  
սենյակը Ջիդդայում է (Սաուդյան Արաբիա): Իսլամական աշ-  
խարհի կամ Ումմայի՝ անբակտելի մաս հանդես գալու Ադրբե-

<sup>1</sup> Ումմայի գաղափարը ձևավորվել է վաղ իսլամի շրջանում և եկատի է առնում  
ասոցիան մուսուլմանական համայնքը, որը նաև իսլամական պետության նշանա-  
կություն ուներ: Իսլամի պատմության բոլոր փուլերում Ումմայի գաղափարն  
իսլավականացվել է, քանի որ այն, ըստ իսլամի, ղեկավարում էր Մուհամեդ մար-  
գարեն Աստուց ստացած պատվիրաններով, այսինքն՝ աստվածային ծագում  
ունեցող օրենքներով: Մուհամեդ մարգարեն մահվանից հետո կապեց Աստուդ հետ  
ընդհատվեց: Ումմայի ժամանակակից ընկալումն ամրագրված է Իսլամական  
համագործակցություն կազմակերպության 1981թ. Մեքքայի գագաթաժողովի  
ամփոփիչ հռչակագրում: Ըստ այդմ Ումման իսլամական ազգի գաղափարն է՝  
անկախ նրա անդամների լեզվական, ռասայական, սոցիալական, աշխարհագրա-  
կան և այլնայ պատկանելություններից: Ըստ այդմ իսլամական Ումմայի  
անդամներին միավորում է նույն հավատքը, նրանք շարժվում են նույն  
ուղղությամբ, ունեն մշակութային միասնական ժառանգություն, աշխարհում  
ունեն նույն առաքելությունը: Shi u The Mecca Declaration, The Islamic Summit Con-  
ference, Six Issue, Revised Edition, Kuwait, p. 47.

ջանի ձգտումները նաև նպատակ ունեին իսլամական աշխար-  
հի միջոցով ճնշումներ գործադրել Ադրբեջանից անկախացած  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության<sup>1</sup>, ինչպես նաև Հայաս-  
տանի նկատմամբ:

«Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան» աշխատանքը  
մի փորձ է՝ ընդհանուր գծերով քննարկելու ժամանակակից Ադր-  
բեջանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ իսլամին  
աննչվող խնդիրները<sup>2</sup>: Հետազոտության մեջ ուրվագծվել են իսլա-  
մի դերակատարությունն Ադրբեջանի հասարակական, քաղաքա-  
կան և սոցիալական կյանքում, «ադրբեջանական իսլամի»  
առանձնահատկությունները, Ադրբեջանում արտաքին իսլամա-  
կան ազդեցությունները, հատկապես թուրքական, իրանական և  
արաբական, ինչպես նաև Ադրբեջանի արտաքին իսլամական  
քաղաքականությունը: Անդրադարձ է կատարվել նաև «ցարական  
իսլամի» և «խորհրդային իսլամի» առանձնահատկություններին:

Առանց իսլամական գործոնի ուսումնասիրության ան-  
հնար է համապարփակ պատկերացում կազմել Ադրբեջանի  
գարգացման առանձնահատկությունների, պետության գար-

<sup>1</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ, բայց չճանաչված պետու-  
թյուն է: Հռչակել է իր անկախությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին: 1991թ. դեկտեմ-  
բերի 10-ին Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մար-  
զում (ԼՂԻՄ) անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Երջանի հայ ազգա-  
բնակչությունը միասնական ձևով (99,8 տոկոս) կողմ քվեարկեց անկախությանը:  
Քվեարկության նման բարձր ցուցանիշը պայմանավորված էր այն հանգամանքով,  
որ ԼՂԻՄ ադրբեջանական համայնքը բոլորտեղ հանրաքվե:

<sup>2</sup> Իսլամին աննչվող եզրերը լուսաբանելու համար հիմք են ծառայել Петрушев-  
ский, Илья (1966), Ислам в Иране в VII—XV веках (курс лекций), Отв. редактор  
В.И. Беляев. — Л.: Издательство Ленинградского университета; Ислам. Энциклопедический словарь, М., Наука, 1991, Институт Востоковедения Академии наук  
СССР; Hiro, Dilip (2003), The Essential Middle East. A Comprehensive Guide, Car-  
roll&Graf Publishers New York.

զացման հեռանկարի, ինչպես նաև միջազգային իսլամական շրջանակներում Ղարաբաղյան հակամարտության<sup>1</sup> վերաբերյալ Ադրբեջանի քարոզչական դրսևորումների ու խնդրի վերաբերյալ ԻՀԿ ադրբեջանամետ դիրքորոշման մասին:

Ժամանակագրական առումով աշխատանքը հիմնականում ընդգրկում է 19-րդ դ. երկրորդ կեսից (որը համընկնում է Արևելյան Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրապետության շրջանին) մինչև Ադրբեջանի Հանրապետության նախագահ Էլհամ Ալիևի նախագահության երկրորդ շրջանի ավարտն ընկած ժամանակահատվածը (2013թ.):

<sup>1</sup> Ղարաբաղյան հակամարտությունը ձևավորվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի շուրջ ծագած հակասության պատճառով, որը վերաճեց Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) և Ադրբեջանի միջև պատերազմի (1991-1994թթ.): Ռազմական գործողությունների սկզբնական փուլում ադրբեջանցիները հայերին դուրս մղեցին նախկին Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանից և Լեռնային Ղարաբաղի մի մասից: Լեռնային Ղարաբաղին Հայաստանի ցուցաբերած ռազմական աջակցության շնորհիվ հնարավոր դարձավ վերահսկողություն հաստատել նախկին ԼՂԻՄ տարածքի շուրջ գտնվող Ադրբեջանի մի շարք շրջանների վրա՝ ապահովելով Արցախի անվտանգությունը: Արդյունքում՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ընդունեց չորս բանաձև՝ հայկական ուժերի գործողությունները բնորոշելով որպես օկուպացիա: Հակամարտության ռազմական փուլն ավարտվեց 1994թ. մայիսին Հայաստանի, Ադրբեջանի, ԼՂ և Ռուսաստանի ներկայացուցիչների միջև Բիշքեկում կնքված անժամկետ զինադադարով: ԵԱՀԿ Մինսկի խմբի (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) միջնորդությամբ սկիզբ առած խաղաղ բանակցային գործընթացում հակամարտող կողմերին Ադրբեջանին և Լեռնային Ղարաբաղի անուանից հանդես եկող Հայաստանին, չի հաջողվել հաշտության եզրեր գտնել: Ջինևա դադարը հանձնակալի ուղեկցվում է խախտումներով, որոնք երկու կողմից բազմաթիվ գոհեր են խլել: Ղարաբաղյան հակամարտության մասին տե՛ս՝ Օրանջեյ. Ին-կոլայ (1997) Карабахский конфликт: Этапы, подходы, варианты решения, Ереван.

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ  
ԻՍԼԱՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԻԳԶԱԳՆԵՐՈՒՄ  
(XIX-XX ԴԴ.)

*Իսլամն Արևելյան Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրապետության շրջանում*

1804-1813թթ.<sup>1</sup> և 1826-1828թթ.<sup>2</sup> ռուս-պարսկական պատերազմների արդյունքում Ռուսական կայսրությունն իրեն ենթարկեց ողջ Այսրկովկասը: Արաքս գետով զծվեցին Իրանի և Ռուսաստանի սահմանները: Ամրագրվեց Ռուսական կայսրության վերջնական հաղթանակը տարածաշրջանում: Ռուսական իշխանությունները հետամուտ էին այսրկովկասյան տարածաշրջանում բնակչության սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպմանը, այդ թվում՝ մուսուլմանաբնակ շրջանները կայսրության վարչաիրավական կառավարման ընդհանուր համակարգի մեջ ներգրավելու խնդրին:

<sup>1</sup> 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով: Ըստ այդմ՝ Ռուսաստանին անցավ Իրանի հյսաստակության տակ գտնվող կովկասյան տարածքների մեծ մասը՝ Դաղստանը, Վրաստանը՝ Շորաքալի շրջանով, Իմերեթիան, Գուրիան, Մենգրելիան, Աբխազիան, ինչպես նաև Ղարաբաղի, Գանձակի, Շեքի, Շիրվանի, Դերբենդի, Արաքսի, Բաքվի և Թալիշի խանությունները, Արևելյան Հայաստանի Լոռիի, Շամշադինի, Զանգեզուրի գավառները, բացառությամբ Լախիջանի և Երևանի խանությունների: 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրով, որով Ռուսաստանի տիրապետությունը հաստատվեց ոչ միայն նախկինում գրավված տարածքների վրա, այլև նրան անցան նաև Երևանի և Լախիջանի պարսկական խանությունները:

1872թ. ապրիլի 5-ին երկարատև մշակումներից հետո ցարի հրամանով Թիֆլիսում ստեղծվեցին այսրկովկասյան երկու հոգևոր-կրոնական վարչություններ՝ սուննիների և շիաների գործերը վարելու համար, որոնք փաստացիորեն դարձան «պաշտոնական իսլամը» ներկայացնող կառույցներ՝ ըստ էության ինստիտուցիոնալացնելով «ցարական իսլամը»<sup>1</sup>: Դրանք բացվեցին 1873թ. հունվարի 2-ին: Վարչությունների իրավասությունը տարբեր ժամանակներում տարածվել է Թիֆլիսի, Բաքվի, Ելիզավետպոլի (Գյանջա), Երևանի և Քութայսի նահանգներում, նաև՝ Բաթումի, Դաղստանի, Կարսի մարզերում, Ջարթաթալայի և Սուխումի շրջաններում: Շիայական և սուննիական վարչությունները ղեկավարում էին հոգևոր-կրոնական առաջնորդներ շեյխ ուլ-իսլամը (Şeyxülislam) և մուֆթին (Müftü), որոնք նշանակվում էին ցարի հրամանով, Կովկասի փոխարքայի առաջարկությամբ: Վարչությունների ներսում երեք աստիճանակարգ գոյություն ուներ: Ամենաստորին կարգում քաղաքներում, ցյուղերում և այլ բնակավայրերում գործող մզկիթների (mescidi) կրոնական սպասավորներն էին (մուլլաներ, ախունդներ, իմամներ և այլն), որոնք ղեկավարում էին կրոնական ծեսերն ու ծիսակարգերը, վարում կրոնական միախաղթարանների՝ մաթթաբների (mektəb) գործերը: Նրանք ընտրվում էին համայնքի կողմից: Հաջորդ կարգում աստվածաբան դատավոր-կադիներն (qazi) էին, որոնք վերահսկում էին կրոնական սպասավորների գործունեությունը, ինչպես նաև վարում շա-

<sup>1</sup>Նախքան վարչությունները 1823թ. ռուսական իշխանությունը Մուհամեդ Ալի Հուսեյնզադեին Թիֆլիսում նշանակեց շեյխ ուլ-իսլամ՝ Կովկասի շիա մուսուլմանների հոգևոր առաջնորդ, ով պաշտոնավարեց մինչև 1846թ.:

րիաթական՝ գործերը (ամուսնություն, ժառանգություն, ապահարգան, ունեցվածքի բաշխում, ինսամակալություն և այլն): Եվ վերջապես, ամենաբարձր կարգում նահանգների մեջլիսներն (ժողովներ) (mæclis) էին, որոնց անդամակցում էին բարձրաստիճան մուսուլման հոգևորականներ: Մեջլիսները վերահսկում էին թե՛ մզկիթների սպասավորներին, թե՛ կադիներին: Վերջիններիս գործունեության դեմ դժգոհությունները բողոքարկվում էին մեջլիսներում, իսկ դրանից հետո որպես վճարելի ատյան էին հանդես գալիս Կովկասյան փոխարքայության կենտրոնում՝ Թիֆլիսում գործող հոգևոր վարչությունները: Վերջիններս սնօրինում էին իսլամական ունեցվածք համարվող վակֆային տնտեսությունները (vakıf), դպրոցները, իրականացնում էին իսլամական ոլորտի կադրային քաղաքականությունը<sup>2</sup>:

Կայսերական այս նոր համակարգը հնարավորություն էր տալիս ռուսական իշխանություններին լիովին վերահսկել Այսր-

<sup>1</sup>Շարիաթը (արաբերեն՝ ճշմարիտ, ճիշտ ուղի) աստվածային ծագում ունեցող օրենքների ժողովածուն է, որը հիմնված է իսլամի սուրբ գրքի՝ Կուրանի և սուննայի վրա: Շարիաթը կարգավորում է մուսուլմանական համայնքի սոցիալական, իրավական և տնտեսական կողմերը, սահմանում հավատացյալի կյանքի բարոյական և էթիկական չափորոշիչները, վարքաբանությունը, ընդունելի և անընդունելի սահմանները: Համարվում է, որ կրոնական օրենքները ստեղծվել են Ալլահի կողմից և փոխանցվել մարդկանց Մուհամեդ մարգարեի միջոցով պարտադիր կերպով կիրառվելու նպատակով: Արդի շրջանում շարիաթը իսլամական մի շարք երկրներում ծառայում է որպես հիմնական օրենք, իսկ որոշ այլ երկրներում օրենսդրության աղբյուր է:

<sup>2</sup>Մանրամասն տե՛ս Կարգավորումները և Դуховные правления мусульман Закавказья в Российской империи. XIX - начало XX в. Сост., автор предисл. и примеч. А.Ганич., Москва, 2013 г., 496 с., նաև՝ Ганич, Анастасия (2009) «Поучение» Закавказского Муфтия и Председателя Закавказского Мусульманского Духовного Правления Суинитского учения (1892г.). Актуальные проблемы истории и этнографии народов Кавказа. Сборник статей к 60-летию В.Х. Кажарова. Нальчик: Институт гуманитарных исследований КБНЦ РАН, 2009, с. 328-346.

կովկասի մուսուլման հպատակներին, ընդհանրապես՝ իսլամական դաշտը, հոգևոր վերահիսալվին և հոգևորականությանն առհասարակ: Ռուսական իշխանությունները ձգտում էին չեզոքացնել նաև թուրքական և պարսկական ազդեցությունները: Վարչությունները ֆինանսավորվում էին ցարական իշխանությունների կողմից: Վարչությունների ստեղծման արդյունքում կրոնական գործիչները դարձան պետական պաշտոնյաներ, որոնց գործողությունները, ընդհանուր առմամբ, վերահսկվում էին: Համակարգից դուրս մղվեցին այլախոհ հոգևորականներն ու «պաշտոնական իսլամից» դուրս գործող տարաբնույթ, այդ թվում սուֆիական, կրոնական հեղինակությունները: Տեղերում հիմնականում առաջ էին քաշվում վստահելի հոգևորականներ<sup>1</sup>:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական հակասություններն Արևելյան Այսրկովկասում ողջ 19-րդ դարում ի հայտ բերեցին կնճռոտ խնդիրներ ոչ միայն քաղաքական, այլև միջդավանական հարաբերություններում և կրոնական ոլորտում: Հատկանշական է, որ 1828-1829թթ., 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմների, ինչպես նաև 1853-1856թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ շիա հոգևորականությունը հիմնականում Ռուսական կայսրության կողմից էր: Բազմաթիվ շիա մուսուլմաններ կովում էին ռուսական բանակում Օսմանյան կայսրության դեմ<sup>2</sup>, ինչը, բնականաբար, առաջ էր բերում սուննիների դժգոհությունը:

Հարկ է նկատել, որ շիաներն իրենց նույնականացնում էին իրանական աշխարհին, ինչը բացատրվում է Իրանի հետ ունեցած պատմական, լեզվամշակութային և կրոնական ընդհան-

<sup>1</sup> Տե՛ս Աբասով, Ալի (2001).

<sup>2</sup> Светоховский, Тадеуш (2004), с. 9.

րություններով: Ռուսական կայսրության տիրապետության շրջանում Արևելյան Այսրկովկասում դեպի Օսմանյան կայսրությունը կողմնորոշված սուննիների թիվն աստիճանաբար նվազեց: Ռուսական տիրապետությունից դժգոհ՝ նրանց մի մասն արտագաղթեց Օսմանյան կայսրություն: 1830-ականների տվյալներով՝ սուննիները շիաների նկատմամբ առավելություն ունեին: Նրանք հիմնականում բնակվում էին ժամանակակից Ադրբեջանի հյուսիսային և արևմտյան շրջաններում, ունեին դադստանյան և լեզգիական ծագում: Արդեն 1860թ. սուննիները մուսուլման բնակչության մեկ երրորդն էին<sup>3</sup>:


Ռուսական տիրապետության շրջանում Արևելյան Այսրկովկասում մեծ վնաս հասցվեց դասական իսլամական ինստիտուտներին, այդ թվում՝ շարիաթական դատարաններին: Մինչև խորհրդայնացումն Ադրբեջանում գործել են շարիաթական դատարանների ընդամենը 23 շիա և 16 սուննի կադիներ, որոնք միայն սահմանափակ գործեր կարող էին վարել<sup>4</sup>՝ հիմնականում ընտանեկան օրենսգրքին առնչվող:

Ռուսական իշխանությունները կայսրությանը միակցված շրջանները (այդ թվում՝ այսրկովկասյան) ցանկանում էին ռուսականացնել և դարձնել վերահսկելի: Ռուսականացման գործընթացն ուղեկցվում էր բարենորոգչական շարժումների, աշխարհիկ լուսավորչական գաղափարների ներդրմամբ և իսլամի մարգինալացմամբ: Ասվածի ապացույցն է կայսրության իսլամադավան շրջաններում (Վոլգայի և Ղրիմի շրջաններում ապրող թաթարների և թուրքական ծագում ունեցող այլ իսլամա-

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>4</sup> Տե՛ս Աբասով, Ալի (2001).

5029



բնակ շրջաններում, այդ թվում՝ Կենտրոնական Ասիայում՝ ջաղիդականության՝ տարածումը<sup>2</sup>: Ջաղիդականությունը սկիզբ առավ 19-րդ դարի վերջին և զգալի տարածում ստացավ 20-րդ դարի սկզբներին: Այն հասարակական-քաղաքական շարժում էր, որն էականորեն ազդվեց ռուսական իրականության մեջ տարածում ստացած եվրոպական ազատական գաղափարներից: Շարժումը նպատակ ուներ բարեփոխել թյուրքախոս մուսուլմանների հասարակական, քաղաքական և սոցիալական կյանքը՝ առաջին հերթին արդիականացնելով և զարգացնելով կրթության համակարգն ու թուրքերեն լեզուն, նպաստելով կայսրության մեջ թյուրքախոս ժողովուրդների համախմբմանն առաջադեմ գաղափարների ներքո: Ջաղիդականները համոզված էին, որ իսլամը համահունչ է արդիականությանը, այդ իսկ պատճառով առաջ էին քաշում իսլամը նոր լույսի ներքո քննարկելու գաղափարը: Ամեն պարագայում, շիա մուսուլմանների շրջանում ջաղիդականության ազդեցությունն ավելի նվազ էր, ինչը պայմանավորված էր շիա իսլամում ազատ դատողությունների (իջթիհադ) ինստիտուտի գոյությամբ<sup>3</sup>:

19-րդ դարի կեսերից Այսրկովկասում լուսավորչական գաղափարներով սկսեց հանդես գալ մուսուլման մտավորականների մի շերտ, հիմնականում ռուսական կրթությունն ստացած

<sup>1</sup> Ջաղիդականությունը ծագում է արաբերեն ջաղիդ՝ նոր, նորարարություն բառից: Այս ուղղությունը՝ ուսուլ ալ-ջաղիդ (նոր մեթոդաբանություն), հակադրում էր ավանդական, պահպանողական ուսուլ ալ-կադիմի (հին մեթոդաբանություն): Ռուսական կայսրությունում ջաղիդականության հիմնադիր է համարվում Ղրիմի քաղաք Իմամիլ Գասպրինսկին, ով 1983-ից սկսեց հրատարակել բարենորոգչական ուղղվածությամբ «Թերջիման» (բառացի՝ թարգմանիչ) թերթը:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Գանեսու, Вуктор (2001), с. 358-401.

<sup>3</sup> Goyushov, Altay (2008), p. 67.

ատրպատականցիներ, ովքեր շատ դեպքերում սերում էին կրոնական ընտանիքներից: Նշենք, որ այս փուլում տարբեր շրջաններից, այդ թվում Իրանից և մասնավորապես Ատրպատականից մեծ հոսք կար դեպի Այսրկովկաս, որտեղ գալիս էին հիմնականում աշխատելու, կրթություն ստանալու, ինչպես նաև քաղաքական գործունեություն ծավալելու նպատակով:

Լուսավորչական գաղափարներով հանդես եկող մտավորականներից էր նշանավոր հասարակական գործիչ, մատերիալիստ փիլիսոփա, պարսկալեզու, ռուսալեզու և թյուրքալեզու գրող Միրզա Ֆաթհալի Ախունդզադեն (Ախունդով, 1812-1878թթ.), որը ծնվել էր իրանական Շեքիում նախքան Ռուսական կայսրության կողմից Այսրկովկասի նվաճումը: Համարվում է աղբրեջաներեն գրական լեզվի և աղբրեջանական ինքնության հիմնադիրներից մեկը: Իրանում Ախունդզադեն ճանաչված է որպես իրանական լուսավորչականության ամենահանգուցային գաղափարախոսներից մեկը: Եղել է մուսուլմանական միջավայրում աշխարհիկ կրթության ջերմեռանդ պաշտպան<sup>4</sup>:

1850-1855թթ. Ախունդզադեն առաջին անգամ եվրոպական ոճի երգիծական պիեսներ է գրել թուրքերենի տեղական խոսվածքով: Երգիծանքի միջոցով փորձել է քննադատել ժամանակակից Աղբրեջանում այդ տարիների շատուշատ սոցիալական ու հասարակական խնդիրներ՝ կապված կրոնական անահավատության և տգիտության հետ<sup>5</sup>:

19-րդ դարի վերջին քառորդում Արևելյան Այսրկովկասում հասարակական-քաղաքական շրջանակներում զարգացում

<sup>4</sup> Shaffer, Brenda (2002), pp. 25-27.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 25-26:

ստացան բանավեճերը սոցիալական, այդ թվում՝ կրոնական խնդիրների շուրջ, որոնք արտացոլվեցին ժամանակի նորաստեղծ մամուլում: Հատկանշական է, որ աշխարհիկ տրամադրություններ արտահայտող «Էկիչի» թերթը (1874-1877)<sup>1</sup> և «Մոլլա Նասրեդդին» ամսագիրն<sup>2</sup> իրենց էջերում սուր քննադատություն էին հնչեցնում Աշուրայի<sup>3</sup> և մուսուլմանական ծիսակարգերի ավանդական գործառնան դեմ՝ անդրադառնալով նաև սուննիների ու շիաների հարաբերություններին ու նրանց հիմնախնդիրներին<sup>4</sup>:

<sup>1</sup> «Էկիչի» (Əkinçi) (թարգմանաբար՝ մշակ) Ռուսական կայսրությունում տպված առաջին թուրքալեզու թերթն է (1875-1877թթ.): Հիմնադիրը Մոսկվայի համալսարանի ջրբանակարտ, լրագրող, ուսուցիչ և գիտնական Ջարդաթին (Հասան բեկ Մեխրով) էր: Առաջին համարը լույս է տեսել հունիսի 22-ին: Դրանում տպված հոդվածների մի մասը նվիրված է եղել գյուղատնտեսությանը, սոցիալական, հասարակական և այլ խնդիրների: 1877թ. «Էկիչի» փակվել է Ռուսական կայսրության կողմից ուսուցիչական պատերազմի ժամանակ ելնելով թուրքերեն հրատարակություններ ունենալու անպատակամարտությունից:

<sup>2</sup> Molla Nəsrəddin-ը երգիծական ամսագիր էր, որի հիմնադիրն ասրալատականից լուսավորչական գործիչ, գրող, լրագրող Ջամիլ Մանեգոլյաղալն էր: Հիմնվել է 1906թ. Թիֆլիսում, որտեղ հրատարակվել է մինչև 1914թ.: Դրանից հետո շարունակել է տպագրվել Թավրիզում (1921թ.) և մինչև 1922-1931թթ. Բաքվում: Հրատարակվել է մոտ 25 սուրի, տարբեր լեզուներով՝ արաբատա թուրքերենի Ադրբեջանի խոսվածքով, նաև պարսկերեն և ռուսերեն: Համարվում է ժամանակի առաջնորդ հրատարակություններից մեկը: Կրել է ջաղիչիզի գաղափարական ազդեցությունը:

<sup>3</sup> Աշուրան Իսմաիլ Հուսեյնի հիշատակումն օրն է: Հուսեյնը Մուհամեդ մարգարեի հորեղբոր որդու՝ չորրորդ «արդարադատ խալիֆա» և շիաների առաջին իմամ Ալի Իբն Աբի Տալիբի (656-661թթ.) ու մարգարեի դստեր Ֆաթիմայի երկրորդ զավակն էր: Հուսեյնը և բազմաթիվ շիա մուսուլմաններ նահատակվեցին 680թ. Քերբալայում (ներկայումս Իրանում) սուննիների Օմայան երկրորդ խալիֆա Ֆադլի իբն Մուավիայի (680-683թթ.) գործի հետ առճակատման արդյունքում: Աշվում է իսլամական ունալիսի օրացույցի առաջին՝ Մուհարրամ ամսի տասներորդ օրը: Հայտնի է նաև Շահսեյ-Վախսեյ (şahsey-vaxsey) անունով: Այդ օրը կազմակերպում են բազմամարդ թափօրներ, որի մասնակիցները հարվածում են իրենց կրծքին և քստաբանակցված միջոցառման թազիլեի (taziye) շրջանակներում բարձրաձայն ողբում Հուսեյնի նահատակությունը փաստելով, որ պատրաստ են իրենց կյանքը գոհարելու հանուն իսլամի: Մոլեկերն շիաների իրականացում են իրական առեցածես ձաղկելով իրենց շրջաններով կամ սուր գործիքներով, վերաբերվելով նահատակվածների չարարանները:

<sup>4</sup> Балджи, Байрам (2006), с. 75.

«Էկիչին», որ ժամանակակից Ադրբեջանի տարածքում արաբատա, թուրքերենի տեղական խոսվածքով տպված առաջին թերթն էր, իր խմբագրականներից մեկում, քննարկելով երկրամասի միջոգավանական խնդիրները, նշում է. «Մեր մեջ միասնություն չկա, և մեզ ոչինչ չի միավորում: Կռվկասում ապրող մուսուլմանների մի մասը շիաներ են, մյուս մասը՝ սուննիներ: Սուննիները չեն դադարում ատել շիաներին, շիաները՝ սուննիներին: Նրանք միմյանց լսել չեն ուզում»<sup>1</sup>:

1905-1907թթ. ռուսական հեղափոխության<sup>2</sup> ազդեցությամբ Այսրկովկասում ձևավորվեցին բազմաթիվ հեղափոխական օջախներ, որտեղ սկսեցին գործել տարբեր գաղտնի կազմակերպություններ՝ թե՛ ազգային, թե՛ անդրազգային ուղղվածությամբ: Պատմական այս բարդ ու հակասական ժամանակաշրջանում Այսրկովկասը համակված էր սոցիալիստական և ազգային-լիբերալ գաղափարներով, որոնք պարարտ հող էին գտնում նաև Բաքվում, որն այդ տարիներին նավթարդյունաբերության կարևորագույն կենտրոն էր: Ջուգահեռաբար, հասարակական-քաղաքական գործընթացներում իսլամական գործոնը որոշ չափով

<sup>1</sup> Светоховский, Тадеуш (2004), с. 10.

<sup>2</sup> 1905թ. հունվարին Մանկու Պետերբուրգում «Կարմիր կիրակի» հայտնի դեպքերից հետո, երբ ցարական զորք կրակեց Գապոն քանանայի կազմակերպած բանվորների խաղաղ ցույցի մասնակիցների վրա, երկրում սկիզբ առավ սոցիալ-քաղաքական հուզումների հզոր ալիք: Արդյունքում՝ Նիկոլայ II կայսրը (1894-1917թթ.) հրապարակեց 1905թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որով մի շարք ազատություններ շնորհվեցին քաղաքացիներին: Մահմանվեցին անձի անձևոսմիսելություն, խոսքի, խղճի, հավատների ազատություն և այլն: Ստեղծվեց խորհրդարան (Պետական դումա): 1906թ. ընդունվեց Մահմանադրությունը: Ռուսական կայսրությունը դարձավ ամենամոդարակ միապետություն: Նիկոլայ Երկրորդ պահպանեց իր իշխանությունը: 1905թ. դեպքերը հայտնի են առաջին ռուսական հեղափոխություն անունով:

շարունակեց պահպանել իր նշանակությունը: Ասվածի ապացույցը Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Բարվի մասնաճյուղն էր՝ 1904թ. ստեղծված «Հյուսիսային» (Северный)<sup>1</sup>: Այն ներկայացվում էր որպես մուսուլմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն նաև մուսուլման բանվորներին ներգրավելու համար: Կառույցի հիմնադիրներից մեկը՝ Մամեդ Էմին Ռասուլզադեն, համոզված էր, որ այնպիսի ընդհանրական գաղափարներ, ինչպես դեմոկրատիան և սոցիալ-դեմոկրատիան են, չեն հակասում իսլամին: «Ինչ խմբում էլ որ լինենք, կարևորը՝ հենվենք իսլամի վրա», քանի որ «իսլամը համամարդկային է»<sup>2</sup>:

1905թ. Ռուսական կայսրությունում ստեղծվեց լիբերալ-իսլամական ուղղվածությամբ «Մուսուլմանների միությունը» («Իթթիֆակ ալ-մուսլիմին»), որի ամենակտիվ գործիչներից մեկը 1918-1920թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱՀՀ) պետական գործիչ Ալի Մարգան Թոփչիբաշևն (1862-1934թթ.) էր: Կառույցն առաջ էր քաշում Ցարական Ռուսաստանի մուսուլմաններին մի շարժման մեջ միավորելու, մուսուլմանների կրթության և մշակույթի զարգացման, կայսրության մեջ մուսուլմաններին համահավասար իրավունքներ շնորհելու գաղափարներ: «Իթթիֆակը» գոյատևեց ընդամենը երկու տարի և դադարեց գոյություն ունենալ 1907-ին<sup>3</sup>:

Միաժամանակ, հեղափոխական խմորումներ էին ընթանում նաև հարևան Իրանում և Օսմանյան կայսրությունում:

1906թ. Իրանում տեղի ունեցավ սահմանադրական հեղափոխություն: Այստեղ սկսված հեղափոխական գործընթացները շարունակվեցին մինչև 1911թ.<sup>4</sup>: 1908թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցավ երիտթուրքական հեղափոխությունը<sup>5</sup>:

Թե՛ ռուսական, թե՛ իրանական և թե՛ թուրքական հեղափոխություններն իրենց ազդեցությունն ունեցան Արևելյան Այսրկովկասում: Այս երկրամասի հետ կապ ունեցող բազմաթիվ մուսուլմաններ որևէ ձևով առնչվել են այդ գործընթացներին, որոնք հետագայում նպաստեցին Ադրբեջան պետության կայացմանը: Օրինակ, «Իթթիֆակ վե քերաֆի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության հիմնադիրներից մեկն Ալի Բեյ Հուսեյն-

<sup>1</sup> 1905թ. ռուսական հեղափոխության ալիքը հասավ նաև Իրան: Հատկապես Ադրպատականը վերածվեց հեղափոխական գաղափարներով սոցոգրված վերագային ուժերի համագործակցության ճակատի, որի խնդիրներից էր նաև Իրանում ռուսական տիրապետության դեմ պայքարը: Ճիշտ է, հեղափոխությունը գաղափարական առումով մեծապես պարտասովել էր լիբերալ-բուրժուազիայի և մտավորականության կողմից, սակայն սկզբնական փուլում այն դեկադարեց շիա հոգևորականությունը՝ «իսլամի և շարիաթի վերածնունդ» կարգախոսի ներքո: Սահմանադրական հեղափոխության արդյունքում Իրանը բացարձակ միապետությունից վերածվեց սահմանադրական միապետության: Անդունվեց սահմանադրություն, ստեղծվեց խորհրդարան (մեշլիս): 1906թ. դեպքերը հայտնի են նաև բուրժուազեմոկրատական հեղափոխություն անունով: Լշված դեպքերի մասին տե՛ս Լավասարյան, Լազելի (2003), Ռուսաստանի քաղաքականությունը Իրանում (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), ատենախոսություն, Երևան, էջ 91-120:

<sup>2</sup> 1908թ. երիտթուրքական հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Իշխանության եկած «Իթթիֆակ վե քերաֆին» կամ երիտասարդ թուրքերն առաջ քաշեցին «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» հայտնի կարգախոսը՝ խոստանալով կայսրության ժողովուրդներին համահավասար իրավունքներ շնորհել և սոցիալ-քաղաքական բարեփոխումներ իրականացնել: Հեղաշրջման արդյունքում սուլթանի իշխանությունը սկսեց ձևական բնույթ կրել: Օսմանյան կայսրությունը դարձավ սահմանադրական միապետություն: 1908թ. տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Չնավորվեց օսմանյան առաջին խորհրդարանը:

<sup>1</sup> Годс, Махмуд Реза (1994), с. 51.

<sup>2</sup> Տե՛ս Աբասով, Ալի (2001).

<sup>3</sup> Shaffer, Brenda (2002), pp. 37-36.

գաղեն էր (1864-1940թթ.), որը ծնվել է Սայանում (ներկայումս՝ Ադրբեջանում), կրոնական գործիչների ընտանիքում: Հուսեյնգաղեն առաջ է քաշել «թյուրքականություն, իսլամականացում, եվրոպականացում» (Turklashtırmak, Islamlashtırmak, Avrupalashtırmak) կարգախոսը<sup>1</sup>: 1903թ. վերադարձել է Բաքու, որից հետո տարիներ անց օսմաներենով հրատարակել է ազատական-աշխարհիկ ուղղվածությամբ և թյուրքականության ոգով ներշնչված «Ֆուզուլյաթ» ամսագիրը: Հուսեյնգաղեն առաջարկում էր այդ շրջանում Ադրբեջանում հրատարակվող մամուլում օգտագործել օսմաներենի ձևափոխված՝ տեղական տարբերակը՝ պաշտպանելով այն թեզը, որ թե՛ օսմանյան թուրքերը և թե՛ թյուրքախոս շիա մուսուլմանները թուրք-օղուզներ են<sup>2</sup>:

1911թ. «Իթթիհադ վե թերաքիի» ազդեցությամբ ստեղծվեց «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցությունը: 1917թ. հոկտեմբերին Արևելյան Այսրկովկասում ստեղծված իսլամական «Իթթիհադ» («Միություն») կուսակցությունն առաջ էր քաշում Ռուսաստանի մուսուլմանների շրջանում շարիաթի ներդրման գաղափարը: «Իթթիհադի» կարգախոսներից էր՝ «Մեզ պետք չէ այլ կուսակցություն՝ իսլամից բացի»<sup>3</sup>:

1917թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո Թիֆլիսում հռչակվեցին այսրկովկասյան երեք հանրապետությունները:

Վրաստանից և Հայաստանից բացի՝ 1918թ. մայիսի 28-ին ստեղծվեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ադրբեջաներեն՝ Azərbaycan Xalq Cümhuriyyəti՝ Ադրբեջանի Ժողովրդական Հանրապետություն)<sup>4</sup>: «Մուսավաթը» դարձավ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իշխող ուժը, իսկ թյուրքականությունը՝ նորաստեղծ պետության իշխող գաղափարախոսությունը: Թուրքերենը հռչակվեց պետության պաշտոնական լեզու: Դպրոցներում Ռուսաստանի պատմության դասընթացը փոխարինվեց թյուրք ժողովուրդների պատմությամբ: Աշխարհիկությունը սկսեց ամրապնդել դիրքերը, իսկ շարիաթը՝ աստիճանաբար դուրս մղվել: Սկսվեց աշխարհիկ դատարանների կազմավորման գործընթացը: Քայլեր ձեռնարկվեցին՝ թուլացնելու Ռուսական կայսրության օրոք ստեղծված հոգևոր վարչությունների քաղաքական ազդեցությունը<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ իսլամը որոշակի տեղ էր զբաղեցնում «Մուսավաթի» գաղափարախոսության մեջ, որը սկզբնապես ուներ իսլամական բնույթ<sup>6</sup>: 1918-1920թթ. իսլամն Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ուղենիշներից մեկն էր թեկուզ ոչ առաջնային: Պետական գաղափարախոսության հիմքում ընկած էին թյուրքականությունը, արդիականությունը և իսլամը<sup>7</sup>: Նոր ձևավորված կառավարության կողմից շեյխ ուլ-իսլամ նշանակվեց Հաջի Աղա Ալիզադեն, ով խորհրդային շրջանում ևս տասը տարի եղել է հոգևոր առաջնորդ և համարվում է

<sup>1</sup> Կրթությունը ստացել է Թիֆլիսում, ապա սովորել Սանկտ Պետերբուրգի համալսարանում: Դեռևս 1890-ականների վերջին Ստամբուլի համալսարանի ռազմական բժշկության ֆակուլտետում սովորելու տարիներին Հուսեյնգաղեն գրել է «Թուրան» պոեմը, որտեղ թյուրք ժողովուրդներին միավորելու կոչ է արել: Տե՛ս Alstadt, Audrey (1992), p. 70-71.

<sup>2</sup> Shaffer, Brenda (2002), p. 33.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Абасов, Али (2001).

<sup>4</sup> ԱՂԷ-ի տարածաշրջանային քաղաքականության մասին տե՛ս Կելագյան, Դավիթ (2008):

<sup>5</sup> Goyushov, Altay (2008), pp. 67-68.

<sup>6</sup> Абасов, Али (2001).

<sup>7</sup> Motika, Raoul (2001 a), pp. 286-287.

Աղբբեջանի պատմության ամենանշանավոր կրոնական, հասարակական և մշակութային գործիչներից մեկը<sup>1</sup>:

### *Բալամը Խորհրդային Աղբբեջանում*

Խորհրդային Միության տարիներին ինչպես մնացած հանրապետություններում, այնպես էլ Աղբբեջանում կրոնների ազատ դավանման հարցում բռնաճնշումներ կիրառվեցին: Մասնավորապես 1920-ականների վերջերին Աղբբեջանում քանդվեցին կամ փակվեցին բազմաթիվ մզկիթներ: Մինչև խորհրդայնացումն այստեղ հաշվվում էր մոտ 2000 մզկիթ<sup>2</sup>:

Բացի այդ, դադարեցին գործել կրոնական ուղղվածությամբ դպրոցները՝ մադրասաները (madrasah), լուծարվեցին ու բռնազավթվեցին իսլամական ունեցվածք համարվող վակֆերը, փակվեցին շարիաթի և տեղական ավանդույթների՝ աղաթի վրա հիմնված դատարանները: Մեծապես տուժեց մուսուլման հոգևորականությունը: Հոգևորականներից շատերի դեմ հալածանքներ ու բռնություններ կիրառվեցին: Նրանք, ովքեր կրոնի հետ որևէ առնչություն ունեին կամ նամագ էին անում, ծոմ պահում, ունեին պատվաբեր «հաջի», «մեշեդի», «քերբալայի» տիտղոսները (որոնք ուխտագնացներին էին շնորհվում), նույնպես տուժեցին<sup>3</sup>:

<sup>1</sup> Դսկական անունը՝ Ձեյնալ Աբիդին: Մեկել է 1871թ. Բաքվի մոտ գտնվող Փիրշաղի բնակավայրում, կրոնական սպասավորի ընտանիքում: Հետագայում նրանց ընտանիքը տեղափոխվել է Բաքու, որտեղ Ալիզադեի սովորել է Իշերիշեների՝ Ղուդսիի մեղրեսում, որից հետո աստվածաբանական կրթությունը շարունակել է Նաջաֆում: 1903-ից մինչև կյանքի վերջը ծառայել է Բաքվի Թագափիր մզկիթում: Մահացել է 83 տարեկան հասակում: Նշենք, որ Ալիզադեի սուննի տեղակալ մուֆթի դարձավ Հաջի Բյրախիմ էֆենդիզադեին:

<sup>2</sup> Sattarov, Rufat (2004), p. 8.

<sup>3</sup> Bedford, Sofie (2009), p. 75.

1929թ. ընդունվեց օրենք, որը խիստ սահմանափակումներ մտցրեց կրոնական հաստատությունների գործունեության մեջ: Բացի այդ, 18-ից ցածր տարեկաններին արգելվեց գործնականում որևէ կրոնի դավանումը: 1935թ. ուսանողներին պաշտոնապես արգելվեց մզկիթ հաճախել<sup>1</sup>: Աղբբեջանը գրեթե կորցրեց իսլամական աշխարհի կրոնական կենտրոնների հետ ունեցած կապերը: Թե՛ երկրում, թե՛ դրա սահմաններից դուրս կրոնական կրթության հնարավորությունները բացառվեցին: Աղբբեջանում դադարեց գոյություն ունենալ բարձրագույն կրոնական հեղինակությունների՝ մուշթափիդների՝ մարջիա աթթակլիդի ինստիտուտը<sup>2</sup>:

Խորհրդային Միությունում հռչակված կանանց ազատագրման շրջանակներում արդեն 1920-ականների վերջերին Աղբբեջանում օրենքի ուժով արգելվեցին այնպիսի արմատացած ավանդույթներ, ինչպես կրոնական գլխաշորը, բազմակնությունը, ոչ չափահաս աղջիկների ամուսնությունը, հարսնացուին փախցնելը, արյան վրեժը և այլն: Կրթությունն աղջիկների համար դարձավ պարտադիր: Օրենքը մահապատիժ էր սահմանում նրանց համար, ովքեր կապանեին կնոջը: Աղբբեջանում խորի-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>2</sup> Արաբերենից թարգմանաբար՝ ընդօրինակման աղբյուր (ամուշ): «Մարջիա աթթակլիդ» անելով շիա իսլամում նկատի են առնվում այն բարձրաստիճան հոգևորականները՝ մուշթափիդները, ովքեր իսլամական սկզբնաղբյուրների վրա հենվելով կարող են միճարկելի հարցերի վերաբերյալ ինքնուրույն դատողություններ անել, ինչպես նաև ֆեթվաներ (վճիռներ) ընդունել: Այս իրողությունը նրանց տասներկուական շիաների շրջանում դարձնում է կարևորագույն հեղինակություն: Իսլամական իրողությունների մասին նրանց մտաեզրմները կարող են որոշակիորեն տարբերվել միմյանցից: «Մարջիա թակլիդի» տիպոս ունեն սահմանափակ թվով կրոնական հեղինակություններ, որոնց ծանրակշիռ մասն էրաբից և Իրանից է:

դայնացման առաջին շրջանը շահեկան եղավ կանանց համար, քանի որ կինը տղամարդուն հավասար իրավունքներ ստացավ, ինչը, սակայն, շատ դեպքերում ձևական բնույթ էր կրում: Հետագա տարիներին կանայք հիմնականում իրենց ձեռքը վերցրին ժողովրդական ավանդույթների պահպանման գործը<sup>1</sup>:

1920-1929թթ. Ադրբեջանում լուրջ քարոզարշավ սկսվեց Աշուրայի տոնակատարությունների դեմ: Իշխանությունները նույնիսկ հոգևորականներին էին ներգրավել այդ գործում, որպեսզի համատեղ պայքարեն Աշուրայի ժամանակ դրսևորվող մոլեկրոնության դեմ<sup>2</sup>, որը որոշ դեպքերում ուղեկցվում էր տանջածեսի դրսևորումներով:

Խորհրդային հակակրոնական կրթությունը, արմատախիչ անելով կրոնական գիտելիքը, ի վիճակի չեղավ ոչնչացնել իսլամական ինքնությունը: Խորհրդային շրջանում Ադրբեջանում նույնիսկ տեղի ունեցան շիայական հուզումներ, որոնցից առաջինը՝ 1930-ականների սկզբներին, երբ լուր տարածվեց շիա իմամների հայտնվելու մասին, և մարդիկ դուրս եկան փողոցներ<sup>3</sup>, հաջորդը՝ 1983-ին<sup>4</sup>: Ընտանիքներում կրոնական սովորույթներն ընդհանուր առմամբ պահպանվում էին: Ավագ սերնդի կանայք շարունակում էին գլխաշոր (kalaghe) կրել, աղոթել, ծոմ պահել, Աշուրայի օրերին մզկիթ հաճախել: Չնայած աղոթքն ու ծոմապահությունն աստիճանաբար մոռացվեցին, սակայն շատերը կրոնական հաստատություններին և վիրա-

տվություններ (nazir) էին անում, ուխտատեղիներ այցելում: Կար վախ Դատաստանի օրվա (qiyamet) նկատմամբ:

Շարունակում էր պահպանվել իսլամում խոզի մսի և ալկոհոլային խմիչքների հարցում գոյություն ունեցող արգելքը: Ներքին գործերի նախարարության տվյալներով՝ 1950թ. դրությամբ Ադրբեջանի մուսուլման բնակչության բացարձակ մեծամասնությունը, ներառյալ բազմաթանակ նոմենկլատուրան, շարունակում էր հետևել տղա երեխաների թլպատման կարգին (sünnet)<sup>5</sup>: Բացի այդ, շատ ընտանիքներ թե՛ գյուղական բնակավայրերում, թե՛ քաղաքներում, պետական հաստատություններում քաղաքացիական ամուսնության ամրագրմանը զուգահեռ, կրոնական սպասավորի միջնորդությամբ կնքում էին ամուսնական պայմանագիր՝ քեբին (kebin kağız) ըստ շարիաթի օրենքների:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ստալինը ձևական կերպով վերանայեց կրոնական քաղաքականությունը, քանի որ երկիրը հայտնվել էր ճգնաժամի մեջ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1944թ. ապրիլի 14-ի որոշմամբ ստեղծվեցին չորս պաշտոնական կրոնական-հոգևոր վարչություններ Բարվում, Տաշքենդում (Ուզբեկստան), Ուֆայում և Բույնակսկում (Ռուսաստան), որոնք նման էին Ռուսական կայսրության ժամանակ ստեղծված հոգևոր-կրոնական վարչություններին: Բարվում շեյխ ուլ-իսլամ նշանակվեց Հաջի Ադա Ալիզադեին<sup>6</sup>: Ադրբեջանում գործող կառույցը կոչվում էր «Այսրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչություն» (Zaqafqaziya Müsəlmanlarının Ruhani İdarəsi):

<sup>1</sup> Heyat, Farideh (2008), p. 363.

<sup>2</sup> Исмаилов, Эльдар, Власть и народ. Послевоенный сталинизм в Азербайджане 1945-1953 гг. Баку, 2003, <http://ebooks.preslib.az/pdfbooks/rubooks/eldarismayvlast.pdf>

<sup>3</sup> Alstadt, Audrey (1992), p. 155.

<sup>1</sup> Tohidi, Nayereh (1998).

<sup>2</sup> Goyushov, Altay & Askerov, Elchin (2009), pp. 173-174.

<sup>3</sup> Goyushov, Altay (2008), p. 75.

<sup>4</sup> Si u hայերդիլ:

Այս շրջանում Ադրբեջանում մի շարք մզկիթներ վերաբացվեցին, սահմանափակ ձևով կրոնական դասընթացներ կազմակերպվեցին հոգևորականների համար՝ հնարավորություն տալով նրանց որոշ չափով վերականգնել ուժերը: Պատերազմական շրջանում կրոնական դաշտի բարեփոխումները նպատակ ունեին համախմբել հասարակությանը արտաքին և ներքին մարտահրավերների շուրջ: Բարեփոխումները նպատեցին իսլամական դաշտի կանոնակարգմանը: Այս ամենը ԽՍՀՄ-ի համար նաև քարոզչական նշանակություն ուներ՝ արտաքին աշխարհի առաջ բարելավելու իր հեղինակությունը: Պահանջվեց, որպեսզի բոլոր գրանցված մզկիթները ենթարկվեն համապատասխան վարչության, ինչը հնարավորություն կտար նաև վերահսկել, որպեսզի մզկիթները չներգրավվեն ոչ կրոնական գործունեության մեջ՝ չմատուցեին սոցիալական ծառայություններ (առողջապահական կամ կեցության), չհիմնեին կրթական (դպրոցներ և գրադարաններ) և ֆինանսական կամ տնտեսական հաստատություններ: «Պաշտոնական իսլամի» ներկայացուցիչները, բնականաբար, չէին կարող հասարակության շրջանում ազդեցիկության հավակնել, քանի որ, ըստ էության, ընդգրկվեցին խորհրդային քարոզչության մեջ<sup>1</sup>:

Վերականգնվեց և պետականացվեց կրոնական կրթությունը ևս: Բուլաբայի Միրի Արաբ մադրասան՝ աստվածաբանական վարժարանը, 1945թ. վերաբացվեց փակվելուց քսան տարի անց: Կրոնական բարձրագույն կրթություն ստանալու համար Տաշքենդում ստեղծվեց Իմամ Ալ-Բուխարիի իսլամական ինս-

<sup>1</sup> Saroyan, Mark (1994), p. 514.

տիտուտը: Սրանք էին ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող իսլամական կրթական հաստատությունները, որոնց ուսանողներին արդեն 1960-ականների վերջերից հնարավորություն էր տրվում կրթությունն ավարտել արտասահմանի կրոնական ուսումնական կենտրոններում, բայց առաջին հերթին՝ ԽՍՀՄ բարեկամ երկրներում (Եգիպտոսում, Միրիայում, Լիբիայում և այլն)<sup>2</sup>: Ի դեպ, Ադրբեջանի շեյխ ուլ-իսլամ Հաջի Ալլահշյուքուր Փաշազադեն (Hacı Allahşükür Paşazadə) սովորել է թե՛ Միրի Արաբ մադրասայում և թե՛ Իմամ Ալ-Բուխարիի ինստիտուտում:

Ինչ վերաբերում է Բաքվի հոգևոր-կրոնական վարչությանը, այն պատասխանատու էր Այսրկովկասի համար և ղեկավարվում էր շիա շեյխ ուլ-իսլամի և նրա սուննի տեղակալի՝ մուֆթիի կողմից: ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն.Խրուշչովի կառավարման շրջանում արդեն պարզ դարձավ, որ կրոնական վարչություններն ըստ էության նպաստեցին, որպեսզի «պաշտոնական իսլամը» դառնա առանձին ինստիտուտ<sup>2</sup>:

Ադրբեջանում իսլամը դարձավ պետության քաղաքականությանը ենթակա և խորքային ձևափոխումների ենթարկվեց: Իսլամի բարձրաստիճան ներկայացուցիչներն աստիճանաբար սերտաճեցին իշխանությանը: Շուշափելի առաջընթաց Ադրբեջանում իսլամական մշակույթի և իսլամական ինստիտուտների զարգացման առումով չարձանագրվեց: Աստիճանաբար արմատացած անտարբերությունը կրոնի նկատմամբ Ադրբեջանում դարձավ անշրջելի փաստ: Նույնիսկ ԽՍՀՄ փուլումից հետո

<sup>1</sup> Roy, Oliver (2000), pp. 150-151.

<sup>2</sup> Saroyan, Mark (1997) p. 44.

աղբբեջանցիների մեծ մասը չէր տարբերակում իսլամի սուննի և շիա ուղղությունների տարբերությունները<sup>1</sup>:

ԽՍՀՄ տարիներին Աղբբեջանում իսլամի բնորոշ գծերից էր «խառը» մզկիթների գոյությունը, ինչը բացառիկ երևույթ էր իսլամական աշխարհում: Դրանցում հերթականությամբ աղոթում էին շիաներն ու սուննիները: Երբեմն նույն իմամը<sup>2</sup> նույն մզկիթում վարում էր թե՛ սուննիական, թե՛ շիայական աղոթքը<sup>3</sup>: Ընդհանրապես, ԽՍՀՄ տարիներին միտում կար վերացնելու իսլամի ներսում առկա տարբերություններն ու տարանջատումները: Ի դեպ, պետության կողմից ուղղորդվող այդ միտումը նկատվում է նաև այսօր, ինչը նպատակ ունի թուլացնել լարվածությունը միջդավանական հարաբերություններում:

1970-ականների վերջին 1980-ականների սկզբներին Աղբբեջանում կար միայն 16 պաշտոնապես գրանցված մզկիթ, որոնցից յոթը՝ մայրաքաղաքում (երկու մեծ մզկիթ՝ կենտրոնում, հինգը՝ արվարձաններում)<sup>4</sup>: 1970-ականների վերջերին, ըստ առանձին տեղեկությունների, Աղբբեջանում գործել են 1000 ընդհատակյա աղոթատեղի և մոտ 300 ուխտատեղի: Պաշտոնավարել է կրոնի մոտ 100 սպասավոր, որոնցից միայն 16-ն էր կրոնական կրթություն ստացել Միրի Արաբում և Իմամ Բուխարիում<sup>5</sup>:

Խորհրդային տարիներին Աղբբեջանում շիայական հուզարկավորության (ihsan) կարգը հիմնականում անցկացվում էր իսլամական օրենքներով: Հրավիրվում էր հոգևորական, որը Ղուրանից այաթներ էր կարդում: Այդ պարագայում հոգևորականներին անվանում էին «գերեզմանի մուլաներ» (qebirsanliq mollasi): Ի դեպ, եղել են դեպքեր, երբ հոգևորական հրավիրողներին իշխանությունները հետապնդել են<sup>6</sup>:

Հատկանշական է, որ ԽՍՀՄ տարիներին Աղբբեջանում առանձին շրջաններ (թե՛ շիայական, թե՛ սուննիական) աչքի են ընկել որոշակի կրոնասիրությամբ, ինչպես, օրինակ, Մասալին, Բիլյասուվարը, Ջալիլաբադը, Լենթորանը: Այստեղ նամազ էին անում, կրոնական հիշարժան օրերն էին նշում, սակայն բացառապես տներում, երբեմն էլ սրբատեղիներում՝ գաղտնի կերպով: Այս միտումը տարածված էր նաև Ղազախի, Թուվուզի, Շամխորի, Եվլախի, Դիվիչինի և Քուսարի շրջաններում նս<sup>7</sup>:

Արդեն Խորհրդային Միության վերջին տարիներին Աղբբեջանում նկատվեց իսլամական գործոնի որոշակի ակտիվացում, ինչը հիմնականում պայմանավորված էր 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությամբ, որի առաջնորդը՝ իմամ Խոմենինին (1902-1989թթ.), Աղբբեջանում որոշակի ժողովրդականություն էր վայելում: Արդեն 1980-ականների սկզբներին կրոնասեր շրջանակներ ունեցող Բարվում, Նախիջևանում և Լենթորանում (այսպես կոչված՝ իսլամական գոտում) բավական ակտիվ էին իրանցի քարոզիչները: Մասնավոր տներում ու փոքր խանութների

<sup>1</sup> Cornell, Svante E. (2006), p. 21.

<sup>2</sup> Տվյալ պարագայում՝ կրոնի սպասավոր, ով առաջնորդում և վարում է աղոթքը, պաշտամունքային ծեսերը և այլն: Թե՛ սուննի, թե՛ շիա իսլամում իմամ բառն ունի այլ իմաստներ նս:

<sup>3</sup> Morika, Raoul (2001 a), p. 292.

<sup>4</sup> Roi, Yaacov (2000), p. 182.

<sup>5</sup> Swietochowski, Tadeusz (2002), p. 73.

<sup>6</sup> Najatizadeh, Mehrangiz (2012).

<sup>7</sup> Агацов, А.И. (2001).

ապակիներին կարելի էր տեսնել իմամ Խումեյնիի լուսանկարները և իսլամական շիայական այլ խորհրդանիշներ<sup>1</sup>:

Աղբրեջանում իսլամական գործոնի ակտիվացման ամենակարևոր ցուցիչներից մեկը 1970-ականների վերջերից նոր թափ ստացած Աշուրայի միջոցառումներն էին, որոնք միշտ էլ որոշակի ժողովրդականություն ունեին: Հատկանշական է, որ ակոնոլի օգտագործումը և խնջույքների կազմակերպումը Մուհարրամ ամսին ևս շարունակաբար նվազում էին<sup>2</sup>: Այդ ընթացքում նույնիսկ սուննիներն էին ձեռնպահ մնում հարսանիքներից և այլ տոնակատարություններ նշելուց<sup>3</sup>:

Աղբրեջանում շիայական տրամադրությունների հասարակական երկրորդ դրսևորումը տեղի ունեցավ Իրանի իսլամական հեղափոխությունից մի քանի տարի անց, 1983թ., երբ լուր տարածվեց, որ Բաքվում երևացել են շիա իմամների ստվերներ<sup>4</sup>:

ԽՍՀՄ տարիներին իսլամական գործոնի ակտիվացում նկատվեց նաև գորբաշույան վերակառուցման (պերեստրոյկա) քաղաքականության տարիներին<sup>5</sup>: Հենց այդ շրջանում Աղբրեջանում սկսեցին ավելի ակտիվորեն քննարկվել սեփական պատմությունն ու ազգային-կրոնական ավանդույթները<sup>6</sup>: Գեղարվեստական գրականության մեջ սկսեցին օգտագործվել նաև

իսլամական թեմաներ: Ա.Ջաֆարգադեի «Բարու 1501» պատմավեպում Սեֆյան դինաստիայի հիմնադիր Շահ Իսմայիլը (որի օրոք 1501թ. իսլամի շիա ուղղությունը Պարսկաստանում պաշտոնականացվեց) անվանվում է «Աղբրեջանի Պետրոս Մեծ»<sup>7</sup>:

Խորհրդային Միության միայն վերջին տարիներին Ղուրանը<sup>8</sup> թարգմանվեց աղբրեջաներեն: Թարգմանության տարբերակներից մեկն իրականացրած արաբագետ Նարիման Քասիմօղլուն այն հրատարակեց 1989-1992թթ. Բաքվի Խազար համալսարանի տպագիր «Խազար» ամսագրում: Հետագայում Ղուրանի աղբրեջանական տարբերակը հրատարակվեց 100.000 օրինակով<sup>9</sup>:

Այսպիսով խորհրդային տարիներին, չնայած առկա բռնաճնշումներին, իսլամական ավանդույթներն Աղբրեջանում լիովին չվերացան, այլ շարունակեցին մասնակիորեն պահպանվել: Հատկանշական է, որ կրոնական ինքնությունը շատ դեպքերում հանդես էր գալիս որպես առաջնային բաղադրիչ՝ գործածության մեջ պահելով մուսուլման (Musulmanchilik) եզրը<sup>10</sup>:

<sup>1</sup> Alstadd, Audrey (1992), p. 155.

<sup>2</sup> Ղուրանը (արաբերենից թարգմանաբար՝ ընթերցվածք) մուսուլմանների և իսլամի սուրբ գիրքն է, որը ներառում է Մուհամեդի քարոզները աստվածային հայտությունները, որոնք մարգարեն քարոզել է 610-662թթ. ընթացքում Նախ իր ծննդավայրում՝ Մեքքայում, այնուհետև Մադինայում (սկզբնապես՝ Յասրիբ): Մարգարեն Մադինա տեղափոխվեց հիջրա կատարեց 622թ. իր գինակիցների (սաիիբների) հետ, հալածանքներից խուսափելու համար: Այստեղ նա հիմնադրեց առաջին իսլամական համայնքը՝ Ումման: Ղուրանը կազմված է 114 սուրահներից (արաբերեն՝ աստիճան), որոնք էլ իրենց հերթին՝ պարբերից (արաբերեն՝ Նախալան, հրաշք): Ղուրանը գրի է առնվել Մուհամեդ մարգարեի մահից հետո, 7-րդ դարի վերջերին: Հայ իրականությունը դեռևս 7-րդ դարից ծանոթ է եղել իսլամին: Մանրամասն տե՛ս Կոզմոյան, Արմանուշ (2003):

<sup>3</sup> Nariman Gasimoglu,

<http://worldworchester.org/index.php/speakers/previous-speakers/53-gasimoglu>

<sup>4</sup> Farideh, Heyat (2008) p. 2.

<sup>1</sup> Полонский, Андрей (1999).

<sup>2</sup> Goyushov, Altay (2008), p. 70.

<sup>3</sup> Goyushov, Altay & Askerov, Elchin (2009), p. 169.

<sup>4</sup> Goyushov, Altay (2008), p. 70.

<sup>5</sup> ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի (1985-1991թթ.) Նախաձեռնությամբ 1985-ից ԽՍՀՄ-ում սկսվեց այսպես կոչված վերակառուցման քաղաքականությունը, որի հիմնական դրույթներն էին հասարակական կյանքի ժողովրդավարացումը, տնտեսական վերափոխումները և այլն:

<sup>6</sup> Полонский, Андрей (1999).

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ  
ԻՍԼԱՄՆ ԱՂԻՐԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բալանը հետխորհրդային շրջանում.  
նոր մտածումներ կրոնի հարցում*

Անկախությունից հետո Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Այազ Մութալիբովը (Ayaz Mütəllibov) (1991-1992թթ.) դարձավ նախագահ: Այս շրջանում Ադրբեջանում ազգային գարթոնքին գուցահեռ ճանապարհի հարթվեց նաև տարբեր ինքնությունների և մասնավորապես իսլամի վերածննդի համար: Ակտիվացում նկատվեց իսլամի ծեսերի ու ծիսակարգերի գործառնման առումով: Ադրբեջանից սկսեցին ուխտագնացության մեկնել Մաուղյան Արաբիա՝ Մեքքա և Մադինա, ինչպես նաև շիայական սրբատեղիներ՝ իրաքյան Քերբալա, Նաջաֆ և Սամարա: Ի դեպ, ուխտավորների թիվը տարեցտարի ավելացավ: 1991թ. Ադրբեջանից ուխտագնացության է մեկնել 200, 1996-ին՝ 800, հետագա տարիներին՝ 800-1000, իսկ 2007-ին՝ 5700 ուխտավոր<sup>1</sup>:

Նշենք, որ դեռևս 1989թ. Խորհրդային Ադրբեջանի կառավարության որոշմամբ ստեղծված Բաքվի իսլամական համալսարանը 1991թ. Կովկասի մուսուլմանների վարչության (Qafqaz Müsəlmanları İdarəsi) (ԿՄՎ) որոշմամբ սկսեց գործել որպես

Բաքվի իսլամական մադրասա (Bakı İslam Mədrəsəsi): Հետագայում, 1997թ. Ադրբեջանի Հանրապետության կառավարության որոշմամբ այն վերջնականապես վերանվանվեց Բաքվի իսլամական համալսարան (Bakı İslam Universiteti)<sup>2</sup>: Այն բարձրագույն ուսումնական հաստատություն է՝ իսլամագիտության և շարիաթի ֆակուլտետներով<sup>3</sup>:

Մութալիբովի իշխանության տարիներին սերտ կապեր հաստատվեցին իսլամական պետությունների հետ: 1991թ. դեկտեմբերի 8-ին Ադրբեջանը դարձավ Խորհրդային Միության առաջին պետությունը, որն անդամագրվեց Բալանական համագործակցություն կազմակերպությանը: Նշենք, որ 1991թ. տվյալներով՝ Ադրբեջանում գործել են 84 մզկիթ և աղոթատեղի, որոնց մի մասը՝ անօրինական կամ կիսաանօրինական<sup>3</sup>:

1990-ականների սկզբներին իսլամական գործոնը սկսեց որոշակի տեղ զբաղեցնել Ադրբեջանի քաղաքական դաշտում: Հատկանշական է, որ թեկուզ ոչ առանց գրանցման, Ադրբեջանում սկսեցին գործել իսլամամետ քաղաքական կուսակցություններ ու կառույցներ, որոնցից էին «Բալանական առաջընթացի ադրբեջանական կուսակցությունը» (Azərbaycan İslam Tərəqqi Partiyası), «Ազատ հոգևորականները» (Azad Ruhanilər), «Քարդաշլի» (Qardaşlıq) («Եղբայրություն»), «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը» (ԱԻԿ) (Azərbaycan İslam Partiyası), շարունա-

<sup>1</sup> Bakı İslam Universiteti, <http://www.qafqazislam.com/az/biu.php> /2011թ. տվյալներով՝ համալսարանն ունեցել է 1350 շրջանավարտ, իսկ 450 ուսանող վերապատրաստվել է արտերկրում: 2002-ից համալսարանն ունի մասնագործիչ Միզեդեպուրում, Մուսկալիթում և Ջարաթալայում (Заведения религиозного образования, [http://azerbaijans.com/content\\_506\\_ru.html](http://azerbaijans.com/content_506_ru.html)).

<sup>2</sup> Ланда, Роберт (1995), с. 249.

<sup>1</sup> Goyushov, Altay (2008), p. 78.

կեց գործել «Թյովբեն» (Tövbe) («Զղջում»)<sup>1</sup>, որոնք հասարակության մեջ լայն հեղինակություն չունենին՝ հիմնականում կապված թյուրքականության և աշխարհիկության գերակայության հետ: Նշենք, որ «Թյովբեն» և «Քարդաշլըքն» ընտրական քարոզարշավի ընթացքում աջակցեցին Ա.Մուրադիբովին, ով զգալի նշանակություն էր տալիս իսլամի հոգևոր և բարոյական արժեքներին: Իսլամամետ կառույցների առաջնորդներն ամեն կերպ ձգտում էին ստվարացնել իրենց շարքերը քարոզչական հոետորաբանության միջոցով:

1990-ականների սկզբներին հանրապետությունում առնվազն երեք իսլամական պարբերական էր հրատարակվում՝ ապաքաղաքական շարաթաթերթ համարվող «Իսլամը»՝ Կովկասի մուսուլմանների վարչության պաշտոնաթերթը և Ադրբեջանի իսլամական կուսակցության պաշտոնաթերթեր «Իսլամական աշխարհն» (Islam dünyasi) ու «Իսլամի ձայնը» (Islamın Səsi):<sup>2</sup> Իսլամամետ կուսակցություններից, թերևս, ամենանշանակալիցը 1991թ. շիայական արմատական տրամադրություններով հայտնի Նարդարանում ստեղծված «Ադրբեջանի իսլամական կուսակցությունն» էր, որի առաջնորդը՝ Ալի Աքրամ Ալիևը, պահպանողական հայացքներ ունեցող կրոնաքաղաքական գործիչ էր. ծնունդով՝ Նարդարանից: Կուսակցությունը գրանցվեց 1992թ.: Այն, ըստ իր կանոնադրության և ծրագրերի, հավատարիմ էր ժողովրդավարական արժեքներին, կողմ էր այլ կու-

<sup>1</sup> «Թյովբեն» ստեղծվել էր դեռևս 1989թ. «ապաշխարած» նախկին քրեական հանցագործների կողմից շաջի Աբդուլի (Աբդուլով) գլխավորությամբ: Վերջինիս մասին տե՛ս Мотика, Руял (2001).

<sup>2</sup> Полонский, Андрей (1999).

<sup>3</sup> Sattarov, Rufat (2004), p.10.

սակցությունների հետ համագործակցությանը, նաև ծրագրում էր ակտիվորեն մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

ԱՌԿ-ն աչքի էր ընկնում իրանամետ կեցվածքով՝ իր վրա կրելով խոմենիզմի<sup>2</sup> ազդեցությունը<sup>3</sup>: Նրա գաղափարախոսության մեջ հստակ էին հակաամերիկյան, հակախրայելական և հակասոնիստական շեշտադրումները<sup>4</sup>: Կուսակցությունը թյուրքականությունը համարում էր միասնական իսլամական ազգին՝ Ումմային հակասող գաղափարախոսություն, իսկ ազգայնականությունը դիտարկվում էր իսլամի միաստվածության սկզբունքը ռոնահարող երևույթ՝ բազմաստվածության (շիրք)<sup>5</sup>: Կուսակցությունը հետամուտ էր պետության և հասարակության մեջ իսլամական արժեքների ամրապնդմանն ու քաղաքական գործընթացներին կրոնական գործիչների մասնակցությանը՝ համարելով, որ իսլամը կարող էր կառուցողական դեր խաղալ Ադրբեջանի անկախ պետության կայացման գործում:

<sup>1</sup> Гасанов, Рафаэл (2003).

<sup>2</sup> Խոմենիզմի հիմնադիրն այսօրվա Ռուսիայ խոմենին (1902-1989թթ.) է, որի դիկտարությանը Իրանում 1979թ. իրականացվեց իսլամական հեղափոխություն: Խոմենիզմի հիմքում ընկած է շիայական աստվածապետության կամ velayat-e faqih-ի (շատացի՝ ֆակիհների իշխանություն) գաղափարը, որը ենթադրում է պետության օրենսդրական, գործադիր և դատական համակարգերում իսլամական աստվածաբան-իրավագետների՝ ֆակիհների իշխանությունը և շարիաթական նորմերի ներդրումը, որը կապահովի սոցիալական արդարություն: Պետության մեջ պետք է գործառի նաև ընտրովի խորհրդարան, որի անդամները կարող են լինել թե՛ աշխարհիկներ, թե՛ կրոնավորներ: Velayat-e faqih-ի գաղափարը դարձավ 1979թ. Իրանի Սահմանադրության հենքը: Այն արտացոլված է Խոմենիի Hokumat-e Islami, Velayat-e faqih («Իսլամական կառավարում. ֆակիհների իշխանությունը») գրքում, որ հրատարակվեց 1971-ին:

<sup>3</sup> Гаджи-Заде, Хикмет (1998).

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Полонский, Андрей (1999).

Ղարաբաղյան հարցի լուծումը, ըստ ԱԻԿ-ի, հնարավոր էր միայն ռազմական ճանապարհով: Կուսակցությունն Ադրբեջանում լայն հեղինակություն չէր վայելում:

Անկախությունից ի վեր Ադրբեջանի բոլոր աշխարհիկ իշխանությունները որոշակի տեղ են հատկացրել իսլամին՝ նպատակ ունենալով ստանալ լայն հասարակության աջակցությունը պետականության կայացման, աշխարհիկության պահպանման և իշխանության ամրապնդման գործում: Թուրքականության ջերմետանդ աջակից և աշխարհիկ գործչի համարում ունեցող Աբուլֆազ Էլչիբեյը (Əbülfəz Elçibəy) (1992-1993թթ.) 1992թ. հունիսին իշխանության գալով՝ հետամուտ եղավ իսլամի նկատմամբ շահեկան քաղաքականության իրականացմանը: Նա երդում տվեց Մահմանադրության և Ղուրանի վրա: Երդմանակալությանը հրավիրված էր նաև ԿՄԿ նախագահ, շեյխ ուլ-իսլամ Հաջի Ալլահշյուբյուր Փաշազադեն, որն օրհնեց նորընտիր նախագահին<sup>1</sup>:

Էլչիբեյի օրոք խորհրդային տարիներին սկզբից և կրոնական համայնքներից բռնազավթված վակֆային ունեցվածքը վերադարձվեց կրոնական հաստատություններին: Պետությունն աշխատավարձ նշանակեց պաշտոնական հոգևորականությանը և արտոնեց նրան ժողովրդից հանգանակություններ հավաքել<sup>2</sup>: Բացի այդ, Ադրբեջանում զարկ տրվեց կրթության կրոնական համակարգի վերստեղծմանը: 1992-ին Բաքվի պետական համալսարանում Թուրքիայի կրոնական հիմնադրամի (Türkiye Diyanet Vakfi) աջակցությամբ բացվեց

<sup>1</sup> Sattarov, Rufat (2004), p. 10.

<sup>2</sup> Valiyev, Anar (2005 b).

իսլամական աստվածաբանության ֆակուլտետը (İlahiyat Fakültesi): Ֆակուլտետի շրջանավարտները հինգ տարվա ուսումնառությունից հետո ստանում են աստվածաբան-իսլամագետի և արաբերենի ուսուցչի որակավորում<sup>3</sup>:

Ընդհանրապես, անկախությունից հետո ավելի մեծ շուրջով սկսեցին նշվել հանգուցային նշանակություն ունեցող այն բոլոր իսլամական ծիսակարգերն ու տոները, որոնք Ադրբեջանում ընդունված էին՝ Աշուրա, Ռամադան բայրամ (արաբերեն՝ Իդ ալ-ֆիտրը)<sup>4</sup>, Կուրբան բայրամ (արաբերեն՝ Իդ ալ-ադհա)<sup>5</sup>, Մյովլուդ բայրամ (արաբերեն՝ Մաուլիդ)<sup>6</sup> և այլն: Ավելի մեծ հանդիսավորությամբ սկսեց տոնվել նաև ոչ իսլամական ծագում ունեցող Նովրուզ բայրամ<sup>7</sup>: Էլչիբեյի իշխանության շրջանում Կուրբան բայրամն ու Ռամադան բայրամը, որոնք իսլամի երկու գլխավոր տոներն են, սկսեցին նշվել պետականորեն: Ներկայումս Ադրբեջանում պետական մակարդակով նշվում են Կուրբան բայրամը (Qurban Bayramı) (երկու օր), Ռամադան բայրամը (Ramazan Bayramı) (երկու օր) և Նովրուզ բայրամը (Novruz Bayramı) (հինգ օր)<sup>8</sup>:

<sup>1</sup> Заведения религиозного образования, <http://azerbaijans.com>

<sup>2</sup> Իսլամում Իդ ալ-ֆիտրըն անմիջապես հացորդում է լուսնային օրացույցի 9-րդ ամսի՝ Ռամադանի մեկամսյա ծնունդանշանը: Նշվում է լուսնային օրացույցի տասներորդ՝ Շավալ ամսի առաջին երեք օրերին մեծ հանդիսավորությամբ:

<sup>3</sup> Իսլամում Իդ ալ-ադհան անմիջապես հացորդում է ուխտագնացությանը հաջին, և նշվում է լուսնային օրացույցի 12-րդ՝ Չու ալ-հիջջա ամսի 10-րդ օրը:

<sup>4</sup> Mövlud bayramı-ը Մոսխամեդ մարգարեի ծննդյան տոնն է (արաբերեն Մաուլիդ ան-նաբի), նշվում է լուսնային օրացույցի երրորդ՝ Ռաբիա ալ-աուվալ ամսի 12-րդ օրը:

<sup>5</sup> Նովրուզը, որ ծագում է պարսկերեն նոր օր բառից, խորհրդանշում է զարնան գալը: Նովրուզը թյուրքական և իրանական ծագում ունեցող մուսուլմանների Նոր տարին է: Նշվում է մարտի 21-ին:

<sup>6</sup> Трудовой Кодекс Азербайджанской Республики, Статья 105. Праздничные дни. <http://ru.president.az/azerbaijan/holidays>

1992թ. օգոստոսի 20-ին Ադրբեջանի խորհրդարանը՝ Միլի մեջլիսը, ընդունեց Դավանանքի ազատության մասին օրենքը, որն առաջին անգամ լրացումների ենթարկվեց 1996-ին<sup>1</sup>: Ըստ 1992թ. օրենքի՝ կրոնը և պետությունը բաժանված են իրարից: Բոլոր կրոններն ու կրոնական կազմակերպությունները հավասար են օրենքի առաջ (հոդված 5): Պետական կրթական համակարգն առանձնացված է կրոնից (հոդված 6): Սահմանվում է յուրաքանչյուր անհատի իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոն և արտահայտելու իր վերաբերմունքը դրա նկատմամբ: Օտարերկրացիներին և բանտարկյալներին արգելվում է կրոնական քարոզչություն ծավալել (հոդված 1): Բոլոր մուսուլմանական կրոնական համայնքները պետք է միավորվեն իրենց պատմական կենտրոնի՝ Կովկասի մուսուլմանների վարչության շուրջ (հոդված 9): Հոդված 12-ը սահմանում է կրոնական կառույցների գրանցման կարգը: Կրոնական կառույցները կարող են ունենալ իրենց ադոպտեղիները՝ սեփական ձեռքերն ու ծիսակարգերն իրականացնելու նպատակով (հոդված 21): Հիվանդանոցներում, զինվորական հիվանդանոցներում, ծերանոցներում, հաշմանդամների հասարակական տներում, հանրակացարաններում գտնվողներն իրավունք ունեն թույլտվություն ստանալ կրոնական ձեռք իրականացնելու և հոգևորական հրավիրելու համար (հոդված 21): Կրոնական կառույցներն ու քաղաքացիներն իրավունք ունեն ձեռք բերել ցանկացած լեզվով կրոնական գրականություն (հոդված 22): Կրոնական կառույցներին և քաղաքացիներին իրավունք է տրվում ուխտա-

<sup>1</sup> Azerbaijan: Law of 1992 on Freedom of Religious Belief, <http://www.refworld.org/docid/47fdedc12.html>.

զնացության մեկնել, մասնակցել միջազգային կրոնական իրադարձությունների թե՛ խմբակային, թե՛ անհատական սկզբունքով (հոդված 24)<sup>2</sup>:

Դավանանքի ազատության մասին 1992թ. օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իսլամական գործոնը հետևակախության առաջին շրջանում Ադրբեջանի իշխանությունների համար վտանգ չէր ներկայացնում: Օրենքում մշակված չէին արտաքին կրոնական ներթափանցումներին, ինչպես նաև կրոնական արմատական ու ծայրահեղական գաղափարներին հակազդելու մեխանիզմները:

Ա.Էլչիբեյի նախագահության շրջանում ակտիվացան քննարկումներն ազգային տեսլականի, թյուրքականության և իսլամի հարցերի շուրջ: Մակայն անկախ գոյություն ունեցող դիսկուրսներից, այս շրջանում Ադրբեջանում փաստացիորեն գարթոնք ապրեց թյուրքական ազգայնականության ադրբեջանական մեկնաբանությունը: Իսլամը շարունակում էր մնալ լուսանցքում՝ դիտարկվելով որպես ինքնության երկրորդական բաղադրիչ, որպես ազգային մշակույթի մաս, ինչպես նաև Ադրբեջանն արտաքին աշխարհին կապող գործոն: «Ազգային ճակատի» գործիչներից Իսա Ղամբարի (հետագայում՝ «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ) խոսքերով՝ «Իսլամի նշանակությունը մեզանում մեծ է, քանի որ այն մեզ կապում է մուսուլմանական աշխարհի հետ»<sup>3</sup>:

Անձամբ Էլչիբեյը որոշակի վերապահում ուներ թե՛ իսլամի, թե՛ այն սպասարկող մասնավորապես շիա հոգևորա-

<sup>2</sup> Այս տեղում:

<sup>3</sup> Полонский, Андрей (1999).

կանների նկատմամբ, որոնց համարում էր Իրանի հնարավոր գործակալներ<sup>1</sup>: «Ազգային ճակատ» արդեն իսկ վճռել էր երկրի արտաքին քաղաքական ուղենիշներում բացառիկ տեղ հատկացնել Թուրքիային: Նախագահի հրամանագրով ադրբեջաներեն անվանափոխվեց թուրքերենի՝ հռչակվելով որպես պետական լեզու<sup>2</sup>: Պատահական չէ, որ պետական հեռուստատեսության քաջալերվում էր թուրքական՝ սուննի իսլամը<sup>3</sup>:

**Իսլամը Հեյդար Ալիևի կառավարման շրջանում:  
«Ադրբեջանական իսլամը»՝ ազգային նախագիծ**

Հեյդար Ալիևի (1993-2003թթ.) (Heydər Əliyev) իշխանության գալուց հետո պետությունը վերանայեց ներքին իսլամական քաղաքականությունը, որը, մի կողմից, դրսևորվեց իսլամական դաշտի խիստ վերահսկողությամբ, մյուս կողմից՝ պետության ու հասարակության մեջ իսլամին տրվեցին կարևոր դեր և նշանակություն: Որպես երկրի նախագահ Ալիևը նույնպես երդում տվեց Մահմանադրության և Նուրանի վրա: Նրա իշխանության տարիներին կառուցվեցին և նորոգվեցին շիա և սուննի իսլամի բազմաթիվ մզկիթներ: Ի դեպ, եթե այդ գործընթացը հետանկախության առաջին շրջանում ավելի շատ օտար դրամաշնորհների աջակցությամբ էր իրականացվում, ապա Հ.Ալիևի իշխանության գալուց հետո՝ առավելապես պետության: Ալիևի շրջանում պետական հոգածություն դրսևորվեց ուխտատեղիների նկատմամբ ևս, որի ապացույցը Միր Մովսում ադայի սրբատեղիի

<sup>1</sup> Goyushov, Altay (2008), p. 71.

<sup>2</sup> Полонский, Андрей (1999).

<sup>3</sup> Sattarov, Rufat (2004), p. 10.

վերանորոգումն էր: Ընդլայնվեցին թե՛ մզկիթներ և թե՛ ուխտատեղիներ այցելության շրջանակները: Ալիևը ներդրեց իսլամական տոների և այլ առիթներով պաշտոնատարների մզկիթ հաճախելու մշակույթը, որին հետևում էր անձամբ<sup>4</sup>: Մուսուլմանական տոների առիթով շնորհավորում էր ազգին, անձամբ այցելում մզկիթներ<sup>5</sup>: Հ.Ալիևի ճառերն ու ելույթներն աչքի էին ընկնում իսլամական հոետորաբանությամբ:

1994թ. հուլիսին Սաուդյան Արաբիա՝ Էր-Ռիադ կատարած իր պաշտոնական այցելության շրջանակներում նախկին կոմունիստական առաջնորդը և նրան ուղեկցող հոգևորականները՝ Փաշազադեի գլխավորությամբ, Մեքքա «փոքր ուխտագնացություն» (ումրա)<sup>6</sup> կատարեցին: Հետագայում Մեքքա և Մադինա ուխտագնացության մեկնողների մեջ որոշակի տեղ էին զբաղեցնում կառավարության անդամները<sup>7</sup>: Մեքքա այցելությունից հետո Ալիևն իր համար նոր իրականություն բացահայտեց. «Փառք Աստծո, որ ես ունեցա այն, ինչ ցանկանում էի ունենալ երկար տարիներ: Մեքքա այցելության ընթացքում ես հասկացա, թե որքան համամարդկային կրոն է իսլամը, փիլիսոփայական, գիտական հետք ունեցող»<sup>8</sup>:

1995թ. նոյեմբերի 12-ին ընդունվեց նոր Մահմանադրությունը, որի 7-րդ հոդվածը բնութագրում էր Ադրբեջանը որպես աշխարհիկ պետություն: 18-րդ հոդվածում («Կրոն և պետու-

<sup>4</sup> Полонский, Андрей (1999).

<sup>5</sup> Аль-Фаллах, Адель Абдулла (2007), с. 22.

<sup>6</sup> Ումրան երթարում է ուխտագնացություն Մեքքա տարվա ցանկացած շրջանում, բացի հաջի օրերից:

<sup>7</sup> Valiyev, Anar (2005 b).

<sup>8</sup> Аль-Фаллах, Адель Абдулла (2007), с. 101.

թյուն») նշված էր. «Ադրբեջանի Հանրապետությունում կրոնն առանձնացված է պետությունից: Բոլոր դավանանքները հավասար են օրենքի առաջ: Պետության կրթական համակարգը կրում է աշխարհիկ բնույթ»<sup>1</sup>: Մահմանադրության 48-րդ հոդվածը հռչակում է խղճի, դավանանքի ազատություն: 56-րդ և 85-րդ հոդվածներով հոգևորականներին արգելվում է մասնակցել թե՛ Միլի մեջլիսի, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Արգելվում է քաղաքական նպատակներով իսլամի օգտագործումը<sup>2</sup>:

Այինի իշխանության գալուց հետո Ադրբեջանում մեծ նշանակություն տրվեց պաշտոնական իսլամական ինստիտուտներին: Զգալի աշխատանք կատարվեց բարձրաստիճան հոգևորականների, մասնավորապես՝ Փաշազադեի հեղինակությունը բարձրացնելու և նրանց դիրքերը հասարակության մեջ ամրապնդելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս կարողանային պայքարել «պաշտոնական իսլամից» դուրս գործող հոգևորականների, ինքնակոչ իմամների և օտար քարոզիչների դեմ: Մահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ անելուց հետո Այինը փորձեց ավելի առարկայական կերպով հակազդել իսլամամետ կուսակցությունների գործունեությանը: 1995թ. արգելվեց դրանցից ամենահանգուցայինը՝ «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը», որի հրատարակությունները նույնպես արգելվեցին: Կուսակցության բազմաթիվ ակտիվիստներ ձերբակալվեցին պետու-

թյան շահերի դեմ գործելու մեղադրանքով: Նշենք, որ 1994թ. վերջերին ԱԻԿ-ը հանրապետության ավելի քան յոթանասուն բնակավայրերում մասնաճյուղեր ուներ՝ 50.000 մարդու անդամակցությամբ: 1997թ. կուսակցության 9 ղեկավար դատապարտվեց տասը տարվա ազատազրկման՝ մեղադրվելով Իրանի օգտին լրտեսություն անելու և հեղաշրջման փորձի մեջ<sup>3</sup>:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ադրբեջանի իսլամական կուսակցության գործունեությունը «քաղաքական իսլամի» դրսևորման ապացույց է, անկախ այն հանգամանքից՝ կուսակցությունը որպես վերջնական նպատակ ցանկանում էր Ադրբեջանում ստեղծել աստվածապետություն, թե՛ ոչ: ԱԻԿ գոյությունն արդեն իսկ փաստում է, որ իսլամն Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքի գործոն էր: Ժամանակ առ ժամանակ կուսակցության ղեկավարների և ակտիվիստների բանտարկություններն ու նրանց դեմ հետապնդումներն ի ցույց են դնում, որ Ադրբեջանի իշխանությունները թե՛ Հեյդար Այինի և թե՛ Բլիհամ Այինի օրոք գգուշանում էին «քաղաքական իսլամի» ակտիվացումից: Պետության կողմից կրոնական և կրոնաքաղաքական ակտիվության դեմ ցանկացած հակազդեցություն նույնացվում էր արտաքին կրոնական վտանգները և աշխարհիկության ուղղված մարտահրավերները կանխելու հետ: Պետությունն ամեն ինչ անում էր՝ հեղինակազրկելու իսլամի ցանկացած մեկնաբանություն, եթե այն «պաշտոնական իսլամից» դուրս էր: Բացառություն էր կազմում թուրքական խողովակներով եկող իսլամը:

<sup>1</sup> Конституция Азербайджанской Республики.

[http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution\\_r.pdf](http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf)

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Rotar, Igor (2000).

1996թ. Ադրբեջանի խորհրդարանը լրացումներ կատարեց Դավանանքի ազատության մասին հոդվածում: Օտար երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց արգելվեց Ադրբեջանում կրոնական քարոզչություն ծավալել: Պահանջվեց, որպեսզի կրոնական կառույցները գրանցվեն ավանդական կրոնական կազմակերպությունների կենտրոններում<sup>1</sup>: Դրանք էին Կովկասի մուսուլմանների վարչությունը, Բաքվի սինագոգը, Ռուս Ուղղափառ եկեղեցու Մոսկվայի պատրիարքարանը: 1997թ. վերջին ավելի քան 250 կրոնական կազմակերպություն գրանցվեց, շատերը դադարեցրին իրենց գործունեությունը:

Այլևս իշխանության շրջանում շարունակում էին գոյություն ունենալ իսլամական արմատականության օջախներ: Ասվածի ապացույցը 2001-2002թթ. Նարդարանում տեղի ունեցած սոցիալական հուզումներն էին, որոնք ունեին ընդգծված կրոնական բնույթ: Նարդարանի բնակիչները պետությունից պահանջում էին կենսական պայմանների բարելավում, սակայն նրանց կազմակերպած ցույցերի ժամանակ հնչում էր թաքբիթ՝ Աստծուն մեծարող ու փառաբանող ավանդական վանկարկությունը՝ Ալլահու աքբար (թարգմանաբար՝ Աստված ամենակալ է)<sup>2</sup>:

Նշենք, որ արդեն 1999-ից նահանջեց նաև հետանկախության շրջանի հետաքրքրությունն իսլամի, իսլամական մշակույթի և գրականության նկատմամբ, որ փոխկապակցվում էր ազգային-կրոնական վերածննդի հետ: Հասարակության բազմամարդ և ազդեցիկ խմբերի շրջանում նորից միտում նկատվեց

վերադառնալու խորհրդային ժամանակների մշակութային իրավիճակին: Ռուսական մշակույթի դրսևորումներն Ադրբեջանում աշխուժացան: «Ռուսին և Նիզամին չեն կարող փոխարինել Դոստոևսկուն և Պաստերնակին, - նշում է Մոսկվայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի շրջանավարտ Բաքվի միջնակարգ դպրոցներից մեկի տնօրենը: - Եվրոպական կամ արաբական մշակույթն ամեն դեպքում օտար է, իսկ ռուսականը մեզանից շատերի համար գրեթե մայրենի է»:

Չարկ է նշել, որ Հ.Ալիևը փոփոխության ենթարկեց Ադրբեջանի ազգային տեսլականը: Նա ցանկանում էր Ադրբեջանի՝ որպես արդիականացող պետության համար ազգային նոր հայեցակարգ մշակել, սահմանել նրա տեղն ու դերը քաղաքակրթական համակարգում և միջազգային հարաբերություններում, ուրվագծել ներքին ու արտաքին զարգացումների ուղենիշները: Ալիևը մի կողմից ձգտում էր Ադրբեջանում զարգացնել եվրոպական փորձը, մյուս կողմից՝ սերտացնել կապերն իսլամական աշխարհի հետ, վերականգնել Ադրբեջանի իսլամական դիմագիծը: Ադրբեջանը ներկայացվում էր մի երկիր, որը կարող էր կամրջի դեր խաղալ Արևմուտքի և Արևելքի, Եվրոպայի և Ասիայի, քրիստոնեական աշխարհի և իսլամական աշխարհի միջև: Իսլամը Հ.Ալիևը համարում էր Ադրբեջանի ազգային-հոգևոր հարստությունը, ինչը հնարավորություն կտար Ադրբեջանին պահպանել անկախությունը: Նա փորձում էր Ադրբեջանը դարձնել իսլամական աշխարհի առաջատար կենտրոն, նաև իսլամագիտության կենտրոն<sup>2</sup>:

<sup>1</sup> Hadjy-zadeh, Hikmet, Freedom of Belief in Independent Azerbaijan: Majority and Minority Problems, <http://www.crvp.org/book/Series04/IVA-29/chapter-8.htm>

<sup>2</sup> Goyushov, Altay (2008), p. 77.

<sup>1</sup> Полонский, Андрей (1999).

<sup>2</sup> Аль-Фаллах, Аделя Абдулла (2007), с. 101.

Այլևս գիտակցում էր, որ թյուրքականությունը կնեղացներ Ադրբեջանի նշանակությունը և թույլ չէր տա նրան համապարփակ ներկայանալու համար: Ժամանակակից Ադրբեջանի տարածքում դարերի ընթացքում ստեղծված քաղաքակրթական ողջ ժառանգությունը (որը ներառում էր գրադաշտական, քրիստոնեական, իսլամական՝ արաբական, պարսկական ու թուրքական շերտեր) փորձ արվեց որպես «ադրբեջանական մշակույթ» ներդնել իսլամական քաղաքակրթական հուլովույթի մեջ: Ադրբեջանական ինքնության հայեցակարգի գոյությունը նպաստեց թյուրքականության որոշակի նահանջին: 1995թ. անցկացված հանրաքվեի արդյունքում պետական լեզու հռչակվեց ադրբեջաներեն լեզուն (*Azərbaycan dili*)՝ նախկին թուրքերեն լեզվի (*Türk dili*) փոխարեն: Ադրբեջաներենն օրենսդրորեն ամրագրվեց որպես Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական լեզու<sup>1</sup>:

Ադրբեջանականությունը սկսեց լայնորեն ներդրվել հասարակական գիտակցության մեջ: Արդյունքում՝ իսլամը սկսեց էթնիկացվել, ի հայտ եկավ իսլամի ադրբեջանական ուղղությունը: Ադրբեջանականության էթնոնախագծի հիմնական մեխանիզմներ ընտրվեցին լեզուն, պատմությունը, տարածքը և կրոնը<sup>2</sup>: Հարկ է նկատի ունենալ, որ ադրբեջանականությունը, որպես ինքնության տեսակ, ձևավորվել է 20-րդ դարում և վերագրվում է Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս շիա մուսուլմաններին, ովքեր մինչև 1930-ականների վերջը չունեին համընդհանուր ճանաչում ստացած հավաքական էթնանուն:

<sup>1</sup>The Constitution of the Republic of Azerbaijan, [http://azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution\\_e.pdf](http://azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_e.pdf): Նշենք, որ օգոստոսի 1-ը պետականորեն հռչակված է որպես ադրբեջանական այբուբենի և լեզվի օր:

<sup>2</sup>Վարդանյան, Թամարա (2013), էջ 81:

Շարունակում էին շրջանառության մեջ մնալ կովկասյան թաթարներ, այսրկովկասյան թաթարներ, կովկասյան թուրքեր, շիա մուսուլմաններ, թուրքեր անվանումներ<sup>3</sup>: Միայն 1939թ., արդեն ԽՍՀՄ տարիներին մարդահամարի ցուցակներում ստաջին անգամ պաշտոնապես գործածվեց նոր էթնանուն՝ ադրբեջանցի: Սակայն նշված անունն ավելի շատ քաղաքացիության, քան էթնիկության ցուցանիշ էր, ուստի անհրաժեշտ էր այն էթնիկացնել<sup>4</sup>:

Այլևս կառավարման շրջանում մեծացավ իսլամի դերը թե՛ պետական գաղափարախոսության և թե՛ պետական գործիչների հետտորաբանության մեջ: Դա ուղղված էր ոչ թե պետության իսլամականացմանը, այլ միանգամայն այլ բնույթի գործընթաց էր: Այլևս ձգտում էր օգտագործել իսլամն իր հեղինակությունն ու օրինակագրությունը սոցիալական բոլոր խավերի առաջ ամրապնդելու համար՝ ձգտելով պահպանել նաև պետության աշխարհիկությունը:

1996թ. Freedom House-ի աջակցությամբ Բարվի Տնտեսական և քաղաքական հետազոտությունների (Far Center) կենտրոնն Ադրբեջանում անկախ մամուլի և դրա բովանդակային շեշտադրումների վերաբերյալ հարցախոսյալ անցկացրեց, որն ի հայտ բերեց հետևյալ պատկերը: 1996թ. Ադրբեջանում ազգային գաղափարի շուրջ հրատարակված 36 հոդվածի 42.9 տոկոսը վերաբերում էր իսլամին, 14.9 տոկոսը՝ ադրբեջանականությանն ու թյուրքականությանը, 20 տոկոսը՝ ազգայնականու-

<sup>3</sup>Նույն տեղում, էջ 75:

<sup>4</sup>Նույն տեղում:

թյանը, 17.1 տոկոսը՝ համայնավարությանը: Ազատականությունը չէր կազմում նույնիսկ 3 տոկոս:

Հարկ է նկատի ունենալ, որ Աղբբեջանում իսլամը դիտարկվում էր ոչ միայն որպես մշակույթի բաղադրիչ, այլև մուսուլմանական ժողովուրդների հետ աղբբեջանցիների ունեցած պատմական և մշակութային կապերի մաս: Հատկանշական է, որ կառավարությանը մոտ կանգնած լրատվամիջոցները Հեյդար Ալիևի ավտորիտար իշխանությունն օրինակարգ դարձնելու համար նույնիսկ իսլամին էին հղում անում: Ժամանակ առ ժամանակ բանավեճեր էին ծավալվում ժողովրդավարության դեմ, նշվում էր, որ ազատականությունը խորթ է իսլամի հիմնարար սկզբունքներին<sup>1</sup>:

Նշենք, որ Աղբբեջանում Ալիևի օրոք մշակված ազգային գաղափարախոսության անքակտելի մաս դարձավ մեկ այլ բաղադրիչ և՛ հեյդարիզմը, որի հիմքում ընկած էր Հեյդար Ալիևի անձի պաշտամունքը: Հեյդարիզմի քարոզչությանը թվեց պետական մեթեան, ինչպես նաև հասարակական-քաղաքական և մշակութային համարում ունեցող մի շարք գործիչներ: Ալիևին շատ դեպքերում սկսեցին գովաբանել չափազանցված ձևերով, և դա անում էր նաև Փաշազադեն: 2003թ. մայիսի 31-ին Ղուբայում շեյխ ուլ-իսլամը հայտարարեց. «Մենք ունենք մի աստված, մի մարգարե և մի նախագահ, դա Հեյդար Ալիևն է», իսկ մեկ ամիս անց ասաց. «Գնալ Հեյդար Ալիևի դեմ՝ նշանակում է դեմ գնալ Ալլահի կամքին»<sup>2</sup>:

<sup>1</sup> Полонский, Андрей (1999).

<sup>2</sup> Юнусов, Ариф (2004).

**Իլիամ Ալիևի իշխանության շրջանը (2003-2013թթ.):  
Բալամական գործոնի ակտիվացումը**

Իլիամ Ալիևն (Ilham Əliyev) իշխանության եկավ 2003թ. նախագահական ընտրությունների արդյունքում, իսկ 2005թ. տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնք երկուսն էլ անցկացվեցին կոպիտ խախտումներով: Թե՛ նախագահական և թե՛ խորհրդարանական ընտրությունները հավանության արժանացան Ռուսաստանի, Արևմուտքի և ԱՄՆ-ի կողմից: Ամրապնդելով իշխանությունը՝ Իլիամ Ալիևի վարչակարգը սկսեց նպատակադրված կերպով չեզոքացնել այլախոսության ցանկացած աղբբուր, այդ թվում՝ արևմտամետ ընդդիմությանը, որին Արևմուտքը, Աղբբեջանում ունեցած աշխարհաքաղաքական, տնտեսական շահերից և այլ նկատառումներից էլենելով, չարձագանքեց: Էներգետիկ ռեսուրսների արտահանման համար Արևմուտքին ձեռնտու էր կայուն վիճակում գտնվող Աղբբեջան, որտեղ փաստացիորեն արգելված էին քաղաքական հանրահավաքները, ցույցերն ու քաղաքացիական նախաձեռնությունները, որոնք խափանվում էին դեռ չսկսված: Ստեղծված իրավիճակում Աղբբեջանում աստիճանաբար նահանջեց համակրանքը եվրոպական և ազատական արժեքների նկատմամբ, իսկ Ռուսաստանի հարցում դիրքորոշումը շարունակեց մնալ վերապահ՝ կապված Ղարաբաղյան հարցում Մոսկվայի ոչ միանշանակ մոտեցումների հետ: Չնայած Աղբբեջանի իշխանությունները որդեգրել էին Եվրամիությանն ինտեգրվելու և ՆԱՏՕ-ին անդամակցելու քաղաքականություն, սակայն 2003-ից ի վեր աղբբեջանական հասարակության մեջ խորացան հակաարևմտյան և հակաամերիկյան տրամադրությունները, քանի որ

Արևմուտքից Ադրբեջանում ժողովրդավարության աջակցության ուղղված որևէ քայլ ակնկալել հնարավոր չէր<sup>1</sup>:

Արդյունքում՝ ստեղծված գաղափարական բացը փորձ արվեց լրացնել իսլամով: Մինչև 2005թ. խորհրդարանական ընտրությունները՝ այդ բացը զբաղեցնում էր արևմտամետ ընդդիմությունը, որին իշխանությունները դուրս մղեցին քաղաքական դաշտից: Միմյանց հետ հակամարտող կողմեր մնացին հեյդաբիզան ու իսլամիզմը<sup>2</sup>:

2006-ից մեծացավ միջազգային իսլամական գործոնի ազդեցությունն Ադրբեջանում: Այստեղ սկսեցին արձագանքել այն իրողություններին, որոնք առնչվում էին միջազգային իսլամական խնդիրներին: Ձևավորվեց հակաարևմտյան և հակախարայելական հոետորականություն, չնայած այն փաստին, որ Իսրայելի հետ Ադրբեջանն ուներ ռազմավարական գործընկերություն: 2006թ. փետրվարին Բաքվում և Նարդարանում կազմակերպվեցին բողոքի աննախադեպ ցույցեր ընդդեմ Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների<sup>3</sup>: 2006թ. փետրվարի 7-ին սկզբում Բաքվում, հետո Նարդարանում այրվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Դանիայի, նաև՝ Հայաստանի և Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին «Յենի խարաբ» քիչ հայտնի թերթը քրիստոնեական թեմաներով ծաղրանկարներ հրապարակեց, իսկ 2006-ի ապրիլի սկզբին հրեական կազմակերպությունները սպառնալից նախկներ ստացան տեղական իսլամիստներին<sup>4</sup>:

<sup>1</sup> Юнусов, Ариф (2007).

<sup>2</sup> Լույն տեղում:

<sup>3</sup> Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների մասին մանրամասն տե՛ս Փաշայան, Արարս (2013), էջ 10-23:

<sup>4</sup> Юнусов, Ариф (2012), с. 11-12.

2006թ. գարնանը Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի (ԿԿԱՊԿ) նախագահ Ռաֆիկ Ալիևը հայտարարեց, որ մի շարք մզկիթներ ներգրավված են հակապետական քարոզչության մեջ, իսկ որոշ պետական պաշտոնյաներ կապ ունեն արմատական կրոնական խմբավորումների հետ՝ նկատի ունենալով նուրջուականներին և վահաբականներին: Սա պետական բարձրաստիճան պաշտոնյայի կողմից պետությանն արված զգուշացում էր: Այս շրջանում սրվեցին հարաբերությունները շեյխ ուլ-իսլամի և Ռաֆիկ Ալիևի միջև, ովքեր տարակարծություններ ունեին կրոնական քաղաքականության հարցերում: 2006թ. հունիսի 27-ին Ռ.Ալիևն ազատվեց աշխատանքից: Այդ պաշտոնում նշանակվեց Հիդայեթ Օրուջըլը<sup>1</sup>:

Ռ.Ալիևի պաշտոնանկությունից հետո Փաշագադեն փորձեց ամրապնդել իր հեղինակությունը՝ անդրադառնալով նաև Ղարաբաղյան հակամարտությանը: 2006թ. օգոստոսի 23-ին Ադրբեջանի հոգևոր առաջնորդը հայտարարեց, որ պատրաստ է օջիհաղ հայտարարել Ադրբեջանի գրավյալ տարածքներն ազատատագրելու համար, երբ որ ժամանակը գա<sup>2</sup>:

2006թ. ամռանը բողոքի ակցիաներ կազմակերպվեցին ընդդեմ Լիբանանում «Հիբալլահի» դեմ իսրայելական պատերազմի, իսկ 2008թ. դեկտեմբերին՝ Ղազախում «Համասի» դեմ իսրայելական պատերազմի<sup>3</sup>: Ի դեպ, հակաքրիստոնեական բովանդակություն ունեցող հակաարևմտյան հոետորաբանության

<sup>1</sup> Юнусов, Ариф (2007).

<sup>2</sup> Глава мусульман Кавказа обсуждает карабахский конфликт с лидерами арабских стран, <http://i-r.ru> (24.08.2006).

<sup>3</sup> Юнусов, Ариф (2012), с. 12.

միջոցով շարունակեցին արտահայտվել նաև հակահայկական տրամադրությունները:

Խոսքի ազատության համատարած բացակայության պայմաններում շատուշատ աշխարհիկ շարքային ընդդիմադիրներ, ովքեր հիասթափված էին, սկսեցին «քաղաքական իսլամի» նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերել: Շատերը հիշեցին իմամ Խումեյնիի խոսքերը՝ «Ո՛չ Արևմուտք, ո՛չ Արևելք, միայն իսլամ»<sup>1</sup>: Ա.Էլչիբեյի իշխանության տարիների վարչապետ, ընդդիմադիր գործիչ Փանա Հուսեյնը նույնիսկ հայտարարեց, որ քաղաքականության մեջ պետք է հենվել նաև իսլամական սկզբունքների վրա: 2005թ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում զգալի նշանակություն տրվեց իսլամական լսարանին<sup>2</sup>:

Կիսաօրինական դաշտում շարունակում էր գործել «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը», որը քննադատում էր իշխանությունների կրոնական քաղաքականությունը, դավանանքի ազատության հարցում առկա սահմանափակումները, Սահմանադրության 56-րդ հոդվածը, որով արգելվում էր կրոնի սպասավորների մասնակցությունը քաղաքական ընտրություններին և այլն: Կուսակցությունն ակտիվ մասնակցություն էր ունենում դպրոցներում իսլամական գլխաշորի արգելքի դեմ կազմակերպվող ցույցերին և այլն:

Ալինի քաղաքականությունը կրոնական ակտիվության նկատմամբ ըստ էության նույնն էր, ինչ Հեյդար Ալինի օրոք: Պետական մեքենան շարունակում էր կոշտ մեթոդներով պայքա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 11.

<sup>2</sup> Goyushov, Altay (2008), p. 78.

րել «քաղաքական իսլամի», կրոնական և կրոնաքաղաքական ակտիվության ցանկացած դրսևորման դեմ՝ ձգտելով վերահսկել կրոնական իրավիճակը, ինչպես նաև դրսից և ներսից եկող մարտահրավերները: Կրոնասիրության միտում պարունակող ցանկացած փաստ Ադրբեջանում կանխարգելվում էր: Շարունակվում էին ձերբակալությունները, բանտարկությունները, հետապնդումներն ու հալածանքները: Պետության քաղաքականությանն աջակցում էր Փաշազադեն:

2008թ. օգոստոսին, Աբու Բաքր մզկիթի ահաբեկչությունից որոշ ժամանակ անց Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը, անվտանգության շարժառիթներից ելնելով, արգելեց մզկիթի բակում և բաց տարածքներում աղոթել: Այս որոշումը պաշտպանեց Փաշազադեն՝ նշելով, որ այն ուղղված է մզկիթ հաճախողների անվտանգությանը<sup>1</sup>:

2009թ. հունիսին Ադրբեջանի խորհրդարանը Դավանանքի ազատության մասին օրենքում փոփոխություններ կատարեց, համաձայն որոնց՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվեց իսլամական կրոնական արարողություններ վարելը: Դրանք կարող էին իրականացնել միայն Ադրբեջանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր կրոնական կրթություն էին ստացել Ադրբեջանում<sup>2</sup>: Այս ճանապարհով իշխանությունները փորձեցին օրենքի ուժով կասեցնել ընդդիմադիր հոգևորականների, ինչպես նաև Ադրբե-

<sup>1</sup> Власти Азербайджана подтвердили запрет на намаз в открытых местах, <http://www.kavkaz-uzel.ru> (02. 10. 2008).

<sup>2</sup> В Азербайджане запретили проведение исламских религиозных церемоний лицами, получившими теологическое образование за рубежом, <http://www.interfax-religion.ru> (30. 06.2009).

ջանի համար ոչ ավանդական կրոնական ուղղությունների քարոզիչների գործունեությունը: Հայտնի է, որ աղբյուրներից բազմաթիվ երիտասարդներ կրոնական կրթություն էին ստացել իսլամական աշխարհի տարբեր կենտրոններում, ինչը նաև իրականացվել էր պաշտոնական խողովակներով:

Բացի այդ, պարտադրվեց կրոնական կազմակերպություններին ու համայնքներին վերագրանցվել: Անկախությունից ի վեր կրոնական համայնքներն արդեն մի քանի անգամ գրանցվել էին: Գրանցման գործընթացը պետք է իրականացներ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը մինչև 2010թ. հունվարի 1-ը: Գրանցված չլինելու դեպքում համայնքները կլուծարվեին: Նոր օրենքն, ըստ էության, միտված էր կրոնական դաշտի վերահսկողությանը և անցանկալի կառույցներից հեշտորեն ազատվելուն: Օրենքում անդրադարձ կար նաև կրոնական գրականության գրաքննության չափորոշիչներին<sup>1</sup>:

Ընդհանրապես, Աղբյուրներում կրոնական կառույցների գրանցումը, ինչպես նաև իսլամին վերաբերող գրականության հրատարակումն ու ներմուծման ընթացակարգը բավական բարդ են և ոչ բոլոր դեպքերում՝ հաղթահարելի: Իշխանությունները վերջին տարիներին չափազանց խստացրել են նաև գրաքննության պահանջները: 2012թ. փետրվարին օրենքում արված փոփոխության համաձայն՝ առանց Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի թույլտվության՝ արգելվում է կրոնական բովանդակությամբ ցանկա-

<sup>1</sup> Forum 18 News Service, Azerbaijan: Repressive new Religion Law and new punishments enter into force, [http://www.forum18.org/archive.php?article\\_id=1451](http://www.forum18.org/archive.php?article_id=1451) (27 May 2010).

ցած նյութի, այդ թվում աուդիո և վիդեո ձայնասկավառակների ներմուծումը կամ տարածումը: Դրանք պետք է ունենան համապատասխան մակնշումներ և վաճառվեն հատուկ խանութներում: Ի դեպ, Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովն առանց դատական որոշման կարող է կասեցնել կրոնական բովանդակություն պարունակող ցանկացած նյութի թե՛ հրատարակումը, թե՛ տարածումը<sup>1</sup>: Օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեին կանխել իսլամական արմատականության և արտաքին իսլամական ազդեցությունների ընդլայնումը:

2009թ. օրենսդրական փոփոխություններից հետո Աղբյուրներում մի շարք մզկիթներ չկարողացան հաղթահարել այն պահանջները, որոնք առաջ էին քաշվել գրանցման համար և կանգնեցին փակման վտանգի առաջ: 2009-2010թթ. Աղբյուրների հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների այլք առաջացրին սուննիական ու շիայական մի քանի մզկիթներ, անվտանգության, տեխնիկական վիճակի կամ օրենքի հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով, քանդելու կամ փակելու մասին իշխանությունների որոշումները: Մզկիթների հարցում պետության մոտեցումները տարբեր գնահատականների արժանացան: Հատկապես թուրքական պետության միջոցներով կառուցված սուննիական մզկիթների պարագայում՝ կարծիքներ հնչեցին, որ դրանք ուղղված էին 2009թ. Շվեյցարիայում հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմանը և առհասարակ թուրքական կրոնական ազդեցության նվազեցմանը:

<sup>1</sup> Азербайджан ужесточает цензуру исламской литературы, <http://iwpr.net.ru> (07.03. 2013).

Մզկիթների թեմայով 2009թ. սեպտեմբերի 7-ին DEVAMM-ը («Իսլամական քաղաքացիության և խղճի ազատության կենտրոնը») կազմակերպեց ասուլիս «Իսլամական մշակույթի մայրաքաղաքի մզկիթների քանդումը» խորագրով: Բանախոսների համոզմամբ՝ 2009թ. մզկիթներ քանդելու մտադրությունը կհեղինակագրվեր Ադրբեջանին իսլամական աշխարհում, այն դեպքում, երբ 2009թ. Բաքուն Իսլամական համագործակցություն կազմակերպության կողմից հայտարարվել էր իսլամական մշակույթի մայրաքաղաք<sup>1</sup>:

2009թ. ապրիլի 25-ին Բաքվում բարեկարգման հիմնավորմամբ փակվեց թուրքական սուննի իսլամի քարոզչության հարթակ համարվող Շեհիդլար մզկիթը, որը կառուցվել էր Թուրքիայի Կրոնի հարցերի նախագահության Դիյանեթի աջակցությամբ: Մայիսի 10-ին փակվեց և մյուս օրը լուսադեմին քանդվեց 1940-ականների վերջերին Կասպից ծովի ափին, «Նավթային քարեր» վայրում կառուցված Մուհամեդ մարգարեի մզկիթը՝ տեխնիկական անվտանգության շարժառիթով, քանի որ կառուցված էր կավային գրունտի վրա<sup>2</sup>:

Իշխանությունները որոշել էին քանդել նաև շիալական Ֆաթիմա-Ջահրա անավարտ մզկիթի շենքը, որը գտնվում էր Բաքվի Սուրայանի շրջանի Յենի Գյունեշլի վայրում<sup>3</sup>: Ի դեպ,

<sup>1</sup> Мусульмане Азербайджана критикуют снос мечети "Фатмаи-Захра", <http://www.kavkaz-uzel.ru> (07.09.2009).

<sup>2</sup> Co-organisation of events in commemoration of "Baku - capital of Islamic culture 2009. "Islamic Historical Cities and Modern Architecture" International Conference, IRCICA Newsletter /OIC Research Center for Islamic History, Art and Culture/, May-August 2009, No. 79, p. 7-8.

<sup>3</sup> В Азербайджане снесена мечеть на "Нефтяных камнях", <http://www.kavkaz-uzel.ru> (12.05. 2009).

<sup>4</sup> Forum 18 News Service. Azerbaijan: The authorities are already preparing to destroy the mosque Felix Corley. <http://www.org/articles/> (December 22, 2009).

մզկիթը քանդելու մասին տնտեսական դատարանի որոշումը համընկավ Ռամադանի հետ, ինչը դիտարկվեց որպես անարգանք հավատացյալներին<sup>4</sup>: Մզկիթի հարցը լուրջ աղմուկ առաջացրեց: Բացասական արձագանքներ եղան Իրանում: Մզկիթը չքանդելու խնդրանքով Փաշազադեն դիմեց երկրի նախագահին, որի հրամանով մզկիթի շենքը հանձնվեց Գովկասի մուսուլմանների վարչության վերահսկողությանը:

Իշխանությունները ծրագրում էին փակել նաև թուրքական միջոցներով կառուցված Իլլահիյաթը, որը գտնվում էր Բաքվի պետական համալսարանի հանրակացարանի հարևանությամբ, սակայն Ադրբեջանում Թուրքիայի դեսպանության միջամտությամբ փակումը կասեցվեց<sup>5</sup>: 2009թ. սեպտեմբերին վերանորոգման շարժառիթով փակվեց Գյանջայի սուննիական Ջումա մզկիթը, որը նախկինում եղել էր քրիստոնեական եկեղեցի և հայտնի էր Աղվանական եկեղեցի անվամբ: Իշխանությունները տեղեկություն ունեին մզկիթ հաճախող վահաբականների մասին: Մզկիթի դուրը կողպվել էր Ռամադանից ընդամենը չորս օր առաջ<sup>6</sup>: Գյանջայում 2009թ. սեպտեմբերին փակվեց մեկ այլ սուննիական մզկիթ՝ Ակիի սուննան, վերանորոգման պատճառով:

<sup>1</sup> Ֆաթիմա-Ջահրա մզկիթի համայնքի ղեկավար Հաջի Մեյդի պարգաբանմամբ՝ իրենք 1996թ. գնել են հողը և մինչև 1998թ. հավաքել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա ձեռնամուխ եղել շինարարությանը, որը որոշ ժամանակ ընդհատվել է ֆինանսական դժվարությունների պատճառով: Իսկ երբ շինարարությունն ավարտին է հասել, դատարանը որոշել է քանդել շինությունը՝ որպես «անօրինական կառույց»: Առանձին տեսակետների համաձայն՝ մզկիթը քանդելու իրական պատճառը դրա տարածքը վաճառքի հանելու մտադրությունն էր:

<sup>2</sup> В Азербайджане закрыта еще одна мечеть. <http://www.kavkaz-uzel.ru> (20.05.2009): Деятельность мечети "Илахият" в Баку возобновлена, но доступ в нее ограничен. <http://www.kavkaz-uzel.ru> (22.05.2009).

<sup>3</sup> В Азербайджане в Рамадан закрыли мечеть, [www.islamnews.ru](http://www.islamnews.ru) (04. 10. 2009).

նաբանությամբ: Մզկիթի հին, փայտե դռները կողպվեցին<sup>1</sup>:

Ի դեպ, իշխանությունները որոշել էին փակել նաև Բարվի Հին (ներքին) քաղաքում<sup>2</sup> Իչերիջեհերում (İçəri Şəhər) գտնվող և պատմամշակութային արժեք ներկայացնող սուննիական մեկ այլ<sup>3</sup> Լեզգիական մզկիթը, որը 2000-ից ներառված էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում<sup>4</sup> գրանցման հետ կապված խնդիրներ ունենալու համար: Սակայն իրական պատճառն այլ էր. մզկիթը համարվում էր վահաբականության կենտրոններից մեկը: Կովկասի մուսուլմանների վարչությունը պահանջում էր փոխել մզկիթի անունը, քանի որ այն չէր կարող կոչվել էթնիկ տարբերանշանով: Մզկիթի համայնքի ներկայացուցիչները նույնիսկ խնդրել էին Ռուսաստանի մուսուլմանների հոգևոր վարչության աջակցությունը<sup>5</sup>: Ի վերջո, մզկիթը վերանվանվեց Աշուրբեկ (այն կառուցվել էր 1169թ., Աշուր իբն Բրահիմի կողմից): Այլևս նախկին Լեզգիական մզկիթը, որն Ադրբեջանում սուննիական ամենամեծ կենտրոններից մեկն է, գործում է լեզգիական Սամուր մշակութային կենտրոնին կից: ԿՄՎ-ն Աշուրբեկ մզկիթը համարել է Սիրիա մեկնող ադրբեջանցի զինյալների հավաքագրման հարթակ<sup>6</sup>:

2009թ. մզկիթներին առնչվող խնդիրների մասին ընդդիմադիր հոգևորականները կոշտ գնահատականներ հնչեցրին: Ջուլմա մզկիթի նախկին իմամ Իլթար Բրահիմօղլուի կարծիքով<sup>7</sup> 2009թ. Ադրբեջանում դավանանքի ազատության ոլորտում առ-

<sup>1</sup> Почему в Азербайджане закрывают мечети, <http://www.bbc.co.uk>, (03.11. 2009).

<sup>2</sup> Мусульмане-сунниты Азербайджана заявляют о дискриминации, <http://www.kavkaz-uzel.ru> (04.02.2010);

<sup>3</sup> Лезгинский вопрос поссорил муфтияев, <http://www.ng.ru> (19.05.2010).

<sup>4</sup> Азлахшукюр Пашазаде обвиняет в лезгинскую мечеть, <http://haqqin.az> (05.01.2014).

կա խնդիրներն ավելացել էին, չէին հարգվել մուսուլմանական մեծամասնության իրավունքները: Իշխանությունների գործողություններն Բրահիմօղլուն որակեց որպես իսլամաֆորիա<sup>8</sup>: Պետությունը, ըստ նրա, նպաստում էր, որպեսզի Ադրբեջանի ապագա սերունդը մեծանար մզկիթ քանդող երկրի քաղաքացու քաղությունով<sup>9</sup>:

Մեշեդի Դադաշ մզկիթի համայնքի իմամ Հաջի Շահին Հասանլին մզկիթների քանդումը համարեց ոչ միայն հավատացյալների, այլև ողջ ադրբեջանական հասարակության խնդիրը<sup>10</sup>: Նրա խոսքերով՝ Ադրբեջանում տագնապում էին, որ, օրինակ, Շուշիի մզկիթը գտնվում է ողբալի վիճակում, բայց այն քանդված չէ:

Իսլամական դաշտում իշխանությունների կոշտ մեթոդները, ըստ էության, նպատակ ունեին չեզոքացնել վերահսկողությունից դուրս գտնվող հասարակության բոլոր շերտերը, այդ թվում՝ կրոնաքաղաքական ակտիվիստներին:

2010թ. փետրվարի 2-ին կրոնական ազատության գծով ԱՄՆ հանձնաժողովն (USCIRF) անդրադարձավ Ադրբեջանում կրոնի դավանման ազատության և մարդու հիմնարար իրա-

<sup>1</sup> Глава DEVAMM: в 2009 году в Азербайджане резко ухудшилась ситуация со свободой совести, <http://www.kavkaz-uzel.ru> (09.12. 2009).

<sup>2</sup> Բրահիմօղլին համոզված էր, որ նույնիսկ խորհրդային ժամանակներում իշխանությունները թույլ չէին տա, որպեսզի կարճ ժամանակահատվածում միանգամից երեք մզկիթ քանդվի: Իսկ Փաշազադեին ուղղված նամակում իրավապաշտպանը մտահոգություն էր հայտնում Ռամադան ամսին մզկիթի փակման համար՝ զգուշացնելով անդրերկրային կյանքում դրա հետևանքների մասին:

<sup>3</sup> Հաջի Շահին Հասանլիի համոզմամբ՝ երկու մզկիթների քանդումն ինչ-որ տեղ կարելի է համարել պատահականություն, սակայն երրորդի պարագայում խոսքը կրոնի դեմ նպատակաուղղված միտման մասին է: Տե՛ս նաև Затянувшаяся молчание шейха, Газета "Зеркало" (02.09.2009).

վունքների խախտման դեպքերին: Դրանում հիմնականում խոսվում էր մզկիթների խնդիրների, կրոնական համայնքների գրանցման դժվարությունների, Նախիջևանի Բանանյար գյուղում Աշուրայի ծիսական արարողություն իրականացնել ցանկացող հավատացյալների նկատմամբ սահմանափակումների կիրառման և Սայիդ Նուրսիի հետևորդների հետապնդումների մասին<sup>1</sup>: Ի դեպ, միջազգային իրավապաշտպան կառույցները, որպես կանոն, անդրադարձել են Ադրբեջանում կրոնական ազատությունների սահմանափակումների խնդիրներին:

Հարկ է նշել, որ կոշտ մեթոդներով իրականացվող ճնշումները դավանանքի, խոսքի, մարդու իրավունքների հիմնարար ազատությունների հարցում իրականում նպաստեցին կրոնական և կրոնաքաղաքական ակտիվության ընդլայնմանը: Հենց Բլիամ Ալիևի իշխանության շրջանում նկատվեց իսլամական գործոնի ակտիվացում հասարակական-քաղաքական կյանքում, նոր թափ ստացավ ի պաշտպանություն կրոնական գլխաշորի սկսված շարժումը: 2010թ. Ադրբեջանում տեղի ունեցավ բազմամարդ բողոքի ակցիա, որի մասնակիցները պահանջում էին կրթության նախարարությունից դպրոցում վերացնել գլխաշորի արգելքը<sup>2</sup>: Սակայն գլխաշորի հարցում իշխանությունների մոտեցումը կոշտ ու անզիջում էր, փաստարկված Ադրբեջանի՝ աշխարհիկ պետություն լինելու հանգամանքով:

Նշենք, որ Բլիամ Ալիևի իշխանությունն էականորեն մտահոգված էր նաև կրոնական արմատականության փաստով, որն

<sup>1</sup> USCIRF Concerned over Religious Repression in Azerbaijan, <http://www.uscirf.gov> (02.02. 2010).

<sup>2</sup> В Азербайджане продолжаются акции протеста против запрета на хиджабы, <http://www.kavkaz-uzel.ru> (15.12.2010).

անհանգստացնում էր նաև հասարակության լայն շերտերին: Դրա կանխարգելման վերաբերյալ առաջ էին քաշվում տարբեր տեսակետներ: Իսլամագետ Էլմիր Կուլիևի կարծիքով՝ իսլամական դաշտում առկա խնդիրները պայմանավորված են Ադրբեջանում կրոնական մշակույթի զարգացած չլինելու փաստով: Կրոնական արժեքները պետք է մեկնարանեն ոչ թե օտար քարոզիչները, այլ հենց ադրբեջանցիները<sup>3</sup>: «Ադրբեջանում գործում է ավելի քան 1800 մզկիթ, որտեղ աշխատում են հարյուրավոր իմամներ: Նրանցից շատերը Բաքվի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի և Բաքվի իսլամական համալսարանի շրջանավարտներ են: Դա հսկայական ռեսուրս է, որը պետք է գործի դնել ճշմարիտ իսլամական արժեքները քարոզելու համար»<sup>4</sup>: Կուլիևի համոզմամբ, եթե մարդիկ խորքային կերպով հասկանան իսլամը, ապա աղանդավորների քարոզներն Ադրբեջանում պահանջարկ չեն ունենա: Իսկ կրոնական արմատականության դեմ կոշտ մեթոդներով պայքարելն անարդյունավետ է, քանի որ այդ երևույթին իրականում պետք է հակադրել այլ արժեքներ ու գաղափարներ<sup>5</sup>:

2011թ. Ադրբեջանի իսլամական կուսակցության յոթ անդամներ, այդ թվում՝ առաջնորդ Մովսում Մամադովը, դատապարտվեցին երկարաժամկետ ազատազրկման՝ հեղաշրջման փորձ կատարելու մեղադրանքով: Մամադովը դատապարտվեց 12 տարվա ազատազրկման: Նրա համար ճակատա-

<sup>3</sup> Интервью с известным исламоведом Эльмиром Кулиевым, <http://www.1news.az> (18.03.2007).

<sup>4</sup> Глава департамента ИСИ Кавказа: «Мы говорим об этой проблеме больше 10 лет», <http://vesti.az> (13.07.2013).

<sup>5</sup> Интервью с известным исламоведом Эльмиром Кулиевым, <http://www.1news.az> (18.03.2007).

գրական եղավ Իլիամ Ալիևին շիա իսլամի թշնամի Յազիդ իբն Ալ-Մուավիայի հետ համեմատելը<sup>1</sup>:

Իլիամ Ալիևի նախագահության առաջին և երկու շրջաններում զգալի աշխատանք կատարվեց մզկիթաշինության ուղղությամբ: 2003-ից ի վեր Ադրբեջանում կառուցվել է ավելի քան 200 և վերանորոգվել ավելի քան 80 մզկիթ<sup>2</sup>: Վերանորոգված մզկիթների մեջ հատկապես առանձնանում է Գյանջայի Իմամ Ջադեն, որի վրա ծախսվել է չորս միլիոն, և Շամախիի Ջումա մզկիթը՝ հինգ միլիոն դոլար<sup>3</sup>:

Կրոնական կառույցների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի նախագահ Հիդայեթ Օրուջևը (2006-2013թթ.) Բաքվում Մարդու իրավունքի պաշտպանների 9-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ հրապարակեց Ադրբեջանում մզկիթների և կրոնական համայնքների վերաբերյալ 2011թ. տվյալները: Ըստ այդմ՝ անկախությունից հետո Ադրբեջանում կառուցվել է 595 մզկիթ: Մինչև 2009թ. ԿԿԱՊՀ-ն գրանցել է 534 կրոնական համայնք: 2009թ. կրոնական կառույցների գրանցման մասին օրենսդրական փոփոխություններից հետո, երբ պահանջվել է վերագրանցում, մինչև 2011թ. հունիս ամիսը գրանցված է եղել 512 կրոնական համայնք, որի գերակշռող մասը՝ մուսուլմանական: Ըստ Օրուջիի զեկույցի՝ 2011թ. հունիսի դրությամբ Ադրբեջանում գործել է 1802 մզկիթ<sup>4</sup>:

<sup>1</sup> Islamic Party of Azerbaijan Head Jailed of 12 Years, <http://www.rferl.org> (07.10.2011).

<sup>2</sup> Речь Президента Ильхама Алиева в церемонии открытия мечети Джума в Шамахе, <http://ru.president.az> (17.05. 2013).

<sup>3</sup> Najatizadeh, Mehrangiz (2012).

<sup>4</sup> Идаят Оруджев: «В Азербайджане функционируют 1802 мечети, 10 церквей, 6 синагог», <http://ru.ara.az> (16. 06. 2011).

ԿԿԱՊՀ նախագահ Էլշադ Իսկենդերովը (2013-2014թ. մայիս) 2013թ. հայտարարեց, որ 2013թ. դրությամբ դրանք 1700-ից ավելի են եղել: (Իլիամ Ալիևը 2013թ. մայիսին Շամախիի Ջումա մզկիթի բացման արարողության ժամանակ հայտարարեց, որ Ադրբեջանում գործում է մոտ 1800 մզկիթ): Եթե մինչև 2009թ. ԿԿԱՊՀ-ում գրանցված էր 534 կրոնական համայնք, ապա 2013թ. դրությամբ դրանց թիվը ոչ միայն չկրճատվեց, այլև ավելացավ: Նույն թվականի տվյալներով՝ գրանցված 577-ից 536-ը մուսուլմանական համայնքներ էին<sup>5</sup>:

Այսպիսով, Իլիամ Ալիևի նախագահության առաջին երկու փուլերում Սահմանադրությամբ ամրագրված դավանանքի ազատության մասին հողվածն այդպես էլ կյանքի չկոչվեց: Իլիամ Ալիևի պատկերացրած Ադրբեջանը՝ որպես «ազգային և կրոնական հանդուրժողականության» մոդել, իրականում մի՞՞ էր<sup>6</sup>: Չնայած Սահմանադրության մեջ դավանանքի ազատության վերաբերյալ օրենքի առկայությանը, Ադրբեջանում այն միշտ էլ ձևական բնույթ կրեց<sup>7</sup>:

### **«Պաշտոնական իսլամը». աշխարհիկ և կրոնական քննարանների համագործակցությունը**

«Պաշտոնական իսլամ» Ադրբեջանում ներկայացնում է Կովկասի մուսուլմանների վարչությունը, որն Ադրբեջանի անկա-

<sup>5</sup> Эльнад Искендеров: «Сфера деятельности религиозных образований – очень тонкая «материя», <http://www.1news.az> (12.06.2013).

<sup>6</sup> St' u Forum 18 News Service, AZERBAIJAN: Religious freedom survey, [http://www.forum18.org/archive.php?article\\_id=1690](http://www.forum18.org/archive.php?article_id=1690) (17 April 2012).

<sup>7</sup> Ադրբեջանում դավանանքի ազատության հարցում առկա սահմանափակումների մասին տե՛ս Azerbaijan: US Department of State, <http://www.state.gov/documents/organization/171683.pdf>

խացումից հետո փաստորեն սկսեց գործել խորհրդային կառույցի հենքի վրա: Այսրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչությունը 1992թ. վերանվանվեց: 1992թ. օգոստոսի 20-ին ընդունված Սահմանադրությամբ և դրա՝ 1996թ. հունիսի 7-ի լրացումներով (հոդված 8) Կովկասի մուսուլմանների վարչությունը ճանաչվում է որպես բարձրագույն իսլամական վարչական ատյան, որի իրավասությունը տարածվում է Ադրբեջանի Հանրապետությունում գործող բոլոր իսլամական կառույցների վրա: 1980-ից մինչև օրս ԿՄԿ-ն գլխավորում է շեյխ ուլ-իսլամ Ալլահշյուքյուր Փաշազադեն (Allahşükür Paşazadə): Դավանական համամասնությունը պահպանելու համար վարչության ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվում է սուննի մուֆթի: 1989-ից ԿՄԿ-ում որպես մուֆթի պաշտոնավարում է Հաջի Սալման Մուսանը (Haci Salman Musayev):

2003թ. Կովկասի մուսուլմանների 11-րդ նստաշրջանում Փաշազադեն ցմահ ընտրվեց Ադրբեջանի հոգևոր առաջնորդ՝ Փաշազադեն նան 1993թ. հիմնված Կովկասյան ժողովուրդների բարձրագույն կրոնական խորհրդի (Qafqazya Xalqlar Ali Din Şurası) նախագահն է:

ԿՄԿ համակարգը, կարելի է ասել, ժառանգություն է Ռուսական կայսրության, ապա՝ ԽՍՀՄ շրջանից: Վարչությունն ունի կադիների խորհուրդ (Qazilär Şurası), որը ֆեթվաներ և գանազան վճիռներ հրապարակելու իրավունք ունի: Կառույցի անդամ են 25 կադիներ՝ իսլամական աստվածաբաններ, որոնք, ըստ ԿՄԿ կանոնադրության, ընտրվում են: Ադրբեջանում

<sup>1</sup> В Баку избран пожизненный глава мусульман Кавказа, Независимая газета, <http://www.ng.ru> (06.08.2003).

«պաշտոնական իսլամը» նույնպես պաշտպանում է Երկրի աշխարհիկ բնույթը: Կովկասի մուսուլմանների վարչության խնդիրներից է՝ վերահսկել մզկիթների և վակֆերի գործունեությունը, կրոնական ունեցվածքը, հրատարակվող և ներմուծվող իսլամական գրականությունը, կրոնական կադրերի պատրաստումը, կրոնական սպասավորների նշանակումները և այլն: Ինչպես արդեն նշել ենք, կրոնական կադրեր պատրաստում են Բաքվի համալսարանի իսլամագիտության ֆակուլտետն ու Բաքվի իսլամական համալսարանը, որոնք, բնականաբար, տրամադրում են պետական դիպլոմներ: Նշված հաստատությունների շրջանավարտները կարող են աշխատել նաև պետական հաստատություններում: Անկախությունից ի վեր ադրբեջանցի շատ ուսանողներ աստվածաբանական, իսլամագիտական կրթություն են ստացել իսլամական աշխարհի տարբեր կրթական կենտրոններում, այդ թվում՝ Իրանում, Միրիայում, Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Պակիստանում և այլն: Ադրբեջան վերադարձած շրջանավարտներից շատերը դարձել են իմամներ՝ հիմնականում իրենց վրա կրելով ուսումնական այն կենտրոնների գաղափարական ազդեցությունը, որտեղ սովորել են: Կովկասի մուսուլմանների վարչության գրասենյակը գտնվում է Բաքվի Թազա փիր մզկիթի (Teze Pir mescidi) տարածքում:

Անկախությունից հետո Ադրբեջանում մեծացան օտար կրոնական ազդեցությունները, և բնականաբար՝ Փաշազադեի հա-

<sup>1</sup> Մզկիթը կառուցվել է 1905-1914թթ. Նարաք խանում Աշուրբեկովայի, իսկ նրա մահվանից հետո՝ որդու նվիրատվությունների շնորհիվ: Մինչև 1943թ. Թազա փիթը ծառայել է որպես կինոթատրոն և պահեստ, որից հետո՝ որպես մզկիթ:

մար հեշտ չէր չեզոքացնել Ադրբեջան ներթափանցած շիայականության խոմենիական, ինչպես նաև իսլամի թուրքական և արաբական մեկնաբանությունների այլքը: Սա՝ այն դեպքում, երբ Փաշազադեն այդքան էլ ազդեցիկ չէր հասարակության շրջանում և համարվում էր խորհրդային իշխանություններին ծառայած մարդ<sup>1</sup>: Իր հերթին, հոգևորականությունն առավելապես դիտարկվում էր որպես ոչ գրագետ խավ, որը գոյատևում էր ժողովրդից հանգանակություններ հավաքելով<sup>2</sup>: Անկախության ձեռքբերումից հետո և դեռ երկար ժամանակ ավանդական ու հնացած մեթոդներով առաջնորդվող կրոնի սպասավորներն անկարող էին համարժեքորեն արձագանքել ժամանակի պահանջներին: Այդ հանգամանքը լավագույնս օգտագործեցին իսլամական վերածննդի տարբեր հոսանքներ ներկայացնող հիմնականում օտար միսիոներները, որոնց քարոզներն ավելի գրավիչ էին: Նրանց մեջ կային փայլուն հոետորներ<sup>3</sup>: Հենց նրանք էլ կարողացան այլընտրանք ստեղծել «պաշտոնական հոգևորականությանը»:

ԿՄԿ-ն հասարակական կազմակերպության կարգավիճակ ունի և, բնականաբար, չի կարող վերահսկել Ադրբեջանի ողջ կրոնական դաշտը, քանի որ այդ երկրում ապրում են նաև

<sup>1</sup> Ադրբեջանից հետագոտող Հիբմեթ Հաջիզադեի կարծիքով՝ Փաշազադեն իրականում վայելում է հասարակության 4 տոկոսի հարգանքը: St u Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment. Speakers-Alxey Malashenko, Hikmet Hadji-zadeh, Bayram Balci, Washington, D.C., February 22, 2012, p. 15: 2007թ. հարցախոյզներից մեկի տվյալներով՝ հարցվածների 42 տոկոսը կշել է, որ վստահում է իր երկրի կրոնական ինստիտուտներին: St u Dobroslawia, Victor-Match (2010), էջ 65:

<sup>2</sup> Bedford, Sofie (2009), p.100.

<sup>3</sup> 1990-ականների առաջին կեսին իր կրոնական քարոզներով աչքի էր ընկնում Բաքվում Իրանի Բալանական Հանրապետության դեսպանատան կրոնական կցորդ, հոջարախլիսլամ Ամինդ Օջաթ Նեջադը, ինչպես նաև սալաֆիական քարոզիչ Շեյխ Սալիմ Ջահարնան: St u Goyushov, Altay (2008), p. 75:

ոչ մուսուլման փոքրամասնություններ, մասնավորապես՝ քրիստոնյաներ և հրեաներ: Պետության և կրոնի միջև հարաբերությունների կանոնակարգման, կրոնական համայնքների, կազմակերպությունների և կրոնական պաշտամունքային-ծիսական հաստատությունների գրանցման և Սահմանադրությամբ ամրագրված Դավանանքի ազատության մասին օրենքի դրույթները վերահսկելու համար պատասխանատու է Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը (Dini Qurumlarla İş üzrə Dövlət Komitəsi), որը փոխարինեց կառավարությանը կից կրոնի գործերի վարչությանը<sup>4</sup>: Կառույցը ստեղծվեց Ադրբեջանի նախագահի 2001թ. հունիսի 21-ի հրամանով: 2001թ. հուլիսի 20-ին ընդունվեց ԿԿԱՊՀ կանոնադրությունը: Կառույցը փորձեց հակազդել օտար կրոնական ներթափանցումներին: Խնդիր դրվեց մեծացնել հասարակության շրջանում իսլամական քարոզչության շրջանակները՝ մեծ տեղ հատկացնելով «ադրբեջանական իսլամին», տեղական ավանդույթներին ու արժեքներին, Ադրբեջանում որակյալ կրոնական կադրերի՝ աստվածաբանների և կրոնի սպասավորների պատրաստմանը՝ մեծ տեղ տալով խորհրդային շրջանում և անկախությունից հետո տպագրված իսլամագիտական արևելագիտական գրականությանը:

2014թ. համար սահմանվեցին ԿԿԱՊՀ վեց գերակա ուղղությունները՝ կրոն-պետություն հարաբերությունների կարգավորում, պայքար արմատական խմբավորումների դեմ, կրոնական համայնքներում և հասարակության մեջ ազգային արժեքների, հասարակության մեջ հանդուրժողականության ավան-

<sup>4</sup> Гасанов, Рафаэль (2003), с. 99-100:

դույթների ամրապնդում, ինչպես նաև կրոնական համայնքների ներգրավում<sup>1</sup>:

**«ժողովրդական իսլամը»  
սրբատեղիների երևույթն Ադրբեջանում**

Հարկ է նկատի ունենալ, որ ԽՍՀՄ շրջանում տասնամյակներ շարունակ կրոնի նկատմամբ առկա սահմանափակումներն Ադրբեջանում իսլամի նոր դրսևորումներ ստեղծեցին: Ասվածի ապացույցը «ժողովրդական իսլամն» էր, որի մեջ արտացոլում գտան թե՛ իսլամական և թե՛ նախաիսլամական (առավելապես գրադաշտական և քրիստոնեական) շրջանին բնորոշ ավանդույթներ, ծեսեր, ծիսակարգեր: Այս երևույթը, ընդհանուր առմամբ, բնորոշ էր ոչ միայն Ադրբեջանին, այլև Հյուսիսային Կովկասին ու ԽՍՀՄ իսլամադավան այլ շրջաններին: «ժողովրդական իսլամի» ամենացայտուն դրսևորումներից մեկը կապված էր սրբատեղիներ<sup>2</sup> այցելելու սովորույթի հետ: Համարվում է, որ դրանք մոզական ուժ ունեն, կարող են հրաշքներ գործել, բուժել և ցանկություններ կատարել: Ուխտատեղիները սրբացված մարդկանց, այդ թվում՝ շիա իմամների հետ ազգակցական կապ ունեցող մարդկանց գերեզմաններն են, դամբարանները, նաև բնության առարկաներ՝ բլուրներ կամ ժայռաբեկորներ, առուներ, ծառեր և այլն: Օրինակ, Ալի Այադին («Ալիի ոտքերը»), որ գտնվում է Բաքվից ոչ հեռու՝ Բուզովնայում, սրբատեղիի տիպական օրինակ է: Ալի Այադին ընկած է ժայռի վրա: Ըստ

<sup>1</sup> Госкомитет Азербайджана по работе с религиозными организациями определил направления деятельности в 2014 году. <http://www.trend.az> (14.02.2014).

<sup>2</sup> Սրբատեղիներն Ադրբեջանում կոչվում են մազարներ, իմամզադներ, փիրեր և այլն:

ավանդության, ժայռի վրա գտնվող հետքերը Իմամ Ալիի կամ էլ կրա ձիու ոտքի հետքերն են:

Ադրբեջանում խորհրդային տարիներին սրբատեղիները հանդես եկան որպես այլընտրանքային կրոնական աղբյուրներ կամ նույնիսկ ինքնիշխան կենտրոններ<sup>3</sup>: «Խորհրդային իսլամի» հայտնի ուսումնասիրողներ Ա.Բենինզանեն ու Ս.Վիմբուշը հանգում են այն եզրակացության, որ սրբերը խորհրդային իսլամի տեղական հերոսներն էին, որոնք նպաստում էին, որպեսզի կրոնական էներգետիկան քաղաքից դուրս գա գյուղ, մզկիթից՝ սրբատեղի, ուղղափառ դաշտից դեպի ոչ ուղղափառ դաշտ<sup>4</sup>:

Ադրբեջանում հայտնի մազարներից են Բիրի Հեյբաթը, Էթ Աղա Թուրքեսին, Բաշ Շաբալիդը, Փիր Միր Մովսում Աղան, Բերդայի (Պարտավ) և Գյանջայի Իմամ Ջադենները, Նարդարանի Փիր Սայիդը, Շեյխ Ջայիդի դամբարանը, Խըղըր Ջինդան և այլն<sup>5</sup>: Դեռևս խորհրդային ժամանակներում Ադրբեջանում սրբատեղիներից շատերի շուրջ կառուցվել են իջևանատներ<sup>6</sup>: Այդ ոլորտում աշխատել են գյուղական բնակավայրերի բնակիչներ, մասնավորապես՝ կանայք: Սրբատեղիները եղել են նաև սոցիալական բարեկեցության աղբյուր: 1968թ. 10-15.000 ուխտավոր է այցելել Կիրովաբադի (ներկայումս՝ Գյանջա) Իմամ Ջադեն, Բերդայի Իմամ Ջադեն և Նարդարանի Փիր Սայիդը<sup>7</sup>:

Ադրբեջանում Խորհրդային Միության տարիներին սրբատեղիների նկատմամբ թե՛ վախ կար, թե՛ ակնածանք: Բարձր-

<sup>3</sup> Shu' Grant, Bruce (2001), pp. 654-681.

<sup>4</sup> Sh'u Bennigsen, Alexandre & S. Enders Wimbush (1985).

<sup>5</sup> Сагетховский, Тадеуш (2004).

<sup>6</sup> Bennigsen, Alexandre and S. Enders Wimbush (1985), p. 128.

<sup>7</sup> Նույն տեղում:

աստիճան պաշտոնյաները վախենում էին սրբատեղիներ քանդել՝ սուրբ ուժից չպատժվելու համար<sup>1</sup>: Հատկանշական է, որ խորհրդային տարիներին Բաքվում Գասպից ծովի ափին գտնվող Բիբի շեյխաթ ուխտատեղին պահպանվել է, չնայած նրա մոտ գտնվող մզկիթը 1936թ. Մտալինի օրոք քանդվել է: 1990-ականների վերջին շեյխար Ալինի անմիջական նախաձեռնությամբ և օժանդակությամբ քանդված մզկիթի տեղում կառուցվեց նոր՝ շքեղ մզկիթ, որը պաշտոնապես բացվեց 1999թ.<sup>2</sup>:

Շեռաքրքրական է սրբացված Միր Մովսում Աղայի պատմությունը, ով հայտնի էր իր հրաշագործություններով և մասնավորապես բուժելու շնորհով<sup>3</sup>: Ըստ կենսագրական տվյալների՝ Միր Մովսում Աղան սեյիդ էր՝ սերում էր Իմամ Ալիի սերունդներից: 1930-ականներին խորհրդային իշխանությունները, համարելով, որ նա վտանգ է ներկայացնում պետությանը, որոշել են նրան ձերբակալել: Երբ չեկիստները Մովսում Աղային նստեցրել են ավտոմեքենան, այն անսպասելիորեն խափանվել է, որից հետո նրան տուն են ուղեկցել<sup>4</sup>: Մովսում Աղայի դամբարանը և դրա շուրջ գտնվող մզկիթը Բաքվի Շուվեյան արվարձանում են, որը դարձել է ամենահայտնի սրբատեղիներից մեկը: Այն անվանում են նաև Բաքվի Մեքքա:

<sup>1</sup> Grant, Bruce (2011), p. 671.

<sup>2</sup> Այս համալիրում են թաղված շիայական 7-րդ իմամ Մուսա Ալ-Քազիմի դուստրը Ռեկեմա խանումը և նրա սպասուհի Բիբի շեյխաթը (մորաբույր շեյխաթը):

<sup>3</sup> Օնվել է 1883-ին Բաքվի Հին քաղաքում՝ Բշեքիշեներում: Միր Մովսում Աղայի հայրը Բաքու էր տեղափոխվել իրաքյան Քերբալայից: Հինգ տարեկան հասակում հիվանդացել է պոլիոմիելիտով և չի կարողացել ինքնուրույն քայլել: Բուժել է մարդկանց ձեռքի հոլովով, առանց գուրամ պահանջելու: Հայրենական պատերազմի տարիներին մեծապես օգնել է կարիքավորներին: Կյանքի վերջին տարիներն անց է կացրել անկողնուն գամված: Մահացել է 1950թ. 67 տարեկան հասակում: Նրա հուղարկավորությունը եղել է մարդաշատ և վերածվել է մեծ սգո արարողության:

<sup>4</sup> Grant, Bruce (2011), p. 673.

Նշենք նաև, որ Ադրբեջանում «ժողովրդական իսլամի» անբաղկատելի մասն էին «ոչպաշտոնական» մոլլաները կամ իմամները, ովքեր թեև կրոնական կրթություն չունեին, բայց կրոնական գիտելիքների կրողներ էին կամ էլ հայտնի կրոնական ընտանիքներից էին սերում: Նրանցից շատերը հասցրել էին բավական մեծ հեղինակություն ձեռք բերել: Նրանց մեջ եղել են նաև կանայք:

Հատկանշական է, որ ի տարբերություն խորհրդային Միության մուսուլմանական այլ շրջանների, օրինակ՝ սուննիական մեծամասնությամբ Դադստանի և Չեչնիայի, որտեղ տեղական խորհրդային կառավարիչները Մախաչկալայի Մուսուլմանների հոգևոր վարչության բարձրաստիճան կրոնական ներկայացուցիչների հետ միասին պայքարում էին շիաների շրջանում տարածում ունեցող սրբերի պաշտամունքի և ուխտագնացությունների դեմ, շիայական մեծամասնությամբ Ադրբեջանում նմանատիպ երևույթներ ավելի քիչ են արձանագրվել<sup>5</sup>: Ադրբեջանում իսլամական ավանդույթների որոշակի պահպանմանը ըստ ամենայնի նպաստել է նաև շիա իսլամին բնորոշ թակիայի կամ հավատքի գիտակցական կոնսպիրացիայի կիրառումը<sup>6</sup>:

Ադրբեջանում ուխտատեղիներ այցելելու գործառույթը ներկա փուլում ևս շարունակվում է: Գյուղական շատ բնակավայրեր ունեն իրենց սրբատեղիները: Մազարներ այցե-

<sup>5</sup> Motika, Raoul (2001 a), p. 287.

<sup>6</sup> Bennigsen, Alexandre & Wimbush, S. Enders (1985), p.129.

<sup>7</sup> Թակիյան շիա իսլամի սկզբունքներից է, որը հնարավորություն է տալիս առերես ուրանալ հավատքը կամ թաքցնել կրոնական համոզմունքները, եթե դա վտանգում է հավատացյալի կյանքն ու գույքը՝ սպասելով հարմար ժամի: Թակիյայի սկզբունքը գործադրվել է դեռևս միջնադարում՝ մուսուլմանների մեջ փոքրամասնություն կազմող շիաներին փրկվելու հնարավորություն տալով:

լուծյալների մեծ հոսքը ստիպում է գործարարներին ներդրումներ կատարել՝ ընդլայնելով սրբատեղիներին կից համալիրները, որտեղ առավելապես աշխատում և այցելում են կանայք<sup>1</sup>:

### *Իսլամի ընկալումները և իսլամական վերածնունդն Ադրբեջանում*

Վերջին տարիներին Ադրբեջանում հասարակական գիտակցության մեջ կրոնական ընկալումները զգալիորեն փոխվել են: Մեծացել է իսլամի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը հատկապես երիտասարդության շրջանում: Որոշակիորեն ընդլայնվել են կրոնական պատվիրաններին հետևող հավատացյալների, ինչպես նաև իսլամի մասին գիտելիքի շրջանակները: Իսլամը դարձել է ոչ միայն Ադրբեջանի հասարակական կյանքի կարևոր գործոններից մեկը, այլև լուրջ հենք նոր ձևավորված ինքնությունների համար: Ադրբեջանցիների ծանրակշիռ մասն իրեն համարում է մուսուլման՝ չնայած կրոնի ոչ համապարփակ իմացությանը: Դա է պատճառը, որ Ադրբեջանի մուսուլմաններին, ինչպես նշել ենք, շատ դեպքերում անվանում են «մշակութային մուսուլմաններ» կամ «աշխարհիկ մուսուլմաններ»:

2001-ին Ադրբեջանում իսլամի ընկալումների վերաբերյալ ուշագրավ վերլուծություն հրատարակեց Բաքվի Սոցիալական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի հետազոտող Թ.Ֆարադովը: Ըստ այդմ՝ Ադրբեջանում ծնունդով մուսուլման բնակչության մեջ ոչ բոլորն են իրենց համարել մուսուլման: 10.4

<sup>1</sup> Gantt, Julian, Implications of Shrines for Rural Developments in Azerbaijan (executive summary), [http://www.scribd.com/fullscreen/127591791?access\\_key=key-1qyaciizk4nrd8hgyhw&allow\\_share=true](http://www.scribd.com/fullscreen/127591791?access_key=key-1qyaciizk4nrd8hgyhw&allow_share=true)

տոկոսն իրեն համարել է ազնուսիկ, 7.1 տոկոսը՝ անհավատ, 3.8 տոկոսը՝ խոր աթեիստ, 8.6 տոկոսն անտարբեր է եղել նշված իրողություններին<sup>1</sup>: Ըստ նույն հարցման՝ 6.3 տոկոսն ասել է, որ կյանքի բոլոր իրավիճակներում հետևել է կրոնական պատվիրաններին, 19.9 տոկոսն իրականացրել է պատվիրանները մասնակիորեն, 16.2 տոկոսը փորձել է առավելագույնս իրականացնել դրանք, իսկ 57.6 տոկոսն ընդհանրապես չի իրականացրել դրանք<sup>2</sup>: Ըստ նույն հարցման՝ ամենօրյա աղոթքը համարվել է մուսուլմանների ամենակարևոր պարտավորություններից մեկը: Սակայն հարցվածների միայն 17.7 տոկոսն է նշել, որ աղոթում է: 82.3 տոկոսը բացասական պատասխան է տվել: Սոցիալական տվյալներով՝ 28.6 տոկոսը Ռամադան ամսին ծոմ է պահել<sup>3</sup>:

Սոցիալական մեջ կան այլ հետաքրքիր տվյալներ ևս, որոնք բացահայտում են Ադրբեջանում 2000-ականներին կրոնասիրության աստիճանը: Իսլամում արգելված մուլխաղերով չի զբաղվել հարցվածների 76.3 տոկոսը: Խոզի միս չի օգտագործել 59.8 տոկոսը, ալկոհոլ՝ 52.6 տոկոսը: Ժամանակ առ ժամանակ մզկիթ է հաճախել հարցվածների 35.1 տոկոսը, 32.8 տոկոսն ընդհանրապես չի հաճախել մզկիթ, իսկ տոն օրերին հաճախողները կազմել են 23.1 տոկոս: Հաճախակի մզկիթ է այցելել հարցվածների 6.4 տոկոսը, իսկ ամեն ուրբաթ՝ 2.6 տոկոսը<sup>4</sup>:

Հարցվածների 58.7 տոկոսը նշել է, որ պատկերացում ունի շարիաթի մասին: 16.8 տոկոսը նշել է, որ բավական լավ է տիրա-

<sup>1</sup> Faradov, Tair (2001), p. 28.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

պետում դրան, 18.4 տոկոսն ընդհանրապես անտեղյակ է եղել: 6.1 տոկոսը նշել է, որ շատ լավ է տիրապետում շարիաթին<sup>1</sup>:

2000-ին հասարակական ընկալումներում իսլամի վերաբերյալ մեկ այլ ուսումնասիրություն իրականացրեց Քաղաքական հետազոտությունների և հասարակական կարծիքի աղբյուրների ինստիտուտը՝ հիմք ընդունելով Ադրբեջանի տարբեր շրջաններից 500 հարցվածների պատասխանները: Հասարակության մեջ իսլամի դերակատարության վերաբերյալ պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. իսլամն ամրապնդում է հասարակության հիմքերը՝ 50 տոկոս, կրոնի դերը հասարակության զարգացման հարցում աննշան է՝ 36 տոկոս, կրոնը խանգարում է ամրապնդելու հասարակության հիմքերը՝ 3 տոկոս, կրոնը թուլացնում է հասարակության հիմքերը՝ 2 տոկոս<sup>2</sup>:

Հետազոտությունը նաև փորձել է բացահայտել, թե որոնք են իսլամի նկատմամբ հետաքրքրության պատճառները. հարցվածների 38 տոկոսի կարծիքով՝ հասարակության մեջ կրոնական արժեքների բարձր գնահատականը, 28 տոկոսի կարծիքով՝ կրոնական կառույցների կողմից մարդկանց ցույց տրվող սոցիալական աջակցությունը, 17 տոկոսի կարծիքով՝ կրոնի մոդայիկ դառնալը, 11 տոկոսի կարծիքով՝ իսլամական քարոզչությունը<sup>3</sup>:

Հետազոտության մեկ այլ կարևոր հատված կապված է Ադրբեջանում «քաղաքական իսլամի» հետանկարի հետ: Հարցվածների 62 տոկոսը բացասաբար, իսկ 27 տոկոսը դրական է վերաբերվել քաղաքականության մեջ իսլամի դերակատարությանը<sup>4</sup>:

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Гасанов, Рафаэль (2003), с. 100.

<sup>3</sup>Նույն տեղում:

<sup>4</sup>Նույն տեղում:

Միջազգային ճգնաժամային խմբի՝ Ադրբեջանում իսլամի վերաբերող 2008թ. զեկույցում ներկայացված է 2006թ. մեկ այլ հարցախույզ, որի տվյալներով՝ օրինապահ հավատացյալները բնակչության 7,2 տոկոսն են: 49.7 տոկոսը հավատում է Աստծուն, սակայն գործնականում չի իրականացնում իսլամի պատվիրանները՝ հավատալով, որ իսլամական ինքնությունն առավելապես հիմնված է մշակույթի և էթնիկության, քան կրոնի վրա<sup>1</sup>:

Հստ Ռ.Մոթիքայի՝ օրինապահ հավատացյալներ են Ադրբեջանի բնակչության 4-6 տոկոսը, նրանք, ովքեր կատարում են իբրադայի պահանջները: Հարցվածներից իրեն մուսուլման համարող 87-92 տոկոսից կրոնական պատվիրանները կատարել է միայն մի շատ քիչ մասը, իսկ 3 տոկոսն իրեն համարել է աթեիստ<sup>2</sup>:

Ադրբեջանում կրոնասիրության վերաբերյալ ուշագրավ են 2012թ. Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնի (CRRC)՝ Ադրբեջանում իսլամի վերաբերյալ անցկացված հարցախույզի տվյալները<sup>3</sup>: Նշված հետազոտությունն ի ցույց է դնում, որ օրինապահ հավատացյալները, որոնք բնորոշվում են մզկիթներ հաճախելով ու ծոմ պահելով, ցածր տոկոս են կազմել: Միայն 10 տոկոսն է, որ շարաթվա կամ ամսվա կտրվածքով հաճախել է մզկիթ: 34 տոկոսը մզկիթ է հաճախել հատուկ՝ տոն օրերին, 54 տոկոսը հաճախել է հազվադեպ կամ երբեք: 16 տոկոսը նշել է, որ միշտ կամ հաճախակի ծոմ է պահել, 69 տոկոսը՝ հազվադեպ կամ երբեք: Շուրջ 20 տոկոսն ասել է, որ շատ կամ բավական կրոնասեր է, 34 տոկոսը նշել է, որ իր կենսակերպով ավելի

<sup>1</sup> International Crisis Group (2008).

<sup>2</sup> Motika, Raoul (2001), p. 285:

<sup>3</sup> Islam in Azerbaijan: A Sectarian Approach to Measuring Religiosity.

<http://crcc-caucasus.blogspot.com/2013/10/islam-in-azerbaijan-sectarian-approach.html>

կրոնասեր է, քան հակառակը, 41 տոկոսը նշել է, որ շատ կրոնասեր չէ կամ երբեք կրոնասեր չէ: Հետաքրքիր է, որ հարցվածների 80 տոկոսի համար կրոնը շատ կամ բավական կարևոր տեղ ունի իրենց առօրյա կյանքում, իսկ 20 տոկոսի համար կրոնը ոչ շատ կամ ընդհանրապես կարևոր տեղ չի զբաղեցրել առօրյայում<sup>1</sup>:

2012թ. Բաքվում գործող Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը հրապարակեց «Իսլամն Ադրբեջանում» հարցախույզի տվյալները (հարցվածների թիվը՝ 2000): Ըստ այդմ՝ 30.2 տոկոսն իրեն համարել է օրինապահ, իսկ 66 տոկոսը՝ պարզապես հավատացյալ: Հարցվածների 10.3 տոկոսը նշել է, որ վերջին հինգ տարում սկսել է ավելի շատ հավատալ, քան դրանից առաջ: Հարցվածների 1/5-ը կամ 21.8 տոկոսը նշել է, որ իսլամի մասին գիտելիք փորձել է ձեռք բերել առավելապես կրոնական գրքերից, քան Ղուրանից, 16 տոկոսը՝ Ղուրանից, 27.2 տոկոսը՝ հեռուստատեսությունից, 34.4 տոկոսը՝ ընկերներից և ընտանիքից, 34.2 տոկոսը՝ թաղման ծեսերի ժամանակ, 10.4 տոկոսը՝ կրոնական վայրերում (ներառյալ մզկիթներ)<sup>2</sup>:

Հարցախույզն ի ցույց է դնում, որ հասարակության մեծ մասը ոչ հավաստի աղբյուրներից է փորձել տեղեկություններ ստանալ իսլամի մասին: Չնայած կրոնական գիտելիքի հարցում որոշակի առաջընթացին՝ Շահին Հասանլիի կարծիքով՝ անկախությունից 20 տարի անց ադրբեջանցիները դեռևս քիչ գիտելիք ունեն իսլամի և դրա գործառնական մասին<sup>3</sup>:

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup>Shiriyev, Zaur, Islam in Azerbaijan. Unity and Diversity, <http://www.todayszaman.com> (20.10.2012).

<sup>4</sup>Islam in Azerbaijan: A Sectarian Approach to Measuring Religiosity,

<http://crre-caucasus.blogspot.com/2013/10/islam-in-azerbaijan-sectarian-approach.html>

Նույն հարցախույզում հարցվածների 50 տոկոսից ավելին նշել է, որ ծով չի պահել, բայց ծրագրել է ապագայում անել դա, 57 տոկոսը չի աղոթել, 42 տոկոսը մզկիթ չի հաճախել, 32 տոկոսը մզկիթ այցելել է միայն Մուհարրամ ամսին, այսինքն՝ Աշուրայի միջոցառմանը մասնակցելու: 50 տոկոսից ավելին նշել է, որ կողմ է աշխարհիկ պետությանը: Միայն հինգ տոկոսն է կողմ եղել կրոնապետությանը: 46 տոկոսն աջակցել է գլխաշորի արգելքին<sup>4</sup>:

Ի դեպ, Ադրբեջանում աճող կրոնասիրության ապացույցներից է կրոնական գլխաշոր (հիջաբ) կրող աղջիկների և կանանց քվաքանակի անընդհատ աճը: Նշենք, որ թե՛ աշակերտուհիներին և թե՛ ուսուցչուհիներին արգելվում է կրոնական գլխաշորով հաճախել դպրոց: Ժամանակ առ ժամանակ գլխաշորի արգելքի դեմ Ադրբեջանում տեղի են ունեցել ելույթներ: Գլխաշորով աղջիկներն ու կանայք Ադրբեջանում շատ դեպքերում հրաժարվել են առանց հիջաբի նկարվել անձնագրի համար, որի պատճառով բախվել են տարաբնույթ խնդիրների<sup>5</sup>:

Այս երևույթն, ի դեպ, տարածում ունի նաև աշխարհիկ համարում ունեցող Բաքվում, որտեղ Ստալինի օրոք 1930-ականներին կանգնեցվեց առանց գլխաշորի կնոջ հայտնի արձանը<sup>6</sup>: Կրոնական գլխաշորի հարաճուն ընդլայնման փաստը մտահոգում է Բաքվի աշխարհիկ հասարակությանը և պետությանն՝ առհասարակ: Ասվածի ապացույցն Ադրբեջանում կանանց իրավապաշտպան հասարակական կազմակերպություն-

<sup>4</sup>Shiriyev, Zaur, Islam in Azerbaijan. Unity and Diversity, <http://www.todayszaman.com> (20.10.2012).

<sup>5</sup>Parideh, Heyat (2002).

<sup>6</sup>Արձանը քանդակվել էր ի հիշատակ մի կնոջ, որի հայրը սպանել էր նրան, երբ տեսել էր առանց գլխաշորի: Արձանում կինը նայում է դեպի հորիզոնները:

ներից մեկի նախագահ Ն.Ջաֆարովայի՝ 2007թ. արտահայտած մտահոգությունն է: Ըստ այդմ՝ տասը տարի առաջ իրենք չէին էլ կարող ենթադրել, որ իսլամն իրականում կարող է խնդիրներ առաջացնել Աղրբեջանի համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պահպանել խորհրդային շրջանի ձեռքբերումները, այլապես կրոնականացումն Աղրբեջանը հետ կտանի դեպի չադրան, իրենք կունենան Իրանի կանանց ճակատագիրը<sup>1</sup>:

Այս տեսանկյունից հետաքրքրական մի դեպք է արձանագրվել 1992թ. ամռանը, երբ Աղրբեջան է ժամանել իրանուհիների քսաներկու հոգանոց մի պատվիրակություն (բոլորը գլխաշորով և մարմինը ծածկող երկար սև հագուստներով): Նրանց ամենուր զարմանքով են ընդունել: Խմբի ղեկավարը իմամ Խոմեյնիի դուստրն էր՝ Ջահրա Մոստաֆավի: Միջին տարիքի աղրբեջանցի մի կին հետաքրքրվում է, թե արդյոք այդ շոգ ամռանը այդ հագուստն անհարմար չէ: Նրանցից մեկը պատասխանել է, որ ի տարբերություն ամռան տապի, դժոխքի կրակը շատ ավելի վառող է նրանց համար, ովքեր կփորձեն չենթարկվել Աստծո պատվիրաններին: Աղրբեջանցի կինը պատասխանել է. «Ինչ դաժան Աստված ունեք դուք, իսլամի իմ իմացած Աստվածը շատ ավելի բարի է կանանց նկատմամբ»<sup>2</sup>:

Այն, որ վերջին տարիներին կրոնապիրությունն Աղրբեջանում տարածում է գտել, ապացուցվում է մի շարք փաստերով: 1997թ. Բաքվում 13 տարեկան աշակերտուհին դպրոց է գնացել գլխաշորով: Ասել է, որ դարձի է եկել, սակայն դպրոցի տնօրենը նրան թույլ չի տվել այդ կերպ ներկայանալ: Աշակերտուհին

<sup>1</sup> Heyat, Farideh (2008) pp. 361–376.

<sup>2</sup> Tohidi, Nairi (2002) p. 10.

սպառնացել է ինքնահրկիզվել, եթե իրեն ստիպեն հանել գլխաշորը<sup>3</sup>: Իսկ Մասալիի շրջանում հանգուցյալ կնոջ տապանաբարի՝ նախկին բաց գլխով նկարը հարագատները որոշել են «սրբազրել» գլխաշորով<sup>4</sup>:

Կրոնական գլխաշոր կրող մի խումբ աղրբեջանուհիներ սոցիալական ժամանակ ընդգծել են, որ այդ կերպ իրենց ավելի ինքնավստահ և ուժեղ են զգում, դա նաև միջոց են համարել հոգևոր առումով բավարարված և հավասարակշիռ կյանք վարելու, անձնական դժվարություններն ու ճգնաժամերը հաղթահարելու համար<sup>5</sup>: Իսկ աշխարհիկ մի շարք կանայք նշել են, որ չնայած չեն իրականացրել իսլամում ամրագրված կրոնական պարտավորությունները և գլխաշոր չեն կրել, բայց իրենց համարել են լիարժեք մուսուլման և հավատացած են եղել, որ աշխարհիկ կենսակերպը չի կարող ստվեր գցել մուսուլմանի իրենց նկարագրի վրա<sup>6</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ գլխաշորի հարցն Աղրբեջանում անմիջականորեն առնչվում է նաև այստեղ գոյություն ունեցող կանանց (ֆեմինիստական) շարժումների հետ: Անկախությունից հետո միջազգային ֆեմինիստական շարժման արևմտյան և իսլամական օրակարգերը<sup>7</sup> վճռորոշ նշանակություն

<sup>1</sup> Гаджи-Заде, Хитмет (1998), Свобода совести в Азербайджане. Центральная Азия и Кавказ, No. 16.

<sup>2</sup> Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, [http://carnegieendowment.org/files/022212\\_transcript\\_poli-islam-12.pdf](http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf)

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Najatizadeh, Mehrangiz (2012).

<sup>5</sup> Ֆեմինիստական շարժման իսլամական մոտեցումների մասին մանրամասն տե՛ս Badran, Margot (2009) *Feminism in Islam: Secular and Religious Convergences*, Oneworld publications, Oxford, England.

ունեցան Ադրբեջանում կանանց հիմնախնդիրների գաղափարախոսական հենքերի ձևավորման հարցում<sup>1</sup>: Որոշակի թափ ստացավ կանանց հասարակական կազմակերպությունների ձևավորման գործընթացը<sup>2</sup>: Թե՛ ազատական գաղափարներ ունեցող արևմտյան և թե՛ իսլամի արդի մեկնաբանություններով ծանրաբեռված օրակարգերը նպաստեցին կանանց սոցիալիզացիային և քաղաքացիական ակտիվությանը, սակայն տարբեր արժեքային համակարգերի շրջանակներում և տարբեր դրսևորումներով<sup>3</sup>:

Ադրբեջանում գլխաշորի տարածմանը բավականաչափ նպաստել է նաև Իրանի և Թուրքիայի կրոնական ազդեցությունը, այդ թվում՝ թուրքական որոշ ֆիլմաշարերի ցուցադրությունը: Առանձին տեսակետների համաձայն՝ գլխաշորը շատ դեպքերում դիտարկվում է որպես նորաձևության միջոց: Ամեն պարագայում, կրոնական գլխաշոր կրող կանանց և աղջիկների թվի հարաճուն ավելացումը մատնանշում է վերափոխվող ինքնության փաստը: Այդ իմաստով, հիջաբն Ադրբեջանում կարելի է համարել նոր ինքնության դրսևորում, որպես այդ երկրում կրոնասիրության և իսլամական վերածննդի կարևոր ցուցիչ: Գլխաշորի հարցն Ադրբեջանի հասարակական կյանքի բաղկացուցիչներից է և կարող է դառնալ բողոքի և ընդվզման խորհրդանիշ:

Հատկանշական է, որ ներկայումս Ադրբեջանում գործում են կրպակներ, որտեղ վաճառվում են հիջաբներ, կրոնական չափորոշիչներին համապատասխանող հագուստներ, կրոնա-

<sup>1</sup> Osuli, Niloofer (2011) pp. 44-50.

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Tohidi, Nairi (2004).

<sup>3</sup> Tohidi, Nairi (2002), pp. 4-6.

կան արքեսուարներ, նաև՝ Ղուրանի ընթերցումներ, կրոնական դասընթացներ ու կրոնական արարողություններ բովանդակող ձայնասկավառակներ: Վերջին շրջանում Ադրբեջանում սկսել է գործել նաև իսլամական սկզբունքներին համապատասխանող սննդամթերք վաճառող «հալալ սննդի» խանութների ցանցը<sup>4</sup>:

Ադրբեջանում իսլամի պատվիրաններին հետևող օրինապահ հավատացյալների և կրոնական գլխաշոր կրողների թվաքանակի մասին դժվար է ստույգ փաստեր մատնանշելը, քանի որ կան բազմաթիվ և հակասական տվյալներ: Բարձրում գործող Տնտեսական և քաղաքական հետազոտությունների կենտրոնի (FAR Center) համահիմնադիր և փոխնախագահ Հիքմեթ Հաջիզադեն նշում է (2012թ.), որ իրենց կենտրոնի անցկացրած հարցախույզին մասնակցածների 96 տոկոսը (հիմնականում երիտասարդներ) արձանագրել է, որ մուսուլման է, բայց նրանց միայն 13-15 տոկոսն է իրեն համարել օրինապահ հավատացյալ, «ինչը նշանակում է, որ նրանք նամազ են անում, գիտեն ամեն ինչ Ղուրանի մասին, նրանք հետաքրքրվում են, նրանք ակտիվ են և այլն»<sup>5</sup>: Հաջիզադեն նաև նշում է, որ ազգային որոշ հարցախույզների տվյալների վրա հենվելով, կարելի է ասել, որ օրինապահ հավատացյալները կազմում են բնակչության 20 տոկոսը<sup>6</sup>: Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն փաստը,

<sup>4</sup> «Հալալ սնունդը» նկատի է առնում սնունդ՝ իսլամական չափորոշիչներով: Օրինակ, իսլամը թույլատրում է միայն մորթված անասունի մսի վաճառքը: Հատկանշական է, որ 2014թ. ապրիլից պետությունը տեղական չորս ընկերության հալալ սնունդ արտադրելու արտոնագրեր է տրամադրել: Azerbaijan's four halal food producers get certification, <http://www.azernews.az> (11.04.2014).

<sup>5</sup> Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus. Carnegie Endowment, [http://carnegieendowment.org/files/022212\\_transcript\\_poli-islam-12.pdf](http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf)

<sup>6</sup> Նույն տեղում:

որ աղբբեջանցիների մեծ մասն իրեն հավատացյալ կամ մուսուլման է համարում առանց իսլամի մասին համապարփակ պատկերացում ունենալու: Շատերը տանը Ղուրան ունեն, որը չեն կարդացել<sup>1</sup>:

Այսպիսով, անկախությունից ի վեր անցկացված այն բոլոր հետազոտությունները, որոնք փորձել են բացահայտել Աղբբեջանում կրոնասիրության աստիճանը, աղբբեջանական ինքնության մեջ իսլամի դերը, իսլամի գործառման ու առնչակից այլ խնդիրներ, ի ցույց են դնում, որ Աղբբեջանում վերջին տարիներին մեծ թափ են ստացել իսլամական վերածննդին միտված շարժումները: Նկատվել են իսլամի նկատմամբ աճող հետաքրքրություն, կրոնասիրության շարունակական աճ, ինչպես նաև իսլամական արժեքների ու կենսակերպի աստիճանական որդեգրում: Ասվածի ապացույցն է օրինապահ հավատացյալների, իսլամական ինքնությամբ աչքի ընկնողների և իսլամական սկզբունքները մասամբ իրականացնողների թվի ավելացումը: Աղբբեջանում հասարակության առանձին շրջանակներ առաջ են քաշել իսլամը պետական կրոն հռչակելու, իսլամական առանձին սկզբունքներ օրենսդրական դաշտ մտցնելու, իսլամի նշանակությունը հասարակական կյանքում ընդլայնելու գաղափարներ: Հարց է բարձրացվել բազմակնության և շիա իսլամում ամրագրված ժամանակավոր բնույթ կրող ամուսնության՝ սի-դայի վերաբերյալ օրենք մտցնելու մասին<sup>2</sup>:

<sup>1</sup> Dobrosława, Wictor-Match (2010), p. 61.

<sup>2</sup> Азербайджан: Многоженство - нездоровое желание некоторых представителей общественности?, <http://www.centrasia.ru> (05.01. 2005).

### *Արտաքին ազդեցություններն Աղբբեջանում իսլամը վերածննդու հարցում*

Գտնվելով իսլամական աշխարհի հարևանությամբ՝ Աղբբեջանն անկախություն ձեռք բերելուց հետո թիրախ դարձավ արտաքին իսլամական ներթափանցումների համար: Աղբբեջանում իրենց քաղաքական և կրոնական ազդեցությունը տարածեցին մի շարք ուժային կենտրոններ, առաջին հերթին՝ Իրանը, Թուրքիան, Օսցի սուննիական արաբական միապետությունները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, Բուվեյթը, Կատարը (որոնց ազդեցությունն Աղբբեջան սկսեց ներթափանցել առաջին հերթին Դադստանի ու Չելչիլայի, նաև՝ Կենտրոնական Ասիայի միջոցով): Արտաքին ազդեցությունները (թուրքական-սուննիական, իրանական-շիայական և արաբական-սալաֆիական) նպաստեցին ոչ միայն Աղբբեջանում, այլև ընդհանրապես ԽՍՀՄ մուսուլմանական շրջաններում իսլամական վերածննդի խթանմանը և որոշակիորեն վերածննդին ազգային իսլամը: Կրոնական հոսանքներն Աղբբեջան էին ներթափանցում ամենատարբեր ճանապարհներով<sup>3</sup>:

Իրանի և Թուրքիայի համար նորանկախ Աղբբեջանը դարձավ ոչ միայն ավանդական մրցակցության դաշտ, այլև շիա և սուննի իսլամի քարոզչության պարարտ հող, իսկ սուննիական առանձին միապետությունների համար՝ սուննի-սալաֆիականության արտահանման երկիր: Թե՛ Թեհրանը, թե՛ Անկարան և թե՛ Օսցի որոշ պետություններ Աղբբեջանում սկսեցին ներդնել ֆինանսական ծավալուն միջոցներ՝ մզկիթների նորոգման և

<sup>3</sup> Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, [http://carnegieendowment.org/files/022212\\_transcript\\_poli-islam-12.pdf](http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf)

կառուցման, կրթական և մշակութային հաստատությունների ստեղծման, կրոնական կադրերի պատրաստման, ինչպես նաև աղբրեջանցի փախստականներին օգնելու համար՝ Աղբրեջան ուղարկելով սեփական քարոզիչներին, զուգահեռաբար կազմակերպելով աղբրեջանցի ուսանողների կրթությունն արտերկրում: Միջազգային իսլամական կենտրոնները հաստակապես ակտիվ էին մարզինալ և սոցիալապես անապահով խավերի շրջանում:

1989-2010թթ. Աղբրեջանում կառուցվել է 595 մզկիթ, որից 150-ը՝ օտար դրամաշնորհներով: Նրանցից 63-ը բաժին է ընկնում Քուվեյթին, 24-ը՝ Թուրքիային, մնացածները՝ Սաուդյան Արաբիային, Իրանին, Կատարին և այլն<sup>1</sup>:

Փաստորեն, անկախությանը հաջորդած շրջանում արտաքին իսլամական ներթափանցումների հարցում Աղբրեջանը կարծես վարում էր «բաց դռների» քաղաքականություն, որին նպաստեցին անկախությանը հաջորդած շրջանին բնորոշ քաղաքական վայրիվերումները, Ղարաբաղյան պատերազմը, փախստականների խնդիրը և այլն<sup>2</sup>: Անկախությունից հետո Աղբրեջանի դռները բացվեցին իսլամական երկրների առաջ, որոնց հետ Աղբրեջանը համագործակցում էր ամենատարբեր, այդ թվում՝ կրոնական ոլորտում:

#### *Ա. Իրանի կրոնական ազդեցությունն Աղբրեջանում*

Աղբրեջանի անկախացումից հետո Իրանը ցանկանում էր ամեն գնով իր ազդեցությունը տարածել Աղբրեջանում՝ հաշվի առնելով այս երկրամասի հետ ունեցած պատմական, կրոնական և

մշակութային դարավոր կապերը: Աղբրեջանի հետ հարաբերությունների սերտացումը հնարավորություն կտար Իրանին նվաճել նոր շուկա, շահեկանորեն համագործակցել Կասպից ծովի խնդիրների շուրջ, ի դեմս Աղբրեջանի ձեռք բերել քաղաքական նոր դաշնակից՝ ուժեղացնելով շիայական տանդեմը, տարածաշրջանի համար Թուրքիայի հետ ունեցած մրցակցության մեջ առավելություն ձեռք բերել, սերտացնել կապերն Աղբրեջանի իրանական ծագում ունեցող ժողովուրդների՝ թալիշների ու թաթերի հետ, տարածել խունեյնիական գաղափարները, նաև՝ հակազդել Իրանական Աղբրեջանի (Մտրպատականի) հարցի շուրջ շահարկումներին<sup>3</sup>:

Աղբրեջանի անկախությունից հետո, չնայած ամենատարբեր ոլորտներում Իրանի հետ ձևավորված բազմակողմ համագործակցությանը, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ երկկողմ հարաբերություններում ի հայտ էին գալիս լարվածության օջախներ: Իրանը դիտարկվում էր որպես ոչ վստահելի գործընկեր, որը ոչ միայն ձգտում էր Աղբրեջանում տարածել իր կրոնական և քաղաքական ազդեցությունը, այլև համագործակցում էր Հայաստանի հետ այն պարագայում, երբ Աղբրեջանն ու Թուրքիան շրջափակման մեջ էին պահում Հայաստանը՝ Ղարաբաղյան հարցում ճնշումներ գործադրելու նպատակով:

Աղբրեջանում Իրանի կրոնական ազդեցությունն առավելապես ուժեղ էր 1990-ականների առաջին կեսին: Այս փուլում Իրանի համար ավելի հեշտ էր ներթափանցել և գործել Աղբրեջանում՝ կապված անցումային շրջանի խնդիրների հետ: Այս

<sup>1</sup> Юнусов, Ариф (2012), с. 13.

<sup>2</sup> Farideh, Heyat (2008).

<sup>3</sup> Кудиев, Эльмир (2005), с. 165.

ժամանակահատվածում Ադրբեջանը, կարելի է ասել, հեղեղված էր իրանցի միսիոներներով, իրանական բարեգործական և կրոնական կազմակերպություններով: 1993-ից Ադրբեջանում ակտիվորեն գործում էր «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամի» (Imam Xomeyni adına İmdad Komitəsi) մասնաճյուղը: 2001թ. տվյալներով՝ հիմնադրամի Ադրբեջանի տարածքում ունեցել է 145 գրասենյակ<sup>1</sup>: 2005թ. տվյալներով՝ Իրանը նշված հիմնադրամի միջոցով մոտ 25 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն է տրամադրել Ադրբեջանին՝ օգնելով կարիքավոր մարդկանց, ուսանողներին, փախստականներին, գործազուրկներին և այլն: Հիմնադրամը գործել է Ադրբեջանի 19 քաղաքներում<sup>2</sup>: 2014թ. հունվարին «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամը», այդ թվում՝ «Իմամ Ալի» բարեգործական հիվանդանոցը, դադարեցրին իրենց գործունեությունն Ադրբեջանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանն այլևս չունի սոցիալական այնպիսի խնդիրներ, ինչպես անկախությունից հետո: Այդ մասին հայտարարեց Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհսեն Փաքայեներ՝ նշելով, որ հիմնադրամը 20 տարվա ընթացքում Ադրբեջանում ծախսել է 43 միլիոն դոլար<sup>3</sup>:

Հետանկախության շրջանում Իրանն աջակցում էր նաև իրանամետ կրոնաքաղաքական կառույցների ստեղծմանն ու գործունեությանը, որոնցից ամենահանգուցայինն Ադրբեջանի իսլամական կուսակցությունն էր:

<sup>1</sup> Valiyev, Anar (2005 b).

<sup>2</sup> Кулиев, Эльмир (2005), с. 166.

<sup>3</sup> Imam Khomeini Relief Foundation representation closes in Azerbaijan (by Jafarov, Temkin), <http://www.trend.az> (28.01.2014).

Արդեն Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանում Ադրբեջանի ազգային անվտանգությունը փորձեց հակազդել իրանական կրոնական և քաղաքական քարոզչությանը: Ինչպես նշել ենք, 1995-ին Ադրբեջանի իշխանությունները կասեցրին Ադրբեջանի իսլամական կուսակցության գործունեությունը՝ Իրանի հետ ունեցած կապերի, լրտեսության և այնտեղից ֆինանսավորվելու մեղադրանքով: Լուրջ հակահարված հասցվեց Ադրբեջանում Իրանի աջակցությամբ ստեղծված «Հիզբալլա-հին», որին 2000թ. իշխանությունները մեղավոր համարեցին ադրբեջանցի հայտնի գիտնական Ջիա Բունիաթովի սպանության (1997թ. փետրվար) մեջ<sup>4</sup>: 2001թ. փակվեցին իրանական բոլոր 22 մեդրեսները<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում Իրանի կրոնական և քաղաքական ազդեցության նվազման կամ չեզոքացման համար, բացի պետության իրականացրած կոշտ մեթոդներից, այլ պատճառներ ևս կային, նախևառաջ՝ ադրբեջանական հասարակության առավելապես աշխարհիկ բնույթը, հասարակության շրջանում խոմեյնիզմի գաղափարների ոչ լայն ժողովրդականությունը, Բաքվի թուրքամետ և արևմտամետ կողմնորոշումը, իրանական կրոնական ազդեցության դեմ «պաշտոնական իսլամի» հակազդեցությունը, որին, բնականաբար, աջակցում էր պետությունը<sup>6</sup>:

Թեև այն հանգամանքին, որ Ադրբեջանի ազգային անվտանգությանը հաջողվեց չեզոքացնել Իրանի կրոնական և

<sup>4</sup> «Հիզբալլան» Ջիա Բունիաթովի նկատմամբ մահվան դատավճիռ էր սահմանել դեռևս 1996-ին՝ նրան մեղադրելով իսրայելական Մոսադի գործակալ լինելու և Ադրբեջանում սինիզմը տարածելու մեջ:

<sup>5</sup> International Crisis Group (2008).

<sup>6</sup> Балджи, Байрам (2006), с. 84.

քաղաքական ազդեցությունը, ամեն պարագայում, իրանական գործոնը շարունակում է այսօր էլ որոշակի դերակատարություն ունենալ Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրոնական դաշտում: Իրանը կարողացավ Ադրբեջանում հենք ստեղծել շիայական չափավոր և արմատական կրոնաքաղաքական ակտիվության և ընդհանրապես «քաղաքական իսլամի» զարգացման համար: Շիայական արմատական տրամադրությունների հեռակետն ու կենտրոնը դարձավ Ապշերոնի թերակղզում գտնվող Նարդարան ավանը: (Նշենք, որ բացի Ապշերոնից, շիայական ավանդույթներն ամուր հիմքեր ունեն նաև հարավային շրջաններում և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում)<sup>1</sup>:

Ադրբեջանի հասարակական որոշ շրջանակներում շարունակում են մեծ հեղինակություն վայելել իրանցի որոշ այաթուլաներ, ինչպես, օրինակ, Իրանի հոգևոր առաջնորդ, ազերիական ծագմամբ Ալի Խամենեին<sup>2</sup>: Ադրբեջանում ոչ պակաս հեղինակություններ էին նույնպես ազերիական ծագմամբ և արմատական հայացքներով այքի ընկնող այաթուլաներ Մուհամեդ Ֆազլի Լենքորանին (1931-2007), Ջավադ Թաբրիզին (1926-2006) և այլք: Շատ ադրբեջանցիներ իրենց կրոնական կենտրոնը համարում են Իրանը: Իրանական քարոզչությունն Ադրբեջանում տարածվում է նաև իրանական լրատվամիջոցներով: Ասվածի ապացույցը քարոզչական նշանակություն ունեցող իրանական «Մահար II» հեռուստաալիքի հեռարձակումն է ադրբեջաներենով ու թայիշերենով: Հեռուստաընկերությունը պարբերաբար անդրադառնում է Ադրբեջանում առկա էթնիկ ու դավանական,

մարդու իրավունքների և այլևայլ խնդիրների: Հեռարձակվում է մասնավորապես հարավային՝ թալիշական շրջաններում<sup>3</sup>:

2014թ. հունվարի 15-ին Բրյուսելում ՆԱՏՕ կենտրոնական կատարած այցի ժամանակ Ի.Ալիևը նշել է, որ Իրանի հետ Ադրբեջանի հարաբերությունները վերջին շրջանում բարելավվել են, քանի որ Իրանը նախկինի պես չի միջամտում Ադրբեջանի ներքին գործերին (հավաքագրում Ադրբեջանի քաղաքացիներին, պատրաստում Իրանում և այդուհետև ուղարկում Ադրբեջան՝ լրտեսելու կամ ծայրահեղ կրոնականություն քարոզելու նպատակով):

Ամեն պարագայում, Իրանի կրոնաքաղաքական ազդեցությունն Ադրբեջանում ապագայում ևս շարունակություն կգտնի: Իրանը, ըստ ամենայնի, կշարունակի օգտագործել շիայական գործոնը թե՛ իրանական ծագում ունեցող էթնիկ փոքրամասնությունների և թե՛ սոցիալական ու քաղաքական դաշտում:

*Բ. Թուրքիայի կրոնական ազդեցությունն Ադրբեջանում.  
«պաշտոնական իսլամից» մինչև ցրուլենականություն*

Քաղաքակրթական և քաղաքական առումներով Ադրբեջանի կողմնորոշումը դեպի Թուրքիա նպաստեց, որպեսզի Անկարան օգտագործի ազգակցական և լեզվական կապերը՝ ամրապնդելու թուրքական-հանաֆիական իսլամի ներկայությունն Ադրբեջանում: Հատկանշական է, որ չնայած Ադրբեջանի մուսուլման բնակչության մեծ մասը շիայադավան է, իշխանությունների կողմից թուրքական սուննի իսլամը դիտարկվում էր որպես ընդունելի տարբերակ, որը կարող էր չեզոքացնել Իրանից եկող

<sup>1</sup> Dobroslawa, Wictor-Match (2010), p. 85.

<sup>2</sup> Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, [http://carnegieendowment.org/files/022212\\_transcript\\_poli-islam-12.pdf](http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf)

<sup>3</sup> Kotecha, Hema (2006), p. 28.

շիայականության վտանգը: Մյուս կողմից, աշխարհիկ պետության թուրքական մոդելը համընկնում էր Աղրբեջանի իշխանությունների ձգտումներին: Թուրքական խողովակներով եկող իսլամը հրապարակայնորեն պաշտպանում էին նույնիսկ Աղրբեջանի բարձրաստիճան պետական պաշտոնյաները: Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի առաջին նախագահ Ռաֆիկ Ալիևի խոսքերով՝ «Թուրքական իսլամը միակ իսլամական ուղղությունն է, որ համարժեք է Աղրբեջանի աշխարհիկ պետության մոդելին»:

Աղրբեջանի իշխանություններն ակտիվորեն համագործակցում էին թուրքական Կրոնական հարցերի նախագահության՝ Դիյանեթի (Diyanet İşleri Başkanlığı) հետ<sup>1</sup>: Ի տարբերություն նույն իրանցի քարոզիչների, թուրք քարոզիչներն Աղրբեջանում գործում էին ազատ ու անկաշկանդ: Թուրքիան ֆինանսավորում էր մզկիթների շինարարությունն ու նորոգումը, վերապատրաստում էր հոգևորականների, աղրբեջանցի ուսանողներին դրամաշնորհներ էր տրամադրում՝ Թուրքիայի ուսումնական, այդ թվում՝ իսլամագիտական կենտրոններում սովորելու համար, համագործակցում էր Բարվի պետական համալսարանի հետ թուրքագիտության և իսլամագիտության ոլորտների զարգացման հարցում, թուրք ուսուցիչներ գործուղում Աղրբեջանի տարբեր քաղաքներ, իրականացնում փորձի փոխանակում և այլն<sup>2</sup>:

<sup>1</sup> International Crisis Group (2008).

<sup>2</sup> Թուրքիայի Կրոնական հարցերի նախագահությունը (կրճատ՝ Դիյանեթ) ստեղծվել է 1924թ. Օսմանյան կայսրության փլուզումից հետո, Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի կողմից, որպես շեյխ ուլ-իսլամի ինստիտուտի ժառանգորդ: Կառույցը պատասխանատու է Թուրքիայի թե՛ ներքին, թե՛ արտաքին կրոնական գործերը վարելու համար: Նախագահության պաշտոնական կայքէջը՝ [www.diyanet.gov.tr](http://www.diyanet.gov.tr):

<sup>3</sup> International Crisis Group (2008).

Հարկ է նշել, որ Թուրքիայից Աղրբեջան մուտք գործեցին ոչ միայն թուրքական «պաշտոնական իսլամը», այլ նաև Թուրքիայում խոր արմատներ ունեցող սուֆիական տարիկաթներ, որոնք առանձին դեպքերում Աղրբեջանում արդեն հենք ունեին, ինչպես, օրինակ, Նակշբանդիյան<sup>3</sup>: Հնդհաերապես, տարիկաթների գործունեությունն Աղրբեջանում իշխանությունների համար նույնպես համարվում է ոչ ցանկալի, քանի որ վերջիններս լայն ժողովրդականություն են վայելում և կարող են դառնալ ազդեցության ծանրակշիռ աղբյուրներ, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների բնակության շրջաններում<sup>4</sup>: Սուֆիական դերվիշական ավանդույթների հենքի վրա ստեղծված երգերն (մուղամներ) Աղրբեջանում, ի դեպ, բավական լայն տարածում ունեն և գտնվում են պետության մշակութային քաղաքականության օրակարգում: Աղրբեջանում տարիկաթների և դրանց հետևորդների մասին տեղեկությունների սուղ և շատ դեպքերում ոչ հավաստի լինելու պատճառով ձեռնպահ մնացինք նշված խնդրի լայն արծարծումից:

1991թ. հետո Աղրբեջանում, բացի թուրքական «պաշտոնական իսլամը», տարածում ստացավ թուրքական կրոնական մեկ այլ ուղղություն՝ սուֆիականությունը, որն Աղրբեջանում

<sup>3</sup> Նակշբանդիյան իր անունը ստացել է 14-րդ դարի վերջին, երբ Մուհամեդ Բահաուդդին Նակշբանդի Ալ-Բուխարին լրացումներ կատարեց ու երազներ ցատկալիա տարիկաթը: Նշենք, որ դեռևս խորհրդային տարիներին Նակշբանդիյան տարածված էր Նախիջևանում և երկրի հյուսիս-արևմուտքում (հատկապես ավանական շրջաններում):

<sup>4</sup> Տարիկաթների շեյխերը (հիմնադիրները), ունենալով մեծ հեղինակություն ու ազդեցիկություն, կարող են իրենց շուրջը համախմբել հետևորդների ու համախոհների լայն զանգվածների: Տարիկաթներում մուրշիդները՝ ուսուցիչները, աշակերտների մուրիդներին, ուսուցանում են Բարձրիային ճանաչելու և հասնողառնելու դժվարին ճանապարհի փիլիսոփայությունը:

նում հաճախ անվանում են նաև նուրջու (Nurcu), քանի որ շարժման հիմնադիրը՝ թուրք-խալամական քարոզիչ իմամ Ֆեթուլա Գյուլենը<sup>1</sup>, քրդական ծագումով աստվածաբան Մայիդ Նուրսիի (1877-1960)<sup>2</sup> ուսմունքի հետևորդն է։ Իսլամական աշխարհի առաջընթացի նախապայման համարելով աշխարհիկ և որակյալ կրթությունը, ինչպես նաև աջակցելով իսլամի և արդիականության համատեղելիության և մյուս կրոնների հետ երկխոսության գաղափարին՝ Գյուլենը հանդես է գալիս որպես իսլամական բարեփոխիչ և մուջթահիդ՝ իսլամական դրույթների ազատ մեկնող՝ ձգտելով մուսուլմանական հասարակությունների շրջանում ձևավորել ժամանակակից մտածողություն, ինչը կարող է համադրվել հոգևոր և համամարդկային ընդհանրական արժեքներով<sup>3</sup>։

<sup>1</sup> Ֆեթուլա Գյուլենի և գյուլենական շարժման մասին մանրամասն տե՛ս International Conference Proceedings- Muslim World in Transition: Contributions of the Gülen Movement, Dr. Ihsan Yilmaz, etc /Eds./, Leeds Metropolitan University Press, London, 2007, 754 p.:

<sup>2</sup> Մայիդ Նուրսիի ծնվել է Բիթլիսի նահանգում, Նուրս քրդական գյուղում, այստեղից էլ անունը՝ Նուրսի։ Համարվում է թուրքական աշխարհի ամենաեղևիկավոր տունի աստվածաբաններից մեկը, որի ապացույցը նրա տիտղոսն է (Բաղիու-գաման), որ նշանակում է իր ժամանակի հրաշք։ Նուրսիի համարվում է թուրք-խալամական առաջադեմ գործիչ, բարեկորդիչ, որի գաղափարները՝ նվիրված իսլամական համայնքի տարաբնույթ խնդիրներին, արդիական են նաև այսօր։ Նրան մեծ հռչակ է բերել Ռիսալե ի Նուր (Լույսի տրակտատ) ժողովածուն՝ Նուրսիի մեկնաբանությունները, մոտ 6 հազար էջ։ Ժողովածուն թարգմանվել է մոտ մի քանի տասնյակ լեզուներով։ Մայիդ Նուրսիի մահից հետո նրա գաղափարախոսության հենքի վրա ի հայտ եկան տարբեր ուղղություններ, որոնցից մեկն էլ՝ Հիզմեթի կամ Գյուլենի շարժումը, հիմնադրել ու ղեկավարել է Ֆ.Գյուլենը, որը կրթիչ չի հանդիպել Նուրսիին։ Նուրսիի հետևորդների անվանում են Նուրջու (նուր՝ լույս բառից), իսկ շարժումը՝ Նուր ցեմաաբ։ Մայիդ Նուրսիի մասին մանրամասն տե՛ս Markham, Ian & Suendam, Birinci Pirim (2011)։

<sup>3</sup> Саид Нурси и Фетхуллах Гюлен в Центральной Азии: Влияние на религию и образование после распада СССР, <http://www.fergananews.com> (22.01.2013)։

Գյուլենականությունը տարընթերցումների և հակասական գնահատականների է արժանացել՝ հատկապես քննադատությունների թիրախ դառնալով ուղղափառ իսլամական շրջանակներում։ Գյուլենին, այնուամենայնիվ, հաջողվել է աշխարհի տարբեր հատվածներում հիմնել կրթական-կրոնական կառույցների ցանց։ Նա ունի միլիոնավոր հետևորդներ ոչ միայն իսլամական մեծամասնություն ունեցող երկրներում, այլև Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում և այլուր։ Գյուլենական շարժման աշխարհագրությունն ընդգրկում է նաև հետխորհրդային թյուրքալեզու շրջանները, մասնավորապես Կենտրոնական Ասիան, Ադրբեջանը, Թաթարստանը, Բաշկորտոստանը և այլն։ Չափավոր շեշտադրումներով հայտնի սուննի իսլամի հանաֆիական մեկնաբանության, Մայիդ Նուրսիի գաղափարների, ինչպես նաև սուֆիականության վրա խարսխված շարժումը թուրքական ազգայնականության բաղադրիչներ ևս ունի։ Հետևաբար, առաջին հերթին որպես թյուրքական ծագում ունեցող ժողովուրդներին համախմբող և հետախուզական նշանակություն ունեցող կառույց, այն սպասարկել է նաև թուրքական պետության հետաքրքրությունները։ Սակայն Գյուլենի հարաբերություններն իշխող ընտրանիների հետ ոչ միանշանակ են եղել։ 1999-ից Գյուլենը բուժվելու նպատակով մեկնել է ԱՄՆ, որից հետո Թուրքիա չի վերադարձել։ 2000թ. Թուրքիայում նրա դեմ հարուցված գործը կարճվել է։ Հնդիանրապես, Թուրքիայի աշխարհիկ, ազգայնական ուժերը պարբերաբար մեղադրել են Նուրջու շարժման ղեկավարներին՝ թուրքական աշխարհիկ քաղաքական համակարգը տապալելու և շարիաթական պե-

տություն ստեղծելու, ինչպես նաև օտարերկրյա ծառայությունների հետ համագործակցելու մեջ<sup>1</sup>:

Գյուլենական շարժումը տարբերվում է իսլամական մյուս շարժումներից, քանի որ տարածում է իր կրոնական ուսմունքը սեփական աշխարհիկ, եվրոպական ծրագրերով առաջնորդվող կրթական հաստատությունների, գանգվածային լրատվամիջոցների, սոցիալական և բիզնես կառույցների իր ցանցերի միջոցով:

Առաջին անգամ գյուլենականները կամ ֆեթուլախցիները (Fethullahcilar) Ադրբեջան, ավելի ստույգ՝ Նախիջևան են եկել 1991թ. վերջերին: Գյուլենի ամենամտերիմ համախոհներից մեկը Ալի Բայրամը, Հեյդար Ալիևի հետ հանդիպումից հետո այնտեղ բացել է գյուլենական երկու դպրոց: Կա այն տեսակետը, որ գյուլենականներն Ալիևի Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ղեկավար եղած ժամանակ բավական լուրջ օգնություն են ցուցաբերել: 1992թ. Ա.Էլչիբեյը գյուլենականներին իրավունք տվեց հրատարակելու «Ջաման» թերթի ադրբեջանական օրինակը, բացելու դպրոցներ, հեռարձակելու «Մամանյուլու» հեռուստաալիքը, հիմնելու մասնավոր ձեռնարկություններ և ընկերություններ: Իշխանության գալուց հետո գյուլենականների նկատմամբ Հեյդար Ալիևի ջերմ վերաբերմունքը պահպանվեց, որի շնորհիվ նրանց դիրքերն ավելի ամրապնդվեցին: Նորանկախ Ադրբեջանի իշխանությունների համար այդ շարժումը կարևոր գործոն էր ոչ միայն Թուրքիայի հետ հարաբերությունների ակտիվացման, այլև Ադրբեջանում կրթական ոլորտի զարգացման, արդիականացման և թուրքական մշակույթի տարածման հարցում<sup>2</sup>:

<sup>1</sup> Юнусов, Ариф (2012), с. 48.

<sup>2</sup> Ադրբեջանում գյուլենական դպրոցների մասին մանրամասն տե՛ս Topuz, Birol (2011).

Հ.Ալիևը դրվատանքով է խոսել Գյուլենի մասին: Ըստ գյուլենական «Ջաման» թերթի մի հրապարակման, նա հիացմունքով է խոսել առհասարակ գյուլենական դպրոցների մասին. «Ես հենց սկզբից աջակցել եմ այդ դպրոցներին, ես շարունակելու եմ աջակցել դրանց այսօր և վաղը, քանի որ այդ դպրոցներն իրենց հետ բարելավում են բերում: Նրանք կատարելագործել են Ադրբեջանի կրթական համակարգը<sup>3</sup>»: Հետևելով Ալիևի խոսքերին՝ այն ժամանակվա կրթության նախարար Մերդանովը նշել է, որ գյուլենական դպրոցները ստեղծել են ամուր կամուրջ Թուրքիայի և Ադրբեջանի միջև, «որը ոչ մեկը չի կարող քանդել»<sup>4</sup>: Ըստ «Ջաման» թերթի՝ 2009թ. տվյալներով, Ադրբեջանի տարբեր քաղաքներում (այդ թվում՝ Նախիջևանում) գործել են գյուլենական տարրական և միջնակարգ 12, նախաբուհական 11 դպրոց, մեկ համալսարան (1993թ. հիմնված Կովկաս համալսարանը), որոնցում, ընդհանուր առմամբ, ներգրավված է եղել 5000 ուսանող<sup>5</sup>:

Ադրբեջանում հեռարձակվել են գյուլենական ռադիո-հեռուստատեսային «Խազար», «Բուրչ», «Մամանյուլու» ալիքները, հրատարակվել «Ջաման» օրաթերթի ու գյուլենական այլ թերթերի ադրբեջանական օրինակները: Իլհամ Ալիևը նույնպես կողմ է եղել թուրքական, մասնավորապես գյուլենական դպրոցների ցանցի ընդլայնմանն Ադրբեջանում<sup>6</sup>:

<sup>3</sup> Turkey in decade's best economic, trade phase with Azerbaijan, Turkey in decade's best economic, trade phase with Azerbaijan, <http://www.todayszaman.com> (24.06.2014).

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Topuz, Birol (2011).

Առանձին տեղեկությունների համաձայն՝ գյուլենականների գործունեությունն Ադրբեջանում թուրքական իշխանությունների կողմից հավանության չի արժանացել, սակայն ՀԱլիևը չի համաձայնել սահմանափակել գյուլենական դպրոցների գործունեությունը՝ համոզված լինելով, որ դրանք վտանգ չեն ներկայացնում Ադրբեջանի համար: Այս հանգամանքն իրականում պայմանավորված է եղել գյուլենական կրթական հաստատությունների բարձր մակարդակով: Ասվածի ապացույցը Կովկաս համալսարանն է, որտեղ ուսուցումը հիմնականում անգլերենով է: Գյուլենական կրթական հաստատություններում կրոնի հետ կապված որևէ առարկա չի ուսուցանվում, քանի որ օրենքն արգելում է պետական և մասնավոր դպրոցներում կրոնի դասավանդումը<sup>1</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ գյուլենական շարժումն Ադրբեջանում ուղղակիորեն չի ներգրավվել իսլամի շուրջ բանավեճերին: Գյուլենականները չեն մասնակցել անգամ հիջաբի և կրոնական բնույթ ունեցող այլ խնդիրների շուրջ ծավալված քննարկումներին<sup>2</sup> և բողոքի ակցիաներին, ինչը նշանակում է, որ նրանք Ադրբեջանում գործել են ոչ իրավարակային: Այս հանգամանքը քննադատությունների թիրախ է դարձել ակտիվիստների համար: Ժամանակի ընթացքում նրանց հաջողվել է ստեղծել սոցիալական լայն ցանց, որը ղեկավարվել է համայնքի իմամների կողմից և զբաղվել նաև գործարարությամբ: Գյուլենականների չեզոքությունը միայն արտաքուստ է: Առանձին տեսակետների համաձայն՝ շարժումն Ադր-

<sup>1</sup> Cornell, Svante E. (2011), p. 283.

<sup>2</sup> Aliyev, Fuad (2012).

բեջանում նպատակ ունի շիայականությունը «փոխարինել» թուրքական սուննիականությամբ: Շարժման գործունեությունն Ադրբեջանում, կարելի է ասել, քողարկված է և ուղղակի հակամարտության չի գնում շիայական կրոնական համակարգի ու աշխարհիկ վարչակարգի հետ<sup>3</sup>:

Միաժամանակ վիճարկելի է նաև այն թեզը, թե գյուլենական դպրոցները բացառապես աշխարհիկ կառույցներ են, քանի որ դասերից դուրս աշակերտները, ենթակա լինելով վերահսկողության, ստանում են համայնքի ուղերձը: Որոշ տեղեկությունների համաձայն՝ գյուլենական կրթական հաստատությունների աշակերտներն իրավունք չունեն տնօրինել սեփական կյանքը և անձնական որոշումներ ընդունել: Այդ մասին տեղեկատվական արտահոսք եղավ այն ժամանակ, երբ Ադրբեջանում մի աշակերտի արգելվեց ամուսնանալ իր ընտրյալի հետ, որից հետո նա հեռացավ գյուլենականներից<sup>4</sup>:

Գյուլենական դպրոցներն, ըստ էության, թուրքական մշակույթը, լեզուն և թուրքական իսլամի սեփական մեկնաբանությունը տարածող հարթակներ են, որոնք կրթում են սերունդների: Հետաքրքրություն են ներկայացնում նաև գյուլենական դպրոց-ինտերնատները կամ հանրակացարանները, որն իրենք անվանում են լույսի տներ կամ լույսի օջախներ՝ իշրք էվլեր (ışık evler): Դրանք համայնքին պատկանող և համայնքի գործարարների կողմից վարձակալված բազմաանյականոց բնակարաններ են, որտեղ համատեղ բնակվում են մոտ մեկ տասնյակ երիտասարդ, շատ ղեպքերում՝ աղքատ ուսանողներ: Ամեն լույսի

<sup>1</sup> Հովսեփյան, Լևոն (2013), էջ 9, 7:

<sup>2</sup> Mamedov, Eldar (2012).

տուն ունի մեկ աբի (abi), ով օգնում է ուսանողներին ոչ միայն դասերը պատրաստել, այլև կենցաղային հարցերը կազմակերպել: Նրանց առաքելությունը պարզ է՝ վարվել ինչպես ավագ եղբայր կրտսեր աշակերտների համար, որոնք կոչում են նրան հենց աբի՝ ավագ եղբայր<sup>1</sup>:

Աղբրեջանում գյուլենականներին հաջողվել է մուտք գործել կարևորագույն ոլորտներ: Նրանք ներգրավված են եղել նախագահի աշխատակազմում, կառավարությունում, այդ թվում՝ ուժային կառույցներում և այն: Շարժման հետ ուղղակի կամ անուղղակի կապի մեջ են Աղբրեջանի բարձրաստիճան պաշտոնյաներ, պատգամավորներ, լրագրողներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ և այլն<sup>2</sup>: Ռ.Ալիևի կարծիքով՝ նուրջուականները փաստացիորեն ներդրված են Աղբրեջանի բոլոր ոլորտներում. «Նրանք ազդել են, ազդում են և դեռ երկար ժամանակ կազդեն աղբրեջանական ողջ պետական համակարգի վրա: ...Նուրջուականությունն առաջ է քաշում իր մարդկանց աշակերտական նստարանից, դաստիարակում է նրանց, կրթության տալիս, վճարում կրթության համար և նույնիսկ աշխատանքի տեղավորում... Երիտասարդ նուրջուականները շատ խելացի ու կրթված են, այդ իսկ պատճառով նրանց համար պետական ապարատում աշխատանք գտնելը դժվար չէ, թեև նրանք խնամքով թաքցնում են իրենց պատկանելությունը ջամաաթին (համայնքին– Ա.Փ.)... նրանք երկաթյա կարգապահություն ունեն, նրանք բոլորը ենթարկվում են իրենց իմամին՝ Ֆեթուլա Գյուլենին»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Շարքայան, Արտակ (2011), էջ 109–111:

<sup>2</sup> Հովսեփյան, Լևոն (2013), էջ 9–10:

<sup>3</sup> Рафик Алиев: Азербайджанцев вербуют во время хаджа, <http://haqqin.az> (24.02.2014).

Ակնհայտ է, որ սոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող Աղբրեջանում շատերը կցանկանան իրենց երեխաներին կրթության տալ գյուլենական դպրոցներում, որտեղ ոչ միայն հոգում են կրթության հարցը, այլև օգնում առաջխաղացմանը: Պատահական չէ, որ իսլամամետ ու թուրքամետ այս շարժումն իր չափավորությամբ ու եվրոպական արժեքների ներգրավվածությամբ Աղբրեջանում գրավիչ է:

2013թ. վերջերին և 2014թ. սկզբներին գյուլենականության թեման լայն արձագանք գտավ Աղբրեջանում, որն ուղղակիորեն կապված էր 2013թ. վերջերին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ֆեթուլա Գյուլենի միջև սկիզբ առած հերթական հակամարտության հետ, ինչը թուրքական պետությանը կանգնեցրեց բարդ իրավիճակի առաջ՝ ի հայտ բերելով «պետություն պետության մեջ» կամ «գուգահեռ պետության» իրողությունը<sup>4</sup>: Աղբրեջանական մամուլը սկսեց հեղեղվել Թուրքիայի նմանությամբ Աղբրեջանի պետական ու այլևայլ ոլորտներում գյուլենականների՝ «կաղրային համակարգ» ստեղծելու մասին նյութերով: Հրապարակվեց Աղբրեջանում գյուլենականների կրթական հաստատությունները համակարգող կառույցի («Çağ Öğretim İşletmeleri») տնօրենի՝ թուրքական գործընթացների պատճառով Աղբրեջանում գյուլենականության հեռանկարի վերաբերյալ մտահոգություն պարունակող նամակը Ֆեթուլա Գյուլենին: Իսկ մտահոգությունը, թերևս, պատահական չէր, եթե հաշվի առնենք, որ 2014թ. մարտին Իլիամ Ալիևի հրամանագրով պաշտոնից ազատվեց Աղբրեջանի նախագահի աշխատակազմի

<sup>4</sup> St' u Nazemroaya, Mahdi Darius (2014).

քաղաքական վերլուծության և տեղեկատվական բաժնի պետ Էլնուր Սալանովը, որը պետական համակարգում ամենաազդեցիկ գյուլենականներից մեկն էր: Հաշվի առնելով գյուլենականների դեմ Ադրբեջանում սկսված ճնշումները՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանում ևս գյուլենականությունը որոշակի միտում ունի կրթական-կրոնականից բացի՝ ծավալել նաև քաղաքական գործունեություն:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում նուրջու շարժման մեջ են դիտարկվում թե՛ գյուլենականները, թե՛ դասական նուրջուականները՝ Սայիդ Նուրսիի հետևորդները, որոնք, ըստ էության, առանձին կառույցներ են՝ տարբեր մեթոդներով առաջնորդվող: Նուրջուականները մասնավոր բնակարաններում ոչ պաշտոնական միջավայրում ուսումնասիրում և քարոզում էին Սայիդ Նուրսիի գրական ժառանգությունը: Նուրջու շարժման առաջնորդը՝ Մուստաֆա Մունդուրը, մի շարք անգամներ եղել է Ադրբեջանում<sup>1</sup>: 2012թ. վերջին Սայիդ Նուրսիի 14 հատորանոց «Ռիսալե ի Նուր» աշխատանքն Ադրբեջանում արգելվել է<sup>2</sup>:

Ի տարբերություն հետանկախության շրջանի, երբ Ադրբեջանի իշխանությունները շփվում էին քեմալական ուղղվածություն ունեցող թուրքական ընտրանու հետ, Բաքվի համար վերջին տարիներին ոչ համարժեք բազմաթիվ իրողություններ են ի հայտ եկել թուրքական իսլամի դաշտում: 2002թ. Թուրքիայում իշխանության եկած իսլամամետ ուժերը՝ ի դեմս «Արդարություն և զարգացում» կուսակցության, հետամուտ էին Թուրքիայի հասարակական կյանքում իսլամի դերի վերաթմուր-

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>“Risale-i Nur” banned in Azerbaijan since end of 2012, <http://en.apa.az> (21.04. 2014).

մանն ու ակտիվացմանը, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ Ադրբեջանում: Ամեն պարագայում, չնայած իշխող վերնախավի հետ սերտ համագործակցությանը, թուրքական իսլամի հարածուն վերելքն Ադրբեջանի իշխանություններին մտահոգող փաստ է: Գյուլենականությունը սալաֆիականությունից և արմատական շիաականությունից պակաս սպառնալիք չէ իշխանության համար<sup>3</sup>: Պատահական չէ, որ դեռևս 2007-ին Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Փաշազադեն, որն անթաքույց բացասական վերաբերմունք ունի ոչ միայն սալաֆիականների, այլև նուրջուականների նկատմամբ, նրանց համարեց ոչ ցանկալի, վտանգավոր աղանդներ, որոնք իրենց գործունեությամբ վնաս են հասցնում իսլամին<sup>2</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ Ադրբեջանում կան նաև գյուլենականների համար նպաստավոր գործոններ: Գյուլենականությունն արդեն լուրջ հիմքեր ունի Ադրբեջանում, որտեղ գործում են գյուլենական դպրոցների ու հաստատությունների լայն ցանց, մեծ թվով շրջանավարտներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ գյուլենական գործարարների կապիտալը սերտաճած է իշխանությանը մոտ կանգնած մարդկանց կապիտալին: Գյուլենականների գոյությունն Ադրբեջանում նաև շահեկան է իշխանության համար՝ որպես հակակշիռ սուննի և շիա իսլամի արմատական հոսանքների<sup>3</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ նաև թուրքական ազդեցությամբ Ադրբեջանում նկատվում է ոչ միայն սուննի իսլամի

<sup>1</sup>Власти Азербайджана опасаются религиозных течений,

<http://www.radioazadlyg.org> (27.06.2014).

<sup>2</sup>International Crisis Group (2008).

<sup>3</sup>Mamedov, Eldar (2012).

ընդլայնում, այլև նույնիսկ սուննիականացում: Այդ գործընթացը տեսանելի է նաև փորձագիտական հանրությանը: Ռուսաստանցի հետազոտող Ահմեդ Յարիկայովի համոզմամբ՝ Կովկասում, այդ թվում՝ Ադրբեջանում, իսլամի տարածման ժամանակակից քարտեզը լրջագույնս փոփոխվել է: Օրինակ, Ադրբեջանում կտրուկ մեծացել է սուննիական ազդեցությունը<sup>1</sup>: Պատահական չէ, որ 1990-ականների կեսերին թուրքական ազդեցությամբ հազարավոր ադրբեջանցի շիայական արմատներ ունեցող երիտասարդներ դարձան սուննիներ: Սակայն հակառակ միտումը չնկատվեց<sup>2</sup>:

Սուննիականացման միտումը տեսանելի է մտավորականության այն շրջանակներում, որոնց Ռաուլ Մոթիբան անվանում է մոդեռնիստներ, ովքեր աշխարհիկ պետության և ժողովրդավարության կողմնակիցներ են, իսկ իսլամի սկզբունքները լուսաբանում են արդիականության տեսանկյունից: Նրանցից, օրինակ, իսլամագետ Նարիման Քասիմօղլուն և քաղաքական գործիչ Ֆազիլ Քազանֆարօղլուն մերժում են շիա իսլամը՝ դիտարկելով այն որպես «ճշմարիտ իսլամի» իրանական աղավաղում՝ հազեցած հեթանոսական տարրերով: Քազանֆարօղլուն համարում է, որ շիա իսլամը հեռացնում է ադրբեջանական թուրքերին իրենց թուրք գեղակիցներից, ուստի անհրաժեշտ է վերադառնալ «ճշմարիտ իսլամին», այսինքն՝ սուննի իսլամին<sup>3</sup>:

<sup>1</sup> Ярыяханов, Ахмет, Современные формы ислама на Кавказе, <http://ethno-photo.livejournal.com/11139.html>, December 8, 2009.

<sup>2</sup> Goyushov, Altay (2008), p. 77.

<sup>3</sup> Motika, Raoul (2001 b).

### 9. Մալաֆիականությունն Ադրբեջանում

Սուննի իսլամի ամենապահպանողական ուղղությունը՝ սալաֆիականությունը<sup>1</sup> (այն շատ դեպքերում հիշատակվում է վահաբականություն եզրով, որը ձևավորվեց 18-րդ դարում) դեռևս 1980-ականների վերջերին ներթափանցեց խորհրդային տարածք, այդ թվում՝ Ադրբեջան: Իսլամում սալաֆիականներ ասելով նկատի են առնվում այն հավատացյալները, ովքեր հետևում են բարեպաշտ նախնիների (աս-սալաֆ աս-սալիհուն) օրինակելի վարքին: Գաղափարախոսությունը մերժում է վտանգավոր և անընդունելի ամեն տեսակի նորարարություն (բիդա), ինչը համարվում է անհավատություն (քուֆր) և ենթակա է միանշանակ մերժման ու մահապատժի:

Վահաբականությունն ընկած է Սաուդյան Արաբիայի Թագավորության պետական գաղափարախոսության հիմքում: 1970-ականներից ֆինանսական արագընթաց և աննախադեպ հաջողությունները նպաստեցին, որպեսզի Սաուդյան Արաբիան «սառը պատերազմի» տարիներին և դրանից հետո վիթխարի ֆինանսական միջոցներ ներդնի՝ իրականացնելու վահաբականության արտահանումը՝ որպես soft power՝ նպատակադրվելով

<sup>1</sup> Գաղափարական առումով սալաֆիականությունը նկատի է առնում վերադարձ դեպի ակունքները, մասնավորապես իսլամի պատմության Մադինայի շրջանը (622-632թթ.), երբ ձևավորվեց Մուհամեդ մարգարեի կողմից դեկավարվող առաջին մուսուլմանական համայնքը՝ Ումմահ: Մալաֆիականությունը հիմք է ընդունում Ղուրանը և սուննան՝ մեծ նշանակություն տալով սուննի իսլամի հանրալիական կրոնաիրավական ուղղությանը: Իսլամի պատմության գրեթե բոլոր ժամանակներում ի հայտ են եկել իսլամական կրոնական և կրոնաքաղաքական շարժումներ, որոնք կոչ են արել վերադառնալ վաղ իսլամի ակունքներին: Չնեց սալաֆիականության դիրքերում էր կանգնած 18-րդ դարի արաբ կրոնական քարուղի Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահաբը, որի ուսմունքը ստացավ վահաբականություն անվանումը: Մանրամասն տե՛ս Васильев, Алексей (1985).

իսլամի այդ ուղղությունը դարձնել առաջատար ուժ թե՛ իսլամական աշխարհում, թե՛ նրա սահմաններից դուրս: Այս ճանապարհով Մաուդյան Արաբիան ցանկանում էր նաև հակազդել իսլամական աշխարհում Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքիայի ազդեցություններին: Վահաբական քարոզչության (դավուա) դրսևորումներից են սաուդական կրթական հաստատություններում երիտասարդ մուսուլմանների ուսումնառության կազմակերպումը, աշխարհի տարբեր երկրներում մզկիթների շինարարությունը, իսլամական կենտրոնների ստեղծումը՝ վահաբական քարոզիչների ներգրավմամբ: Ներկայումս վահաբականությունը մի կողմից պետք է դիտարկել որպես աստվածապետություն համարվող Մաուդյան Արաբիայի պետական գաղափարախոսություն, որը մինևույն ժամանակ թագավորության կողմից վերահսկվող և ֆինանսավորվող միջազգային տարաբնույթ կառույցների գաղափարական հենքն է, մյուս կողմից՝ սալաֆիականությունը լայն հասկացողություն է, անդրազգային և գլոբալ շարժում, որի տարբեր մեկնաբանություններն ընկած են ոչ միայն կրոնական, այլև կրոնաքաղաքական և ռազմաքաղաքական մի շարք կազմակերպությունների գաղափարախոսությունների հիմքում: Սալաֆիականությունը շատ դեպքերում նույնացվել է ծայրահեղականության, մոլեկրոնության և ահաբեկչության հետ:

Սալաֆիականությունը, որը գաղափարական առումով նոր երևույթ էր Ադրբեջանի համար<sup>1</sup>, ավելի ակտիվ ձևով սկսեց Ադրբեջան ներթափանցել 1990-ականների սկզբին հիմնականում Ղարաբաղյան պատերազմի (1991-1994), ռուս-չեչենական

<sup>1</sup> Տե՛ս Valiyev, Anar (2005 a).

պատերազմների (1994-1996թթ., 1999թ.) արդյունքում, սուննի-սալաֆիական քարոզիչների, Ադրբեջանում հաստատված չեչեն փախստականների, ինչպես նաև Մաուդյան Արաբիայում, Օոցի երկրներում և իսլամական այլ պետություններում կրթություն ստացած ադրբեջանցի ուսանողների միջոցով: Ադրբեջանի հյուսիսային շրջաններում սալաֆիականության ներթափանցմանը նպաստեց Դադատանի հետ Ադրբեջանի սահմանը, որը տարանցիկ ճանապարհ դարձավ թե՛ սալաֆիական քարոզիչների, թե՛ սալաֆիական գաղափարներով տոգորված «մարտնչող իսլամի» մարտիկների կամ ջիհադականների համար: 1995-ից ի վեր սալաֆիականության աշխարհագրությունն Ադրբեջանում ընդլայնվեց՝ աստիճանաբար ներառելով Բաքուն և նրա շրջակայքը: Քարոզչության կարևոր բաղկացուցիչներից էր սալաֆիական գրականության տարածումը: Կրոնական այս նոր ուղղությունն ավելի մեծ հաջողությունների էր հասնում սոցիալապես անապահով շրջաններում:

2000-2001թթ. Ադրբեջանում հաստատված շուրջ 10.000 չեչեն փախստականների մի զգալի մասը սալաֆիական գաղափարների կրողներ էին: Նրանցից շատերը սովորություն ունեին աղոթել լեզգիական մզկիթում: Պատահական չէ, որ Ադրբեջանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ մասնակցել են ռուս-չեչենական պատերազմին՝ անդամագրվելով սալաֆիական ուղղվածությամբ չեչենական և դադստանյան ռազմաքաղաքական կառույցներին: Այս իրողությունը մտահոգում էր Ադրբեջանի իշխանություններին, քանի որ մարտնչող իսլամիզմը կարող էր մուտք գործել նաև Ադրբեջան:

2001թ. հոկտեմբերին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարը հայտարարեց, որ շուրջ 300 ադրբեջանցիներ ռազմական պատրաստվածություն են անցել Չեչնիայի և Դաղստանի վահաբական ճամբարներում<sup>1</sup>: 2003թ. օգոստոսին Ադրբեջանի անվտանգության ուժերը ձերբակալեցին «Ղարաբաղյան պարտիզաններ» անունով 23 հոգանոց մի խմբի, որի անդամները մարտնչել էին Չեչնիայում և պատրաստվում էին կռվել Լենային Ղարաբաղի դեմ: 2003թ. իշխանությունները հայտարարեցին, որ 2001-2003թթ. Ադրբեջանում ձերբակալվել են 70 վահաբականներ, որոնցից նվազագույնը 45-ը Պանկիսի կիրճում չեչենների հետ կռվել էին ռուսական բանակի դեմ<sup>2</sup>:

1993-ից Ադրբեջանում սկսեցին հիմնվել սառույդական հովանավորությամբ գործող «Իսլամական աշխարհի լիգային»<sup>3</sup> կից կառույցների մասնաճյուղեր, որոնք օժանդակում էին փախստականներին, դեղորայք բաժանում, օգնում որբերին և այլն<sup>4</sup>: Լինելով բարեգործական կառույցներ՝ դրանք նաև կրոնաքաղաքական քարոզչության օղակներ էին: Ադրբեջանում սալաֆիական ուղղվածությամբ ամենագործուն կառույցներից մեկը

<sup>1</sup> International Crisis Group (2008).

<sup>2</sup> Լոյսն տեղում:

<sup>3</sup> «Իսլամական աշխարհի լիգան» (արաբերեն՝ Ալ-Ռաբիտա ալ-ալամ ալ-իսլամի, կրճատ՝ Ռաբիտա) հիմնվել է 1962թ. Մեքքայում, Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալ իբն Աբդ Ալ-Ազիզի (1964-1975) կողմից՝ որպես ոչկառավարական անդրազգային կազմակերպություն՝ հակազդելու արաբական աշխարհիկ ազգայնականության աճին: Կազմակերպության նպատակն իսլամի տարածումն է, իսլամական քարոզչության (դավուա) իրականացումը, բարեգործությունը և այլն: Կազմված է ութ հիմնական մարմիններից: Առավելագույն ֆինանսավորվում է Սաուդյան Արաբիայի կողմից:

<sup>4</sup> International Islamic Relief Organisation of Saudi Arabia (al-Ighata al-Islamiya al-'alamiya), <http://www.observatoire-humanitaire.org/fusion.php?l=GB&id=81>

եղել է քուվեյթական ծագմամբ Իսլամական վերածննդի ժառանգության կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղը, որը հիմնվեց 1990-ականների առաջին կեսին: Նրա գործունեությունն արգելվեց 2001թ., երբ կազմակերպության աֆղանական և պակիստանյան անդամները մեղադրվեցին «Ալ-Կաիդայի» հետ կապեր ունենալու մեջ: Կազմակերպությունն Ադրբեջանում վերանորոգել է 62 մզկիթ, որոնցից՝ կենտրոնական շրջաններում՝ 39, հյուսիսային շրջաններում՝ 17, մայրաքաղաքում՝ 4<sup>1</sup>:

2002թ. մայիսին Ադրբեջանի ազգային անվտանգության փոխնախարար Թոֆիկ Բաբաևը հայտարարեց, որ արաբական մի շարք երկրներ հետաքրքրված են եղել Ադրբեջանում իսլամական արմատական գաղափարների տարածմամբ՝ այն իրականացնելով ակտիվիստներին ֆինանսական օժանդակություն ցույց տալով և ռազմական ճամբարներում ադրբեջանցի զինյալներ պատրաստելով<sup>2</sup>:

2005թ. նոյեմբերին Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունների նախօրեին իշխանություններն ավելի ու ավելի շատ էին խոսում այն մասին, որ վահաբականությունը վտանգ է ներկայացնում Ադրբեջանի քաղաքական կայունությանը: Նախօրեին Ասիայի մուսուլմանների Քուվեյթի հանձնախմբի (Ադրբեջանում այն գործել է 1995-ից) կողմից Կովկասի մուսուլմանների վարչության անունով Բաքու էր առաքվել ուզբեկերեն, դազախերեն, արաբերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով 14 տոննա (իսկ դրանից առաջ՝ 10 տոննա) կրոնական գրա-

<sup>1</sup> International Crisis Group (2008).

<sup>2</sup> Салафизм /ваххабизм/ не угрожает безопасности Азербайджана?, <http://www.i-r-r.ru> (22. 11. 2005).

կանություն: Իշխանություններն արգելել էին գրքերի տարածումը՝ պատճառաբանելով, որ դրանց մեջ բաց ձևով քարոզվում էր վահաբականությունը, հակադրվում էին իսլամի շիա և սուննի ուղղությունները<sup>1</sup>:

Թե՛ պետության և թե՛ շիա հոգևորականության քարոզչության արդյունքում սալաֆիականների նկատմամբ հասարակության մեջ ձևավորվեց բացասական կարծիք: Սուննի-սալաֆիական շրջանակներն իշխանություններին մեղադրեցին ծայրահեղականներին և մարտնչող իսլամիստներին ճշմարիտ հավատացյալների հետ շփոթելու, վերջիններիս վարկաբեկելու և բնաչության մեջ նրանց նկատմամբ վախի մթնոլորտ ստեղծելու մեջ: Արդեն 2007թ. սեպտեմբերին Հիդայեթ Օրուջը՝ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի նախագահը, հայտարարեց, որ վահաբականությունը լուրջ վտանգ չի ներկայացնում Ադրբեջանի համար և նպատակահարմար չէ դրա արգելումը<sup>2</sup>: 2008թ. Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիևը վերահաստատեց, որ իրենք չեն պատրաստվում արգելել վահաբականությունը, բայց եթե որևէ դավանանքի ներկայացուցիչներ կգործեն արմատականության դիրքերից, նրանք կկանգնեն օրենքի առաջ<sup>3</sup>:

Սինչ օրս Ադրբեջանի իշխանությունները շարունակում են ժամանակ առ ժամանակ ձեռքբերել սալաֆիական կողմն-

րոշում ունեցող թե՛ Ադրբեջանի, թե՛ օտարերկրյա քաղաքացիների ու խմբավորումների անդամների, որոնք մեղադրվում են արմատական, ծայրահեղական և հակապետական գործունեություն վարելու մեջ:

Հարկ է նկատի ունենալ, որ Ադրբեջանում գործում են սալաֆիական երկու հիմնական ուղղություններ՝ ապարտաբական ու ապառազմական (որ մեծամասնություն է կազմում) և ծայրահեղական, մարտնչող կամ ջիհադական: Ադրբեջանում սալաֆիական քարոզիչները և իմամները, մասնավորապես նրանք, ովքեր ուսանել են Մադինայի իսլամական համալսարանում (Մաուլյան Արաբիա), զգալիորեն ազդվել են սաուդական սալաֆիական պահպանողական քարոզիչներից, որոնց մեջ առանձնանում է համալսարանի պրոֆեսոր, սաուդական իշխանությունների ամենահավատարիմ մարդկանցից մեկը՝ Ռաբիա բին Հադի Ալ-Մադխալին՝ մադխալիականության հիմնադիրը<sup>4</sup>: Մադխալիական ուղղության հետևորդ է նաև Ադրբեջանի սալաֆիական ամենամեծ՝ Աբու Բաքր մզկիթի համայնքի նախկին իմամ Քամեթ Սուլեյմանովը:

Հարկ է նկատի ունենալ, որ սալաֆիականության ընդլայնմանը զուգահեռ՝ Ադրբեջանում կան դրա տարածմանը խոչընդոտող պատճառներ: Մասնավորապես՝ այդ երկրում իսլամի շիա ուղղության գերակայությունը, սուննի իսլամի ոչ միանշանակ կամ բացասական վերաբերմունքը շիայականության և «ժողովրդական իսլամի» նկատմամբ, ինչպես նաև սալաֆիական որոշ ուղղությունների սերտ կապը կրոնական ծայրահեղականության հետ:

<sup>1</sup> Մանրամանս տե՛ u Meijer, Roel (2009).

<sup>1</sup> Azerbaijan: Does Wahhabism Pose A Threat? (by Liz Fuller), Radio Free Europe, <http://www.rferl.org> (07.08.2005).

<sup>2</sup> Председатель комитета: Азербайджан не намерен запрещать ваххабизм на государственном уровне, <http://www.trend.az> (27.09.2007).

<sup>3</sup> Рамиз Мехтиев: ваххабизм в Азербайджане запрещать не будут, <http://www.kavkaz-uzel.ru> (29.04.2008).

**Սուննիական Աբու Բաքր և շիայական Ջումա մզկիթների համայնքները**

Հետանկախության շրջանում Ադրբեջանում հավաքական ինքնության գիտակցությամբ աչքի ընկած իսլամական համայնքներից հատկապես հետաքրքրություն են ներկայացնում սուննի-սալաֆիական Աբու Բաքր մզկիթի (Əbu Bəkr məscidi) և շիայական Ջումա մզկիթի (Cümə məscidi) համայնքները: Աբու Բաքր մզկիթի իմամը՝ Քամեթ Սուլեյմանովը և Ջումա մզկիթի իմամը՝ Իլքար Իբրահիմովը, երիտասարդ և խարիզմատիկ հոգևորականներ էին, որոնք երկուսն էլ կրթություն էին ստացել արտերկրում: Քամեթ Սուլեյմանովն ավարտել է Մադինայի միջազգային իսլամական համալսարանը, իսկ Իբրահիմովը՝ Քազվինի միջազգային իսլամական համալսարանը (Իրան) և Թեհրանի գիտությունների ակադեմիան, ուսանել նաև Լեհաստանում: Վերադառնալով Ադրբեջան և պաշտոնավարելով որպես իմամներ՝ նրանց հաջողվել էր համախոհների լայն շրջանակ ստեղծել՝ քարոզչությունից բացի մեծ նշանակություն տալով նաև սոցիալական ուղղությանը: Նրանք երկուսն էլ մզկիթի համայնքների նախկին իմամներ են: Աբու Բաքր մզկիթը փակվեց 2008թ. օգոստոսին, իսկ 2004-ից Իբրահիմովը չի պաշտոնավարում Ջումա մզկիթում: Սակայն երկու իմամներն էլ շարունակում են ակտիվորեն գործել մզկիթի շրջանակներից դուրս:

1997թ. քուվեյթցի մեծահարուստ Մուհամեդ իբն Բուդեյան Բալանական վերածննդի ժառանգության քուվեյթական կազմակերպության անունից Բաքվի Նարիմանով թաղամասում հովանավորեց իր մեծությամբ և ճարտարապետությամբ առանձնա-

ցող Աբու Բաքր մզկիթի<sup>1</sup> կառուցումը: 1998թ. մարտին Աբու Բաքր մզկիթի համայնքը, որի հիմնադիրները<sup>2</sup> տասնութն էին՝ թե՛ սուննիներ, թե՛ շիաներ, գրանցվեց արդարադատության նախարարությունում: 1998թ., առանց Կովկասի մուսուլմանների վարչության հավանության, Քամեթ Սուլեյմանովը համայնքի կողմից օրինական ճանապարհով ընտրվեց Աբու Բաքր մզկիթի, որ նույնն է թե՛ համայնքի իմամ<sup>3</sup>:

Աբու Բաքր մզկիթի համայնքն իրեն համարում էր ահլ ալ-սուննա վա ալ-ջամաա (Əhlİ Sünnə vəl Cəməə), այսինքն՝ սուննի իսլամի հետևորդ: Սուլեյմանովի հեղինակության շնորհիվ Աբու Բաքրը, որն Ադրբեջանի ամենամեծ սուննիական մզկիթն էր, դարձավ սուննիականության կենտրոնը: Ի տարբերություն տեղական ավելի փոքր մզկիթների, Աբու Բաքրը կարող էր տեղավորել 7000-10.000 հավատացյալի<sup>4</sup>: Ուրբաթ և տոն օրերին հավատացյալները հավաքվում էին մզկիթի բակում և հարակից տարածքում: Մզկիթի գործունեությունը Բաքվի ընդգծված աշխարհիկ քաղաքային մշակույթի մեջ ստեղծեց որոշակի իսլամական մթնոլորտ: Կարճ ժամանակահատվածում մզկիթը, չնայած սուննիական ուղղվածությանը, մեծ ճանաչում ձեռք բերեց: Քամեթ Սուլեյմանովն իր հարցազրույցներից մեկում

<sup>1</sup> Մզկիթն անվանակոչվել է ի պատիվ Մուհամեդ մարգարեի զինակից և առաջին արդարադատ խալիֆա Աբու Բաքր Աս-Սիդդիկի (632-634թթ.), որի դստեր հետ մարգարեն ամուսնացած էր:

<sup>2</sup> Նշենք, որ Ադրբեջանում կրոնական որևէ կառույցի հիմնադրման համար անհրաժեշտ է հիմնադիրների ամսվա 10 մարդուց կազմված խումբ:

<sup>3</sup> Sartarov, Rufat (2010), pp. 187-188.

<sup>4</sup> Azerbaijan: "Alternative Islam" Takes Several Forms (by Liz Fuller), <http://www.rferl.org> (10.08. 2007).

նշում է, որ առաջին անգամ, երբ 1998թ. աղոթում էին, հիսուն մարդ էր ներկա, իսկ երեք տարի անց՝ հինգ հազար<sup>1</sup>:

Աբու Բաքրն Աղրբեջանի սուննիական մշակույթի մեջ ներդրեց ուրբաթօրյա քարոզը՝ խուտբան: Աղրբեջանում խոսքի ազատության բացակայության պայմաններում մզկիթները քաղաքական ակումբի դեր էին կատարում: Աբու Բաքրի հաջողության պատճառներից մեկը Քամեթ Սուլեյմանովի հռետորական ձիրքն էր, աստվածաբանական պատրաստվածությունն ու արաբերենի իմացությունը: Մզկիթ հաճախողների մեջ շատ էին երիտասարդ և կրթված մարդիկ, այդ թվում՝ ռուսախոսներ, նաև՝ կանայք, ովքեր մզկիթ հաճախելուն զուգահեռ՝ շատ դեպքերում ուսումնասիրում էին նաև արաբերեն, Ղուրան, հադիսներ և այլն: Սալաֆիականության բնորոշ գծերից մեկը քարոզների մատչելիությունն էր, պարզությունը, հավատացյալներին միավորող համայնքի գաղափարը, որտեղ բոլորը հավասար էին և պատրաստ օգնել ու սատարել միմյանց, հոգևոր արժեքների գերակայությունը նյութականի նկատմամբ, ինչը գրավիչ էր դարձնում կրոնական այս նոր ուղղությունը անկախությունից հետո սոցիալական խնդիրների մեջ հայտնված աղրբեջանական հասարակության որոշ շերտերի համար: Սալաֆիականությունն արագ տարածվում էր երիտասարդության շրջանում: Ավելանում էին սուննի-սալաֆիական մզկիթները: 2005թ. հրապարակումներից մեկում նշվում է, որ միայն Բաքվում սալաֆիականների թիվը 15.000-ի էր հասնում<sup>2</sup>: Թե

որքան է սալաֆիականների ներկա թիվն Աղրբեջանում, դժվար է ասել՝ հաշվի առնելով շրջանաժող տարբեր թվերը:

Աղրբեջանում սուննի-սալաֆիական քարոզչությունն աչքի էր ընկնում հակակառավարական շեշտադրումներով, Աղրբեջանի՝ աշխարհիկ և ավտորիտար պետության քննադատությամբ: Ասվածի ապացույցներից են Աբու Բաքր մզկիթի կայքէջում ծավալված քննարկումները: Սակայն Սուլեյմանովն անձամբ շրջանցում էր քաղաքական խնդիրները<sup>3</sup>: Նա փորձում էր խուսափել Կովկասի մուսուլմանների վարչության և մասնավորապես Փաշազադեի հետ առճակատումից ևս: Սուլեյմանովին նույնիսկ հաջողվեց շահել պաշտոնական հոգևորականների աջակցությունը: Բաքվի իսլամական համալսարանի ռեկտոր Մաբիր Հասանլին Սուլեյմանովին բնութագրեց որպես «կրթված, երիտասարդ ու խոստումնալից կադր»<sup>2</sup>:

Իրենց հերթին, իշխանությունները սալաֆիական մզկիթները համարում էին արմատական ու ծայրահեղական գաղափարների տարածման և աղրբեջանցի երիտասարդների հավաքագրման հարթակներ: Աղրբեջանում պետական մակարդակով իրականացվում էր հակասալաֆիական քարոզչություն: Սալաֆիականներին հետապնդում էին: Եղել են դեպքեր, երբ ոստիկանները բռնի սամիրել են սալաֆիականների մորուքը, ինչը վերջիններիս մոտ ընդունված է: Աղրբեջանցիներից շատերը սալաֆիականներին ծաղրանքով անվանում էին մորուքավորներ (sakkalilar) կամ սևամորուսներ (garasakkalilar)<sup>3</sup>: Հասկա-

<sup>1</sup>Worshipping in the Cross Hairs (by Shahla Sultanova).Transitions Online magazine (07.08. 2012).

<sup>2</sup>Valiyev, Anar (2005).

<sup>1</sup> Bedford, Sofie (2009), pp.120-122.

<sup>2</sup> Sattarov, Rufat (2010), p.188.

<sup>3</sup> Valiyev, Anar (2005).

նշական է, որ Աբու Բաքրը նույնպես գերծ չմնաց այս քաղաքականությունից: Ոստիկանությունը հետապնդում էր այն մարդկանց, ովքեր մզկիթ էին հաճախում, կրոնական գրականություն ունեին, խմբակներում արաբերեն էին պարապում<sup>1</sup>:

2008թ. օգոստոսի 17-ին Աբու Բաքր մզկիթում իրականացվեց ահաբեկչություն, որի հետևանքով մահացավ երկու մարդ, տասից ավելին վիրավորվեց<sup>2</sup>: Ահաբեկչության կազմակերպման մեջ պետությունը մեղավոր ճանաչեց «Անտառային եղբայրներ» անունով արմատական խմբավորմանը<sup>3</sup>, որի հետ կապ ունեցող մոտ երեք տասնյակ մեղադրյալներ դատապարտվեցին<sup>4</sup>: Չնայած երկարատև դատական գործընթացին, մզկիթն այդպես էլ չբացվեց՝ համայնքի անդամների, մզկիթ այցելողների և շրջակայքում ապրող բնակիչների համար անվտանգ չլինելու հիմնավորմամբ: Աբու Բաքր մզկիթ այցելողները սկսեցին աղոթել սալաֆիական ուղղվածությամբ այլ մզկիթներում:

Մզկիթի փակումը պետության շահերից էր բխում. Աբու Բաքրի գոյությունը մտահոգիչ էր կրոնաստիության և կրոնական պահպանողական գաղափարների տարածման տեսանկյունից: Քամեթ Մուլեյանտովը մեկ անգամ չէ, որ փորձել է պարզաբանել իր և համայնքի գաղափարական ուղղվածությունը՝ նշելով, որ իրենք վահաբականներ չեն, այլ «ճշմարիտ իսլամի» հետևորդներ: Մուլեյանտովը քննադատել է ահաբեկչությունը՝ իսլամի ան-

<sup>1</sup> Worshipping in the Cross Hairs (by Shahla Sultanova), Transitions Online magazine (07.08. 2012).

<sup>2</sup> Является ли Азербайджан кляфрской страной, <http://www.i-r-p.ru> (28.11. 2008).

<sup>3</sup> «Անտառային եղբայրների» մասին տե՛ս հաջորդիվ:

<sup>4</sup> Alleged Islamic insurgents on trial in Azerbaijan, <http://www.refworld.org> (12.02. 2010).

վան ներքո: Նրա համոզմամբ՝ հավատացյալների դեմ հետապնդումները հակառակ նշանակությունը կունենան<sup>5</sup>:

Ջումա մզկիթի համայնքի գոյությունը նույնպես առանձնանում էր Բաքվի աշխարհիկ միջավայրում: Ջուման, որ գտնվում է Իչերիշեհերում, կառուցվել էր 11-րդ դարում և մինչև խորհրդայնացում ծառայել որպես աղոթատեղի: 1937թ. մզկիթը փակվեց, իսկ 1968թ. խորհրդային իշխանություններն այն դարձրին գորգերի թանգարան: Մզկիթը գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում, իսկ ըստ Ադրբեջանի վարչապետի 2001թ. օգոստոսի 2-ի որոշման՝ մզկիթը համարվեց պետության պաշտպանության ներքո գտնվող պատմական և մշակութային հուշարձան<sup>6</sup>: 1992թ. օգոստոսի 25-ին Ջուման հանձնվեց հավատացյալների համայնքին և վերանորոգվեց: Այդ շրջանից ի վեր օգոստոսի 25-ը նշվում է որպես «Ջումա համայնքի ազատագրման օր»: Մզկիթի կրոնական համայնքի հիմնադիրներից էին Ազեր Ռամիզօղլու Մամեդովը<sup>7</sup> և Իլթար Իբրահիմօղլու Ալլահվերդիևը: 1993թ. մարտի 3-

<sup>5</sup> Worshipping in the Cross Hairs (by Shahla Sultanova), Transitions Online magazine (07.08. 2012).

<sup>6</sup> European Court of Human Rights, first Decision, First Section Decision, Juma Mosque Congregation and Others Against Azerbaijan, Application no. 15405/04, <http://hudoc.echr.coe.int>, 8 January, 2013.

<sup>7</sup> Ադրբեջանցի կրոնական գործիչ, քաղաքացիական ակտիվիստ, մարդու իրավունքների պաշտպան: Ձերբակալվել է 2006թ. մարտի 31-ին՝ Վրաստանում Ադրբեջանի իշխանությունների դիմումի համաձայն՝ մեղադրվելով 2003թ. հոկտեմբերի 15-16-ի անկարգություններին մասնակցելու մեջ: 2006թ. ապրիլի 14-ին գրավի դիմաց ազատ է արձակվել: Վրաստանի իշխանությունները, հիմք ընդունելով կան վավաստացնող վերաբերմունքի ու պատմի դեմ ՄԱԿ կոլոկեցիային այն փաստը, որ իրենք միացել են Խոշտանգումների և այլ դաժան, անարդյույն կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատմի դեմ ՄԱԿ կոլոկեցիային, հրաժարվել են Սամեդովին հանձնել Ադրբեջանի իշխանություններին: Նա Վրաստանից տեղափոխվել է Եվրոպա և ներկայումս ապրում է վտարանդիության մեջ:

ին մզկիթը պաշտոնապես գրանցվեց Աղբրեջանի արդարադատության նախարարությունում: Սկզբնական փուլում մզկիթ էին այցելում իրանցի բարձրաստիճան հոգևորականներ, ովքեր վարում էին կրոնական ծիսակարգերը<sup>1</sup>:

1993-1998թթ. մզկիթի իմամը Ռամիզօղլուն էր, սակայն 1998թ. բարձրագույն աստվածաբանական կրթություն ստանալուց հետո Բրահիմօղլուն վերադարձավ Իրանից և անմիջապես ընտրվեց մզկիթի համայնքի ղեկավար՝ դառնալով իմամ ջամաաթ (imam-camaat): Թե՛ մզկիթի համայնք և թե՛ մզկիթի համայնքի իմամ անուններն անծանոթ էին հետխորհրդային Աղբրեջանին<sup>2</sup>: Մզկիթի գործունեությանը զուգահեռ՝ Ռամիզօղլուն և Բրահիմօղլուն ստեղծեցին հասարակական կազմակերպություն՝ «Բսլամական միասնության համայնք» (Islam-Itihad Camiyyati) անունով, որը մզկիթի հետ համատեղ սկսեց իրականացնել բազմաթիվ սոցիալական՝ բարեգործական ծրագրեր<sup>3</sup>: «Հայրենիք առանց որբերի» ծրագիրը հոգում էր որբ երեխաների նյութական ծախսերը, նրանց համար կազմակերպում արհեստների դասընթացներ: «Պայքար թմրանյութերի և ալկոհոլիզմի դեմ» ծրագիրը փորձում էր օգնել թմրամոլների ճանաչել հոգևոր արժեքները և հրաժարվել կախվածությունից: Համայնքին կից ստեղծվել էր նաև երկխոսության կենտրոն՝ «Իմաստության տուն», որտեղ կազմակերպվում էին քննարկումներ: Ջուման առաջին շիայական համայնքն էր Բաքվում, որն իրականացրեց «Ասմա ալ-հուսնա» («Ալլահի լավագույն անունները»)

<sup>1</sup> Sattarov, Rufat (2010), p. 185-186.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>3</sup> Նույն տեղում:

ծրագիրը, որի շրջանակներում համայնքի անդամները Աշուրայի օրերին հանդես էին գալիս որպես արյան դոնորներ<sup>4</sup>:

2000թ. Իլքար Բրահիմօղլուն Ազեր Ռամիզօղլուի հետ հիմնադրեց Դավանանքի պաշտպանության և խղճի ազատության կենտրոնը՝ DEVAMM-ը: Երկու տարի անց Բրահիմօղլուն դարձավ Կրոնական ազատության միջազգային ասոցիացիայի աղբրեջանական մասնաճյուղի քարտուղարը<sup>5</sup>՝ իր գործունեության առանցքը դարձնելով քաղաքացիների կրոնական իրավունքների պաշտպանությունը:

2001թ. Ջուման շաբաթը մեկ անգամ սկսեց հրատարակել կրոնական թեմաներին նվիրված պարբերական: Մեկ այլ նորարարություն կապված էր ուրբաթօրյա քարոզի խոստրայի հետ, որը նույնպես անծանոթ էր տեղական շիայական համայնքներին: Բրահիմօղլուն հակադրվեց այն տեսակետին, որ խոստրա կարող են վարել միայն շիա բարձրաստիճան հոգևորականները՝ մուջթահիդները: Բացի այդ, համարվում էր, որ խոստրան հակասում է Աղբրեջանի Սահմանադրությանը, որով պետությունը և կրոնը բաժանված են իրարից, քանի որ ուրբաթօրյա քարոզի ընթացքում շոշափվում են քաղաքական թեմաներ ևս<sup>6</sup>:

Աստիճանաբար, լարվածություն էր առաջանում Բրահիմօղլուի և Կովկասի մուսուլմանների վարչության միջև, որի օրինակարգությունն Բրահիմօղլուն չէր ընդունում: Հատկանշական է, որ Կովկասի մուսուլմանների վարչությունից չնշանակված իմամները, գործելով օրենքի շրջանակներում, միև-

<sup>4</sup> Юнсов, Ариф (2004).

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Sattarov, Rufat (2010), p. 186.

նույն ժամանակ անկախ քաղաքականություն էին վարում: Նշենք մի հետաքրքիր փաստ՝ կապված նվիրատվության արկղների (nəzir qutususu) հետ: Անկախ իմամներից շատերը արկղներ կամ չէին տեղադրում մզկիթի ներսում, ինչպես դա պահանջում էր ԿՄՎ-ն, կամ էլ տեղադրում էին այն մզկիթից դուրս՝ նվիրատվություններն օգտագործելով համայնքի կարիքները հոգալու և ոչ թե ԿՄՎ-ին փոխանցելու համար: Հարկ է նկատի ունենալ, որ Ջուման մզկիթի ներսում նվիրատվության արկղ չկար: Բացի այդ, Ջուման կրոնական ծառայություններ էր մատուցում անվճար հիմունքներով: Ընդհանրապես, մզկիթի գործունեությունն այժի էր ընկնում թափանցիկությամբ և կամավորների լայն ներգրավվածությամբ<sup>1</sup>:

Իրրահիմոզլուն հանդես էր գալիս Ադրբեջանում դավանանքի ազատության պաշտպանությամբ, սակայն բացասական վերաբերմունք ուներ վահաբականների նկատմամբ: Նա հանդես էր գալիս արևմտյան ժողովրդավարական և իսլամական արժեքների միաձուլման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման դիրքերից, որի բաղկացուցիչներից էր համարում դպրոցներում գլխաշոր կրելու իրավունքը:

2003թ. նախագահական ընտրությունների շեմին Իրրահիմոզլուն սատարեց «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Իսա Ղամբարի թեկնածությանը: Ընտրություններից հետո սկսված բռնությունների արդյունքում Իրրահիմոզլուն ձերբակալվեց՝ 2003թ. հոկտեմբերի 15-16-ը գանգվածային անկարգություններ հրահրելու մեղադրանքով, որը նա մինչև վերջ էլ չընդունեց: 2004թ. ապրիլի 2-ին նա դատապարտվեց հինգ տարի

պայմանական ժամկետով և ազատ արձակվեց նաև արտաքին ճնշումների արդյունքում՝ բնակության վայրից չբացակայելու պայմանով: Սակայն իշխանություններն արդեն իսկ որոշել էին Իրրահիմոզլունի հեռացնել կրոնական ասպարեզից: 2004թ. հունիսի 22-ին ադոթքի ժամանակ մզկիթ մտած ուժային կառույցի ներկայացուցիչները պահանջեցին համայնքի անդամներին ազատել տարածքը (հիմք ունենալով դատարանի համապատասխան որոշումը, ըստ որի՝ Ջուման ճարտարապետական հուշարձան է և պետք է ծառայի այդ նպատակի համար), սակայն Իրրահիմոզլուն հրաժարվեց նրանց հետ բանակցել և շարունակեց ադոթքը: Հունիսի 30-ին ոստիկանները շրջապատեցին մզկիթի տարածքը և սկսեցին քաշքշելով դուրս բերել ադոթողներին: ԿՄՎ-ն մզկիթ ուղարկեց իր իմամին, որին համայնքը հրաժարվեց ճանաչել: Հաջորդող օրերին լարվածությունը շարունակվում էր. ոստիկանական բաժանմունքներ էին տեղափոխվում համայնքի անդամներ, այդ թվում՝ կանայք, որոնք ձերբակալման ժամկետի ավարտից հետո հիմնականում ազատ էին արձակվում: Ի վերջո, հուլիսի 9-ին մզկիթը փակվեց վերանորոգման շարժառիթով: Հուլիսի 30-ին, երբ համայնքի մի խումբ անդամներ հուղարկավորությունից հետո մասնավոր շենքում Իրրահիմոզլունի գլխավորությամբ ադոթում էին, ոստիկանությունը շրջապատեց տարածքը և ձերբակալեց 26 մարդու: Ոստիկանությունը դեպքի առիթով պարզաբանեց, որ Ջուման գրանցված կրոնական կազմակերպություն չէ, իսկ Իրրահիմոզլուն ներգրավված է հակապետական քարոզչության մեջ: Նշվեց, որ մասնավոր շենքերում հասարակական ադոթքներն արգելված են: Ահա այս շրջանից ի վեր Իրքար Իրրահիմոզլուն

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 187:

այլևս Ջումա մզկիթի իմամը չէ: 2013թ. Մարդու իրավունքների եվրոպաատարանն արդարացրեց նրան<sup>1</sup>:

Իրրահիմնողութի պաշտոնակատարությունը շահեկան էր ոչ միայն պետության, այլև Կովկասի մուսուլմանների վարչության համար, որին չէր կարող չանհանգստացնել Իրրահիմնողութի աճող հեղինակությունը մասնավորապես երիտասարդության շրջանում: Պաշտոնակատարությունից հետո Իրրահիմնողուն իր գործունեությունը հիմնականում տեղափոխեց DEVAMM, որտեղ կազմակերպվում են մամուլի ասուլիսներ, սեմինարներ, քննարկումներ: Նա ունի բավական մեծ լսարան, որի մի մասը Ջումա մզկիթի համայնքի անդամներն են: Իրրահիմնողութի դասախոսությունները, ելույթներն ու հարցազրույցները պահանջոված են: Նա Ադրբեջանի կրոնական և հասարակական կյանքի ակտիվ մասնակից է, հասարակական տրամադրություններ ձևավորող, առաջադեմ հայացքներ ունեցող շիա հոգևորական և քաղաքացիական ակտիվիստ, ինչը հետաքրքիր է դարձնում նրա անձը ոչ միայն Ադրբեջանում, այլ նաև Արևմուտքում: Իրրահիմնողուն այն գործիչներից է, ով առանձնանում է Փաշազադեին ուղղված կոշտ քննադատությամբ:

### ***Իսլամական արմատականության դրսևորումներն Ադրբեջանում***

Անկախությունից հետո Ադրբեջանում սկսեցին տարբեր ձևաչափերով գործել միջազգային արմատական իսլամական կրո-

<sup>1</sup> European Court of Human Rights, first Decision, First Section Decision, *Juma Mosque Congregation and Others Against Azerbaijan*, Application no. 15405/04, <http://hudoc.echr.coe.int>, 8 January 2013; Председатель DEVAMM Идгар Ибрагимовлю одержал победу в Евросуде, <http://www.salamnews.az> (21. 06.2012).

նաքաղաքական տարաբնույթ կազմակերպությունների (հիմնականում պանիսլամական ուղղվածությամբ) մասնաճյուղեր, որոնցից էին՝ «Հիզբ ութ-թա հրիբ ալ-իսլամին» («Ազատագրության իսլամական կուսակցություն»), «Ջեյ-շուլլահը» («Ալլահի բանակ»), «Ալ-Ջիհադը», «Ալ-Կաիդան», «Ջամա ալ-իխվան ալ-մուսլիմինը» («Մուսուլման եղբայրներ») և այլն: Արմատական գաղափարների տարածման հարթակ էին նաև միջազգային հեղինակություն և օրինակարգություն ունեցող և սալաֆիական ուղղվածությամբ «Իսլամական աշխարհի լիգայի»՝ Ադրբեջանում գործող մասնաճյուղերը՝ «Փրկությունը» («Ալ-Իսադա»), «Երկու սրբավայրերը» («Ալ-Հարամեյն») և այլն: 1993թ. Իրանի աջակցությամբ ստեղծվեց տեղական «Հիզբալլահը» («Ալլահի կուսակցություն»), որը կապ չուներ լիբանանյան «Հիզբալլահի» հետ և ադրբեջանական լրատվամիջոցներում հիշատակվում էր նաև «Կելայթ» ի ֆակիհ» անունով: Ադրբեջանում գործող իրանական մասնաճյուղ էր նաև «Ահլի բեյթը» («Տան մարդիկ») (նկատի է առնվում Մուհամեդ մարգարեի ընտանիքը)<sup>1</sup>:

1994թ. ռուս-չեչենական առաջին պատերազմից ի վեր Ադրբեջանի տարածքը սկսեց օգտագործվել նաև Չչենիա և Դադստան գեներ, ֆինանսական, նյութական և այլ միջոցներ ու զինյալներ տեղափոխելու համար, որը նպաստում էր «մարտնչող իսլամի» ներթափանցմանն Ադրբեջան<sup>2</sup>:

Ադրբեջանը, ըստ էության, դարձել էր նաև միջազգային ահաբեկչական ցանցի հենակետ: 2001թ. սեպտեմբերին Կոնգրե-

<sup>1</sup> Юнусов, Ариф (2004).

<sup>2</sup> Նույն տեղում:

սի հետազոտական ծառայության (Congressing Research Service) հրապարակած զեկույցում արձանագրված է, որ առանձին խմբավորումներ և անհատներ, ովքեր կապ են ունեցել Ուսամա բեն Լադենի և «Ալ-Կաիդայի» հետ, օգտագործել են Ադրբեջանի տարածքն իրենց գործունեության համար: Հաստատվեց, որ 1998թ. օգոստոսի 7-ին Նայրոբիի (Քենիա) և Դար աս-Սալամի (Տանզանիա) ամերիկյան դեսպանատների պայթյուններից առաջ Ուսամա բեն Լադենը 1996-1998թթ. 60 անգամ Աֆղանստանից զանգել է Բաքու իր համախոհներին, ավելի ստույգ՝ «Ջիհադ» կազմակերպության Բաքվի մասնաճյուղին<sup>1</sup>:

2001թ. մայիսին Ադրբեջանի անվտանգության փոխնախարար Թ.Բաբաևը հայտարարեց. «Կրոնական և միախոհերական որոշ կազմակերպություններ, որոնք ղեկավարվում են Իրանի և արաբական երկրների հատուկ ծառայությունների կողմից, նպատակ ունեն Ադրբեջանում բռնագավթել իշխանությունը»<sup>2</sup>: Մեպտեմբերի 11-ին Նյու Յորքի ահաբեկչությունից հետո Ադրբեջանի վրա կար նաև Վաշինգտոնի ճնշումը՝ պայքարելու արմատական ռազմաքաղաքական և կրոնաքաղաքական խմբավորումների դեմ, որը նաև Ադրբեջանի շահերից էր բխում: 2001թ. հետո Ադրբեջանի կառավարությունը, միջազգային հանրության համաձայնությամբ և աջակցությամբ, ձեռք բերեց ազատ գործելու լայն հնարավորություն<sup>3</sup>: Միջազգային ահաբեկչությանը ֆինանսավորելու մեղադրանքով ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Ադրբեջանում, փակվեցին «Իսլամական աշխարհի լիգայի» մի շարք մասնաճյուղեր:

<sup>1</sup> Լույն տեղում:

<sup>2</sup> Լույն տեղում:

<sup>3</sup> Չոբանյան, Գայանե (2013), էջ 76:

2001թ. դրությամբ Ադրբեջանի իշխանություններին, կարելի է ասել, հաջողվեց միջազգային իսլամական կառույցներին հիմնականում դուրս մղել հասարակական-քաղաքական դաշտից: Սակայն իսլամական պահպանողական և արմատական գաղափարները, այդ թվում՝ «մարտնչող իսլամը», Ադրբեջանում շարունակեց գոյություն ունենալ: Վերջին տարիներին բազմաթիվ տեղեկություններ, ինչպես նաև վերլուծություններ են հրապարակվել Ադրբեջանում իսլամական արմատականության գոյության, դրա տարաբնույթ դրսևորումների և հասունացող վտանգների մասին<sup>1</sup>:

Հատկանշական է, որ կրոնական արմատական տրամադրությունները ներթափանցեցին նաև ադրբեջանական բանակ, որի ապացույցն Ադրբեջանի զինված ուժերի լեյտենանտ Քյամրան Ասադովի գործունեությունն էր: 2007թ. աշնանը իշխանությունները կանխեցին Ադրբեջանում ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի դեսպանատների դեմ ծրագրված ահաբեկչությունը: Ըստ պետության առաջ քաշած վարկածի՝ այն փորձել էր իրականացնել 19 հոգանոց վահաբական մի խմբավորում, որի պարագլուխը եղել էր Ք.Ասադովը: Այս շրջանում կանխվել էր նաև նավթային օբյեկտների (Lukoil-Azerbaijan) վրա ծրագրված հարձակումը: 2009թ. մայիսին ռազմական դատարանում լուսմների ժամանակ Ասադովը հայտարարեց, որ բանակ մտել է միայն զենք ու զինամթերք ձեռք բերելու համար, իսկ իրականում նպատակ է ունեցել ծառայել Ալլահի կրոնին ու ջիհադ

<sup>1</sup> Is Azerbaijan Becoming a Hub of Radical Islam? (by Arzu Geybullayeva), [http://www.esiweb.org/pdf/esi\\_turkey\\_tpq\\_id\\_110.pdf](http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_110.pdf)

մղել<sup>1</sup>: Սալաֆիական այդ խմբավորման ներկայացուցիչները ծրագրել էին հարձակվել նաև Գոբուստանի բանտի վրա՝ ազատելու իրենց «կրոնական եղբայրներին»<sup>2</sup>:

Ի դեպ, Ադրբեջանում իշխանությունները մի շարք անգամներ կանխարգելել են օտարերկրյա դեսպանատների դեմ նախապատրաստված հարձակումները: Օրինակ՝ 2009թ. հոկտեմբերին Ադրբեջանում դատապարտվեցին երկու լիբանանցիներ, ովքեր մեղադրվեցին Բաքվում Իսրայելի դեսպանատան վրա հարձակում կազմակերպելու մեջ: Դատախազությունը նրանց մեղադրեց «Ալ-Կաիդայի» և լիբանանյան «Հիզբալլահի» հետ կապեր ունենալու մեջ<sup>3</sup>:

Ադրբեջանում «մարտնչող իսլամի» դրսևորումներից է իսլամական ռազմաքաղաքական կառույցների ընդհատակյա գործունեությունը, որոնք բազմաթիվ անգամներ ռազմական բախումներ են ունեցել Ադրբեջանի զինված ուժերի հետ: Նմանատիպ խմբավորումներից էր «Անտառային եղբայրները»: Կառույցը գործել է հիմնականում Դադստանի հարավային և Ադրբեջանի հյուսիսային, մեծ մասամբ՝ լեզգիաբնակ շրջաններում: Հյուսիսկովկասյան ծագում ունեցող նշված կառույցի անդամներն անմիջական կապեր են ունեցել չեչենական և դադստանյան ջիհադական շարժման հետ: Նրանք կոչվել են ծագումով լակ դաշտային հրամանատար Ռաբանի Խալիլովի հրամանա-

<sup>1</sup> Глававь вооруженной группировки Кямран Асадов: «Я выстрелю в спину тем журналистам, которые называют меня ваххабитом», <http://news.day.az/society/158362.html> (22.05.2009).

<sup>2</sup> Участник вооруженной группировки: «Мы планировали совершить вооруженное нападение на Гобустанскую тюрьму», <http://news.day.az> (28.01.2009).

<sup>3</sup> Почему в Азербайджане закрывают мечети, <http://www.bbc.co.uk> (03.11. 2009).

տարության ներքո, որը մինչև իր մահը (2007թ.) հայտնի է եղել որպես «Կովկասի դիմադրության ուժերի դադստանյան ճակատի» էմիր<sup>1</sup>: Հատկանշական է, որ կառույցի անդամները Դադստանից պարբերաբար կարողացել են ներթափանցել Ադրբեջան: Խմբավորման հանգուցային դեմքերից են եղել Ջաբաթալայից ծագումով լեզգի, դադստանյան ջամաաթի առաջնորդ էմիր Իլքար Մոլլաչիևը (Աբդուլմաջիդ մականունով), նաև Սամիր Մեհտիևը (Մուվեյնան մականունով):

Նշենք, որ 2007թ. Ադրբեջանի իշխանությունները Մուսլիմաթուլ Դեբբակալեցին «Անտառային եղբայրների» 17 ակտիվիստների, այդ թվում խմբավորման առաջնորդներից մեկին՝ ծագումով արաբ, Մատույան Արաբիայի քաղաքացի Նաիֆ Աբդ Ալ-Քերիմ Ալ-Բադավիին (Աբու Ջաֆար մականունով): Ըստ ադրբեջանական պաշտոնական տեղեկատվության՝ Մոլլաչիևը և Մեհտիևը փորձել էին աշխուժացնել «Անտառային եղբայրների» գործունեությունն Ադրբեջանում և իրականացնել ահաբեկչական գործողություններ: Նրանք ծրագրել էին ստեղծել «Մուսլիմաթուլ ջամաան», ինչպես նաև «Նուրա-Քուսար ջամաան», որը երկրի լեզգիաբնակ լեռնային շրջաններում պետք է հիմներ ռազմական հենակետեր և զինանոցներ: Նրանց էական օգնություն են ցույց տվել նաև տեղացիներ: 2008թ. օգոստոսի 17-ին Աբու Բաքր մզկիթի ահաբեկչությունը, ըստ պաշտոնական վարկածի, կազմակերպել էին «Անտառային եղբայրները», իսկ ավելի ստույգ՝ Ի.Մոլլաչիևի խումբը: Մզկիթում իրականացված պայթյունից հետո, օգոստոսի վերջին, խմբավորումը ռազմա-

<sup>1</sup> Ռաբանի Խալիլովը 1999-ից Դադստանում Ալ-Սաուտաթի հրամանատարությամբ կոչվել է ռուսական բանակի դեմ:

կան գործողություններ իրականացրեց արդեն Ադրբեջանի իրավապահ ուժերի դեմ Քուսարի շրջանում: Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ իրավապահ ուժերը պայթյաբեղ են «վահաբական զինված խմբավորումների դեմ, ովքեր ձգտում են ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում և արդյունքում՝ Հյուսիսային ու Հարավային Կովկասում ստեղծել իսլամական պետություն»:

2008թ. օգոստոսի 19-ին, ըստ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի մամլո քարտուղարի հայտարարության՝ հյուսիսային շրջանում տեղի ունեցած դեպքերն Ադրբեջանի համար վտանգ չէին ներկայացնում: Այս փուլում Ադրբեջանում ակտիվացան քննարկումներն իսլամական արմատականության դրսևորումների շուրջ<sup>1</sup>:

2008թ. սեպտեմբերի 7-ին Ռուսաստանի և Ադրբեջանի անվտանգության ուժերին հաջողվեց Դաղստանում վերացնել Մոլլաչիևին, իսկ դրանից հետո Ադրբեջանի իշխանություններն իրականացրին «Անտառային եղբայրների» զանգվածային ձերբակալություններ: Հատկանշական է, որ Մոլլաչիևի սպանությունից և կառույցի բազմաթիվ անդամների ձերբակալությունից հետո «Անտառային եղբայրները» ռազմական բախում ունեցան ադրբեջանական ներքին ուժերի հետ, որը չեզոքացվեց:

Ադրբեջանում աճող կրոնական ծայրահեղականության դրևորումներից է նաև բազմաթիվ ադրբեջանցի ջիհադականների մասնակցությունը միջազգային զինված հակամարտություններին՝ Իրաքում, Աֆղանստանում, Պակիստանում, Սիրիայում և

<sup>1</sup> Может ли волна исламского радикализма перекинуться и на Азербайджан?, <http://inosmi.ru> (20/08/2009).

այլուր: Այս իրողությունն անմիջականորեն կապ ունի նաև Ադրբեջանի սոցիալական իրավիճակի հետ, քանի որ ադրբեջանցիներից շատերը գնում են կովեյու ֆինանսական դրոպպատ-ճառներից ելնելով: 2013-ից ադրբեջանական և միջազգային լրատվամիջոցները տեղեկություններ հրապարակեցին Սիրիայում կովոլ ադրբեջանցի զինյալների մասին: Մակայն թե՛ նրանց թվաքանակի և թե՛ մահացածների վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան: Առանձին տեսակետների համաձայն՝ Սիրիայում կովել են թե՛ սուննի (Ասադի վարչակարգի դեմ) և թե՛ շիա զինյալներ (սիրիական կառավարական զորքի կողմից)<sup>2</sup>:

Ադրբեջանական հասարակական կարծիքը խիստ բացասաբար արձագանքեց Սիրիայում կովոլ ադրբեջանցի զինյալների փաստին: Նշված թեման առիթ դարձավ, որպեսզի Ղարաբաղյան հարցը նոր հնչեղություն ստանա: Կոչեր արվեցին Սիրիայի փոխարեն կովել Ղարաբաղի համար<sup>3</sup>:

Սիրիայում կովոլ ադրբեջանցիների թեմային անդրադարձավ նաև հոգևոր դասը: Շեյխ ուլ-իսլամը նշեց, որ Ադրբեջանում սխալ պատկերացումներ կան հավատքի պատերազմի՝ ջիհադի և նահատակության՝ շահիդականության մասին: Այս համատեքստում, 2014թ. հունվարի վերջին, Կովկասի մուսուլմանների վարչության կադիների խորհուրդը հրապարակեց ֆեթվա, որտեղ ամրագրվեցին ոչ միայն շահիդ հասկացողության սահմանները, այլև Սիրիայում կովոլ ադրբեջանցիների ոչ շահիդ լինելու հանգամանքը<sup>3</sup>:

<sup>1</sup> Rovshenoglu, Kenan & Balci, Bayram (2013).

<sup>2</sup> Տե՛ս Էլնուր Կուլիևի (<http://vesti.az> 13.07.2013) և մարզու իրավունքների շիա իրավապաշտպան Իլթար Իբրահիմովի կարծիքները (<http://vesti.az> 17.07.2013):

<sup>3</sup> Ферма УМК по уезжающим воевать в Сирию, <http://www.radioazadlyg.org> (28. 01. 2014).

Միրիայում կռվող աղրբեջանցիների հիմնահարցին արձագանքելով՝ Աղրբեջանի խորհրդարանը 2014թ. մարտին Քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարեց, համաձայն որի՝ խստացան պատիժները վարձկանության և ահաբեկչության համար: Վարձկանության հողվածով անցնողները Աղրբեջանի նոր օրենքով կդատապարտվեն 8-12, ահաբեկչության հողվածով անցնողները՝ 10-15 տարի ազատազրկման<sup>1</sup>:

Միրիական ճգնաժամը կարող է նպաստել Աղրբեջանում կրոնական արմատական տրամադրությունների ընդլայնմանը: Առանձին գնահատականների համաձայն՝ Աղրբեջանը հայտնվել է սուննիական երկու կրակի արանքում՝ «Կովկասի էմիրության» և ջիհադական պայքարի աքցանում հայտնված Միրիայի միջև<sup>2</sup>:

Եթե Աղրբեջանի իշխանություններին հաջողվեց դուրս մղել միջազգային իսլամական ռազմաքաղաքական և կրոնաքաղաքական կառույցների մասնաձյուղերը, ապա «աներևույթ թշնամու» մոլեկրոնության դեմ պայքարն ավելի դժվար է: Փաստ է, որ վերջին տարիներին Աղրբեջանում ի հայտ են եկել կրոնական ծայրահեղականության դրսևորումներ: Ասվածի ապացույցը 2011թ. աղրբեջանցի գրող և հրապարակախոս Ռաֆիկ Թաղիի (Թաղին) սպանությունն էր: Դրան նախորդել էր 2006թ. Թաղիի և «Մենեթ» թերթի խմբագիր Սամիր Մադադաթօղլուի դատավարությունը: Լշված դեպքերի շարժառիթը Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների միջազգային ազմուկից հետո «Մենեթ»

<sup>1</sup> Воюющим в Сирии азербайджанцам грозит 12 лет тюрьмы, <http://www.yenizaman.az> (14.03.2014).

<sup>2</sup> Azerbaijan: Caught between Two Jihadi Flames, <http://geostrategicforecasting.net> (24.12.2013).

թերթում Ռ.Թաղիի հրատարակած «Եվրոպան և մենք» հոդվածն էր<sup>3</sup>, որը կրոնական ծայրահեղականների կողմից դիտարկվեց որպես իսլամին և Մուհամեդ մարգարեին վարկաբեկող նյութ: Դրանում հեղինակը խոսում էր իսլամական արժեքների նկատմամբ քրիստոնեական արժեքների գերակայության մասին: Թե՛ հողվածը, թե՛ թերթը քննադատել էր նաև Փաշազադեն<sup>4</sup>:

Նարդարանում 2006թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Ռ.Թաղիի դեմ մահապատժի որոշում էր ընդունվել: Ցուցարարները վանկարկել էին նաև «Մա՛հ Իսրայելին», բոլոր ելույթներին արձագանքել թաքքիրով՝ Ալլահու աքբար վանկարկելով: Աղրբեջանի իսլամական կուսակցության փոխնախագահ Հաջիադա Նուրիևի համոզմամբ՝ Թաղիին գործել է հանուն միջազգային սինիզմի և Հայաստանի<sup>5</sup>:

Ռ.Թաղիի և Ս.Սադադաթօղլուի դատավարությանը մասնակցեցին Նարդարանից Բաքու ժամանած ծայրահեղականներ, ովքեր դատական նիստի ավարտից հետո պահանջում էին մահապատժի ենթարկել հրապարակախոսին<sup>6</sup>: Թաղիին դատապարտվեց 4 տարվա ազատազրկման, սակայն բանտում 8 ամիս անցկացնելուց հետո նախագահի 2007թ. դեկտեմբերի համաձայնությամբ ազատ արձակվեց: Համաներումը տարածվեց նաև Սադադաթօղլուի վրա<sup>7</sup>:

<sup>1</sup> Հողվածի ամբողջական տեքստը՝ Европа и мы, <http://russianquestion.livejournal.com/4009.html>

<sup>2</sup> Семь ударов ножом. В Баку убит писатель, критиковавший ислам, <http://lenta.ru> (24.11.2011).

<sup>3</sup> Жители азербайджанского села вынесли смертный приговор журналисту за «оскорбление ислама», <http://www.blagovest-info.ru> (13.11.2006).

<sup>4</sup> Азербайджан: исламские радикалы грозят казнить журналистов <http://t-r-p.ru> (16.04.2007).

<sup>5</sup> Ильхам Алиев помиловал 119 заключенных, <http://news.day.az> (28.12.2007).

Հարկ է նկատի ունենալ, որ նշված դեպքին խիստ բացասաբար արձագանքեց ազերիական ծագում ունեցող և Ադրբեջանում ժողովրդականություն վայելող իրանցի այաթուլա Մուհամեդ Ֆազիլ Լենքորանին՝ մահվան ֆեթվա հրապարակելով հողվածագրի և խմբագրի դեմ: Այս պատմությունն աղերսներ ուներ Մալման Ռուշդիի հայտնի դեպքի հետ: Իր հերթին, իրանցի այաթուլա Մորթեզա Բանի Ֆազըլը Թադիին սպանողին խոստացել էր իր բնակարանը՝ որպես պարգև<sup>1</sup>:

2011թ. նոյեմբերի 19-ն Ռաֆիկ Թադիին դանակահարելով փորձեցին սպանել: Հրապարակախոսը մահացավ հիվանդանոցում նոյեմբերի 23-ին<sup>2</sup>: Իր վերջին հարցազրույցում նա ենթադրել էր, որ մահափորձի պատճառ կարող էր դառնալ Իրանի վերաբերյալ իր հողվածներից մեկը<sup>3</sup>: Թադին քննադատել էր Իրանը «որպես ավտորիտար պետություն, որպես հեշտ փլուզվող միջ, որի մշակույթը հեռու է մարդասիրությունից»<sup>4</sup>:

<sup>1</sup> Иранский аятолла Мортеза Бани Фаэл пообещал свой дом в качестве награды тому, кто убьет азербайджанского журналиста, <http://i-r-p.ru> (21.11. 2006).

<sup>2</sup> Умер Рафик Таги, <http://i-r-p.ru> (23.11. 2011).

<sup>3</sup> Подвергшийся нападению азербайджанский писатель умер в больнице, <http://lenta.ru> (23.11.2011).

<sup>4</sup> Рафик Таги, Иран и неизбежность глобализации, <http://www.radioazadlyg.org> (24.11.2011).

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ  
ԻՍԼԱՄ ԱԴԻԲԵՏԱՆԻ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

*Հայաստանի դեմ Ադրբեջանի  
քարոզչության իսլամական բաղադրիչը*

Հեյդար Ալիևի իշխանության գալուց ի վեր իսլամը կարևորագույն տեղ զբաղեցրեց Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ: Այս գիծը շարունակություն ստացավ Իլհամ Ալիևի իշխանության շրջանում ևս: Հատկանշական է, որ աշխարհիկ հիմքեր ունեցող Ադրբեջանն իրեն անվերապահորեն համարեց իսլամական Ումմայի բաղկացուցիչը՝ ձգտելով իսլամական պետությունների հետ սերտ ու համապարփակ համագործակցության հաստատմանը: Այս մասին բազմաթիվ անգամ հայտարարել են թե՛ Հեյդար, թե՛ Իլհամ Ալիևները: 2006թ. ԻՀԿ արագործնախարարների Բարվի 33-րդ նստաշրջանում էլույթ ունենալով՝ Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամադյարովը մասնավորապես նշեց. «Ադրբեջանը իսլամական Ումմայի անդամ է... և ձգտում է ներդրում ունենալ ազգերի երկխոսության մեջ՝ որպես կամուրջ Արևելքի և Արևմուտքի միջև»<sup>1</sup>:

<sup>1</sup> Addresses by the Minister of Foreign Affairs of th Republic of Azerbaijan Elmar Mammadyarov, Journal of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006, p. 7.

Անշեղորեն հետամուտ լինելով արտաքին քաղաքականության իսլամական ուղղության զարգացմանը՝ Ադրբեջանն սկսեց ակտիվորեն համագործակցել իսլամական աշխարհի կրոնաքաղաքական ամենամեծ կառույցի՝ Իսլամական համագործակցություն կազմակերպության հետ, որի գաղափարախոսության հիմքում ընկած են իսլամական համերաշխության և համագործակցության գաղափարները: 2013թ. իր ելույթներից մեկի ժամանակ Իլիամ Ալիևը մասնավորապես նշեց. «Մենք գործնական քայլեր ենք իրականացնում իսլամական համերաշխության ամրապնդման ուղղությամբ»:

Հատկանշական է, որ ԻՀԿ-ում երկու տասնյակից ավելի տարիների պատմություն ունեցող Ադրբեջանը վստահ է, որ կարող է օգնել Իսլամական համագործակցություն կազմակերպությանը՝ դիմագրավելու այն մարտահրավերները, որին բախվում է իսլամական աշխարհը: Ադրբեջանի իշխանությունները ԻՀԿ հարթակն առավելագույնս օգտագործեցին երկրին հուզող խնդիրները բարձրացնելու, առաջին հերթին Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու համար: Այլատյացության վերածած հակահայկական քարոզչությունն իրականացվեց թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանի համար: Արտաքին լսարանի հիմնական թիրախներից մեկը փաստորեն դարձավ իսլամական աշխարհը:

Հարկ է նշել, որ ԻՀԿ-ն հայ-ադրբեջանական հակամարտությանն առաջին անգամ անդրադարձավ 1992թ.: Նախ 1992թ. մարտին Թեհրան, Անկարա, Բաքու, Մոսկվա և Երևան այցելեց ԻՀԿ պատվիրակությունը, որի ղեկավարն էր ԻՀԿ գլխավոր

<sup>1</sup> Ильхам Алиев принял участие в церемонии открытия мечети Джума в Шамахе, <http://ru.president.az> (17.05. 2013).

քարտուղար Համիդ Ալզաբիդի (1989-1996թթ.) օգնական, դեսպան Մուհամեդ Մոհսինը: Նախքան այդ, Հայաստանը դիմել էր Արաբական պետությունների լիգային և ԻՀԿ-ին՝ հակամարտության գոտի դիտորդներ ուղարկելու խնդրանքով: Այցի նպատակն էր ծանոթանալ Ղարաբաղյան խնդրի և նրա լուծման հնարավորությունների վերաբերյալ տարածաշրջանի պետությունների ղեկավարների տեսակետներին: Հայաստանում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ ԱԳՆ-ում և Ազգային ժողովում: Պատվիրակության անդամներին ընդունեց նաև ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որի հետ գրույցում Մ.Մոհսինն ընդգծեց կազմակերպության անկեղծ ցանկությունը՝ աջակցել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Կողմերն անթույլատրելի համարեցին խնդիրը կրոնական տեսանկյունից դիտարկելու միտումները: ՀՀ նախագահը նշեց, որ Հայաստանի ղեկավարությունը չի ցանկանում, որպեսզի խնդիրը դառնա մի նոր կրոնական հակամարտություն Արևելքի և Արևմուտքի միջև: Նաև հույս հայտնեց, որ ԻՀԿ-ի նման հեղինակավոր կազմակերպության աջակցությունը կարող է նպաստել խնդրի խաղաղ կարգավորմանը<sup>1</sup>:

ԻՀԿ պատվիրակության վերադարձից հետո, 1992թ. ապրիլին, Ջիդդայում, Համիդ Ալզաբիդը հակամարտ կողմերին կոչ արեց հանդես բերել կրակը անհապաղ դադարեցնելու և առկա խնդիրները խաղաղ միջոցով լուծելու բարի կամք և հեռատեսություն<sup>2</sup>:

<sup>1</sup> Գրույցի գրառում՝ կայացած 1992թ. մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և ԻՀԿ գլխավոր քարտուղարի օգնական Մ.Մոհսինի միջև (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետություն», 02.04.1992:

Թվում էր, թե որոշակի հիմքեր են ստեղծվել ԻՀԿ-ի և Հայաստանի միջև հարաբերությունների զարգացման, ինչպես նաև հակամարտության խաղաղ կարգավորման հարցում ԻՀԿ շահեկան դերակատարության համար: Մակայն կազմակերպության գործողություններն ի սկզբանե կողմնապահ էին, որի ապացույցներին էր ոչ միայն պատվիրակության անդամների՝ Լեոնային Ղարաբաղ չայցելելը, այլև Երևանում ԼՂՀ պաշտոնատարների հետ հանդիպումից հրաժարվելը<sup>1</sup>:

ԻՀԿ դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ արմատապես փոխվեց, երբ Լեոնային Ղարաբաղի պաշտպանական ուժերը վերահսկողություն հաստատեցին Շուշիում և Լաչինում, ինչը հնարավորություն տվեց վերականգնել Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգությունը: Հակամարտության վերաբերյալ ԻՀԿ դիրքորոշման ձևավորման հարցում էական նշանակություն ունեցավ հայկական ուժերի կողմից 1993-ից ի վեր վերահսկողության հաստատումը ռազմավարական նշանակություն ունեցող այլ տարածքներում ևս (Քելլաջար, Ղուրաթլի, Աղդամ, Զանգեշան, Ֆիզուլի, Ջեբրայիլ), ինչը նպաստեց Լեոնային Ղարաբաղի շուրջ անվտանգության գոտու ստեղծմանը: Լեոնային Ղարաբաղի զինված ուժերի գործողությունները հայկական հասարակական-քաղաքական դիսկուրսում դիտարկվեցին որպես ազատագրում:

ԻՀԿ կանոնադրական մարմիններում Լեոնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության հարցն առաջին անգամ քննարկվեց 1992թ. հունիսի 14-ին Ստամբուլում կայացած իսլամական պետությունների արտգործնախարար-

ների հանդիպման ընթացքում: Ղարաբաղյան հակամարտության մասին թեև առանձին բանաձև չընդունվեց, սակայն հարցը տեղ գտավ կոնֆերանսի ամփոփիչ հայտարարության 14-րդ կետում: ԻՀԿ-ն Հայաստանին կոչ արեց վերանայել «ծավալապաշտական իր ագրեսիվ քաղաքականությունը», իսկ միջազգային հանրությանը՝ Հայաստանի վրա ճնշում գործադրել, որպեսզի վերջինս դադարի արգելք դառնալ հակամարտության խաղաղ լուծման ճանապարհին, վերականգնի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, երաշխավորի փախստականների վերադարձն իրենց տները<sup>2</sup>:

ԻՀԿ-ն Հայաստանին մեղադրեց ագրեսիայի մեջ հենց այն շրջանում, երբ կազմակերպության անդամ Ադրբեջանը շրջափակել էր Հայաստանը, իսկ Լեոնային Ղարաբաղի հայկական բնակավայրերի վրա չէին դադարում ադրբեջանական բանակի զնդակոծումները «Գրադ» կայաններից, հրանոթներից և զնդա-ցիրներից: ԻՀԿ գլխավոր քարտուղար Համիդ Ալզաբիդին ուղղված նամակում ՀՀ արտգործնախարար Ր.Հովհաննիսյանը նշում էր, որ Հայաստանին մեղադրելով ագրեսիայի և ծավալապաշտության մեջ՝ ԻՀԿ-ն անտեսում էր Ադրբեջանի աննախադեպ ագրեսիան Հայաստանի դեմ<sup>3</sup>: Նախարարն արձանա-

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 192-193:

<sup>2</sup>Սկսած 1991թ. ապրիլի 30-ից՝ երբ ամիս շարունակ Ադրբեջանը հայերի շրջանում իրականացրեց երնիկ գոտումեր և բռնագաղթ՝ Գետաշենի ենթաշրջանում և Շահումյանի շրջանում, որտեղ 24 հայկական գյուղեր դատարկվեցին: Դեռևս 1988-ի փետրվարի 26-28-ը, ի պատասխան Լեոնային Ղարաբաղի որոշմանը, Ադրբեջանը պետական մակարդակով կազմակերպեց Սումգայիթի հայերի ցարկեր, որոնք մասնակցեցին քաղաքի իրավապահ մարմինները: Ոչ պակաս դաժան էին Գյանջայում (Կիրովպարաղ), իսկ այնուհետև Բաքվում հայերի նկատմամբ իրականացված բռնությունները:

<sup>3</sup>Փաշայան, Արսար (2003), էջ 190:

գրում էր, որ ԻՀԿ դիրքորոշումը հակամարտության վերաբերյալ անհանգստության տեղիք էր տալիս<sup>1</sup>:

ԻՀԿ-ի հետ դիվանագիտական շփումների ընթացքում հայաստանյան կողմը բազմիցս փորձել է պարզաբանումներ տալ Ղարաբաղյան հակամարտության էության, խաղաղ լուծումներ գտնելու, Հայաստանի իշխանությունների ջանքերի մասին: Խնդրի վերաբերյալ Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը ԻՀԿ շրջանակներում լուսաբանելու ապացույցն է Լ.Տեր-Պետրոսյանի նամակը՝ հասցեագրված ԻՀԿ գլխավոր քարտուղար Համիդ Ալզաբիդին և իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների 1993թ. ապրիլի 25-29-ը Պակիստանի Կարաչի քաղաքում գումարված 21-րդ նստաշրջանի մասնակիցներին: Ուղերձում ՀՀ նախագահը չէր թաքցնում, որ Հայաստանի իշխանությունները հուսախաբված էին, քանի որ ԻՀԿ-ն չէր արձագանքել համագործակցության Հայաստանի առաջարկներին: Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ վերաբերմունքի կողմնապահ բնույթը, ՀՀ նախագահի կարծիքով, միակողմանի տեղեկատվության պատճառով էր, ինչը նսնմացնում էր այն հարգանքը, որ ուներ միջազգային հանրությունը Իսլամական համագործակցություն կազմակերպության նկատմամբ<sup>2</sup>:

Հայաստանի պաշտոնական շրջանակների ջանքերը ԻՀԿ շրջանակներում ղարաբաղյան հարցը լուսաբանելու ուղղությամբ անարդյունավետ եղան: 1993-ից ի վեր իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը Հայաստանի վերա-

բերյալ որդեգրեց կոշտ դիրքորոշում, ինչը տարիների ընթացքում էլ ավելի սուր շեշտադրումներ ստացավ: Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԻՀԿ մոտեցումները հենված էին ոչ հավաստի և միակողմանի տեղեկությունների վրա:

ԻՀԿ գազաթաժողովներում և արտաքին գործերի նախարարների հանդիպումներում վերջին տարիներին, որպես կանոն, ընդունվել են «Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ» բանաձևերը: Դրանցում ԻՀԿ-ն ընդհանուր առմամբ դատապարտել է Հայաստանն իբրև «ագրեսոր, Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող, Ադրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող երկիր»: ԻՀԿ-ն կոչ է արել անդամ պետություններին և միջազգային հանրությանը՝ «օգտագործել քաղաքական և տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ագրեսիային և ադրբեջանական տարածքների բռնազավթմանը, զերծ մնալ Հայաստանին զենք և սպառազինություններ տրամադրելուց», գրավյալ տարածքներում ադրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակել է իբրև «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: ԻՀԿ-ն դատապարտել է «ադրբեջանական գրավյալ տարածքներում ճարտարապետական, մշակութային, կրոնական հուշարձանների ոչնչացման փաստը», պահանջել, որպեսզի «Հայաստանն առանց նախապայանների և ամբողջապես դուրս բերի գործերն ադրբեջանական գրավյալ տարածքներից, ներառյալ Լեռնային Ղարաբաղից իրականացնելով ՄԱԿ ԱՆ 822, 853, 874, 884 բանաձևերը և ճանաչի Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը»: ԻՀԿ-ն դիմել է անդամ պետություններին և

<sup>1</sup> ՀՀ արտգործնախարարի նամակը ԻՀԿ գլխավոր քարտուղար Համիդ Ալ-Ղաբիթին 06.07.1992 (ՀՀ ԱԳԿ փաստաթղթեր, No. 10/1511):

<sup>2</sup> Փաշայան, Արաքս (2003), էջ 195-196:

միջազգային հանրությանը՝ «Հայաստանի դեմ օգտագործելու քաղաքական և տնտեսական միջոցներ՝ Ադրբեջանի նկատմամբ ագրեսիային վերջ դնելու համար»<sup>1</sup>: Քաղաքական ընտրությունների արդյունքում ԼՂ-ում ձևավորված իշխանությունները ԻՀԿ-ն դիտարկել է որպես ոչ օրինակարգ և հանցագործ: Ընդառաջ գնալով ԻՀԿ Երկխոսության և համագործակցության երիտասարդական ֆորումին՝ կազմակերպությունը դատապարտել է այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանությունը» և այն մտցրել իր կողմից հիշատակվող իրադարձությունների ցանկում: Խոջալուի մասին բանաձև ԻՀԿ-ն առաջին անգամ ընդունել է 2008թ. իսլամական պետությունների արտաքին գործերի Կամպայի (Ուզանդա) 35-րդ կոնֆերանսում: ԻՀԿ-ն կոչ է արել իսլամական երկրներին՝ համերաշխ լինել Ադրբեջանի հետ:

Նշենք, որ Երկխոսության և համագործակցության ԻՀԿ երիտասարդական ֆորումը ստեղծվել է Ադրբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի առաջարկով և ծրագրով: Ֆորումի հիմնադիր համագումարը տեղի է ունեցել 2003թ. օգոստոսին Բաքվում: Ֆորումի առաջին նախաձեռնություններից մեկը «Ղարաբաղ. փաստեր և հետևանքներ» քարոզչական գիրքն էր, որ բաժանվել է ԻՀԿ շրջանակներում:

Հարկ է նկատի ունենալ, որ Ադրբեջանը բացառիկ ակտիվություն է հանդես բերել ԻՀԿ-ում: Վերջին տարիներին Բաքվում տեղի են ունեցել ԻՀԿ ամենատարբեր ձևաչափի բազմաթիվ հանդիպումներ: Թվարկենք դրանցից մի քանիսը: 2006թ.

<sup>1</sup>Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԻՀԿ դիրքորոշման մասին մանրամասն տե՛ս Ա.Փաշայան (2003):

Ադրբեջանում տեղի է ունեցել ԻՀԿ նախարարների մակարդակի երկու կոնֆերանս՝ արտաքին գործերի և զբոսաշրջության նախարարների: 2006թ. հունիսի 19-21-ը արտաքին գործերի նախարարների Բաքվի 33-րդ կոնֆերանսն աչքի ընկավ Հայաստանի մասին հազեցած օրակարգով: Հանդիպման եզրափակիչ փաստաթղթում ներառվեց Հայաստանի դեմ բանաձևը: Մեկ այլ Բաքվի հռչակագրի 14-րդ դրույթը վերաբերում է Հայաստանին: Հրապարակվեց նաև Հայաստանի մասին ԻՀԿ զլխավոր քարտուղարի զեկույցը<sup>1</sup>:

2006թ. սեպտեմբերի 9-12-ը Բաքվում տեղի ունեցավ ԻՀԿ զբոսաշրջության նախարարների V կոնֆերանսը, որի բացմանը

<sup>1</sup>Մանրամասն տե՛ս Baku Declaration, p. 28; Report of the Secretary General of the OIC on the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan p. 23; Resolution No. 9/33-P the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan, p. 19-20. Journal of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006. Բաքվի հռչակագրում մասնավորապես նշված է. «Մենք կրկին Վճռականապես դատապարտում ենք Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ և համառոտն կոչ ենք անում հայկական օկուպացիոն ուժերին անմիջապես լքել և անվերապահ կերպով դուրս գալ Ադրբեջանի գավառված տարածքներից: Մենք կարծում ենք, որ հայ բնակիչների ապօրինի վերաբնակեցումը գավառված ադրբեջանական տարածքներում, ապօրինի տնտեսական գործունեությունը և բնական պաշարների շահագործումը գրավյալ տարածքներում վնաս են հասցնում խաղաղության գործընթացին: Մենք դատապարտում ենք ադրբեջանական մշակութային և պատմական հուշարձանների շարունակվող ոչնչացումը և պահանջում ենք, որ Հայաստանը Ադրբեջանին փոխհատուցի միջազգային իրավունքի համապատասխան Հայաստանի կողմից հասցված կորստական վնասի դիմաց: Մենք հայտարարում ենք մեր խորին անհանգստությունը գրավյալ տարածքներում վերջերս բռնկված զանգվածային հրդեհների կապակցությամբ և պահանջում ենք, որ օկուպացիոն ուժերն անհապաղ միջոցներ ձեռնարկեն էկոլոգիական աղետը կանխելու համար: Մենք դիմում ենք միջազգային հանրությանը կոչ անելով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները հակամարտության խաղաղ կարգաձեռնարկի համար: Մենք համառոտն կոչ ենք անում ԻԿԿ անդամ պետություններին աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վերականգնման հարցում»:

հանդես եկավ նախագահ Ի.Ալիևը: Նրա ելույթը պարունակում էր թեզեր իսլամական միասնության, ինչպես նաև իսլամական աշխարհին սպառնացող մարտահրավերներին միասնաբար հակազդելու անհրաժեշտության մասին: Այդ համատեքստում Ալիևն իսլամական աշխարհի ուշադրությունը սևեռեց Ղարաբաղյան խնդրի վրա: Ադրբեջանական տեղեկատվական աղբյուրները հանդիպման մասին խոսելիս առաջին հերթին ընդգծում էին ոչ թե զրոսաշրջության ոլորտում իսլամական երկրների խնդիրները, այլ Ղարաբաղյան հարցը: Հանդիպման ավարտին ընդունված Բաքվի հռչակագրում դատապարտվեց «գրավյալ տարածքներում մշակութային և պատմական հուշարձանների ոչնչացան փաստը»<sup>1</sup>:

2007թ. ապրիլի 26-28-ը Բաքվում ԻՀԿ-ի հետ համատեղ անցկացվեց «Լրատվամիջոցների դերը հանդուրժողականության և փոխըմբռնման զարգացման հարցում» կոնֆերանսը<sup>2</sup>: Բացման ելույթում Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամադյարովը իսլամաֆորիան և ընդհանրապես ահաբեկչության թեման կապեց Հայաստանի հետ: Ղարաբաղյան հարցին անդրադարձ եղավ ԻՀԿ գլխավոր քարտուղար Է.Իհսանօղլուի զեկույցում: Խոսելով միջմշակութային, միջկրոնական երկխոսության, հանդուրժողականության և փոխհամաձայնության անհրաժեշտության մասին՝ գլխավոր քարտուղարը հույս հայտնեց, որ կազմակերպությունը կշարունակի համերաշխ գործել ադր-

բեջանական խնդիրների հարցում՝ հանուն նրա տարածքային ամբողջականության՝ հաղթահարելու համար իր դեմ ուղղված ագրեսիան, որը հակասում է միջազգային իրավունքին<sup>3</sup>:

Նշենք, որ երկար տարիներ կազմակերպության գլխավոր քարտուղար, Թուրքիայի ներկայացուցիչ և իսլամական աշխարհում հեղինակավոր գործչի համարում ունեցող Էքմե-լուդդին Իհսանօղլուն (2005-2014թթ.) մեծապես աջակցել է իսլամական շրջանակներում ադրբեջանական քարոզչությանը:

Բաքվում տեղի ունեցած ԻՀԿ մեկ այլ հանդիպում իսլամական պետությունների իրավապահ մարմինների ղեկավարների կոնֆերանսն էր (2009թ. ապրիլի 21-22-ը), որտեղ ընդունվեցին հռչակագիր և այլ փաստաթղթեր: Կոնֆերանսը նվիրված էր վերագրված հանցագործությունների դեմ պայքարին: Խոսելով միջազգային բնույթի հանցագործությունների և ահաբեկչության մասին՝ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը նշեց, որ իր երկիրը որքան ժամանակ է՝ «տառապում է հարևան Հայաստանի ագրեսիայից, որը գրավյալ ադրբեջանական տարածքներում ստեղծել է չվերահսկվող տարածքներ, որտեղ ծաղկում են թմրաբիզնեսը, ապօրինի զենքի վաճառքը, փողերի լվացումը»<sup>4</sup>:

Ադրբեջանի նախագահը ցանկանում էր իսլամական պետություններին ի ցույց դնել, որ իբրև թե Հայաստանի կողմից վերահսկվող տարածքներում կատարվող հանցագործություննե-

<sup>1</sup> Baku Declaration of 5th Session of the ICTM condemns deliberate destruction of Islamic monuments by Armenia, <http://www.today.az> (12.09. 2006).

<sup>2</sup> International Conference on Role of Media to Encourage Tolerance Commenced in Baku, <http://en.trend.az> (26.04. 2007).

<sup>3</sup> Statement by the OIC Secretary General Ekmeleddin Ihsanoglu at the Sixth Islamic Conference of Culture Ministers held in Baku, Republic of Azerbaijan, [http://www.oic-un.org/document\\_report/statement\\_20091014.pdf](http://www.oic-un.org/document_report/statement_20091014.pdf) (14.10.2009).

<sup>4</sup> Глава Азербайджана выступает за координацию странами ОИК борьбы с оргпреступностью, <http://www.interfax-religion.ru> (21.04. 2009).

րը սպառնալիք են ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ տարածաշրջանի համար՝ այդպիսով հիմնավորելով Հայաստանի դեմ իսլամական պետությունների համախմբման աներաժեշտությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային մակարդակով:

Իսլամական համագործակցության կազմակերպության հանդիպումներից հետո Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները մի շարք անգամներ հայտարարել են, որ իսլամական պետությունները դադարեցնելու են Հայաստանի հետ իրենց շփումները, ինչը կարելի է համարել քարոզչական քայլ: Սակայն մինչ այժմ իսլամական որևէ պետություն չի խզել Հայաստանի հետ դիվանագիտական կապերը: Բացառություն են կազմում Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Պակիստանն ու Բանգլադեշը, որոնք ի սկզբանե Հայաստանի հետ դիվանագիտական կապերի հաստատումը պայմանավորել են Ղարաբաղյան հարցի կարգավորմամբ:

2009թ. ԻՀԿ-ն Բաքուն հայտարարեց իսլամական մշակույթի մայրաքաղաք: Նույն թվականի հոկտեմբերի 13-15-ը Բաքվում տեղի ունեցավ ԻՀԿ մշակույթի նախարարների VI կոնֆերանսը: Կոնֆերանսի բացմանն Ադրբեջանի նախագահն ուղերձով դիմեց իսլամական երկրների մշակույթի նախարարների VI կոնֆերանսի մասնակիցներին՝ անդրադառնալով նաև Ղարաբաղյան հարցին: Կոնֆերանսում ընդունված ամփոփիչ հռչակագրում հերթական անգամ դատապարտվեց «Հայաստանի կողմից Ադրբեջանի գրավյալ տարածքներում պատմամշակութային հուշարձանների ոչնչացումը», Հայաստանից պահանջվեց կատարել ՄԱԿ բանաձևերը: Նախագահական նստավայրում ընդունելով կոնֆերանսի

պատվիրակներին՝ Ի.Ալիևը բարեկամության և եղբայրության օրերի շրջանակներում անցկացված կոնֆերանսի աշխատանքները գնահատեց որպես էական ներդրում իսլամական պետությունների համերաշխության և նրանց միջազգային դիրքերի ամրապնդման հարցում՝ միաժամանակ բարձր գնահատելով ԻՀԿ անդամ պետությունների աջակցությունն Ադրբեջանին, այդ թվում միջազգային ասպարեզում, մասնավորապես նկատի ունենալով 2008թ. ՄԱԿ ԳԱ-ում Ադրբեջանի օգտին ԻՀԿ անդամ պետությունների քվեարկությունը: Նշենք, որ ՄԱԿ ԳԱ 2008թ. Լեռնային Ղարաբաղի մասին բանաձևին կողմ, այսինքն՝ Ադրբեջանի օգտին քվեարկեցին ԻՀԿ անդամ մի շարք պետություններ: Կողմ քվեարկեցին հետևյալ երկրները՝ Աֆղանստան, Ադրբեջան, Բահրեյն, Բանգլադեշ, Բրունեյ, Կամբոջա, Կոլումբիա, Կոմորոս, Ջիբութի, Կրաստան, Ինդոնեզիա, Իրաք, Հորդանան, Քուվեյթ, Լիբիա, Մալայզիա, Մադիսկներ, Մոլդովա, Մարոկո, Մյանմար, Նիգեր, Նիգերիա, Օման, Պակիստան, Կատար, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Սերբիա, Սիերա Լեոնե, Սոմալի, Սուդան, Թուրքիա, Թուվալու, Ուգանդա, Ուկրաինա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ուզբեկստան, Եմեն: Բանաձևին դեմ քվեարկեցին Անգոլան, Հայաստանը, Ֆրանսիան, Հնդկաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Վանուատուն: Ձեռնպահ մնաց ՄԱԿ 100 անդամ պետություն՝:

Ի դեպ, հայերի կողմից իսլամական հուշարձանների ոչնչացման մասին Ադրբեջանի տարածած տեղեկություններին ժամանակ առ ժամանակ հակադարձել են թե՛ Հայաստանում,

<sup>1</sup> Փաշայան, Արարս (2008):

թե՛ Լեռնային Ղարաբաղում: Մեզ հետ զրույցում ճարտարապետության պատմաբան Սամվել Կարապետյանը, ով ծանոթ է Լեռնային Ղարաբաղում և հարակից տարածքներում իսլամական հուշարձանների վիճակին<sup>1</sup>, հաստատեց, որ այդ շրջաններում իսլամական պատմամշակութային արժեքները՝ մզկիթներ, դամբարաններ և այլն (այդ թվում՝ Շուշիի մզկիթները), պահպանված են: Նա նշեց, որ իսլամական հուշարձանները հիմնականում պարսկական և թուրքմենական ծագում ունեն, և միայն շատ քիչ թվով՝ աղբյուրական: Նշված շրջաններում գտնվող իսլամական հուշարձանները նաև հայկական մշակույթի հարստություններ են, քանի որ շատ դեպքերում ստեղծվել են հայ շինարարների կողմից՝ հայկական ճարտարապետության փորձի հիման վրա<sup>2</sup>:

Նշենք, որ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը պատրաստակամություն է հայտնել իր հովանու տակ վերցնել Շուշիի պարսկական մզկիթը և դրա վերականգնման համար մասնագետներ հրավիրել Իրանից, որին բացասաբար է արձագանքել Կովկասի մուսուլմանների վարչությունը: Ըստ վարչության տարածած տեղեկության՝ «մզկիթի վերականգնումը կարող էր կոծկել Աղբյուրանի տարածքում հայերի գործած բռնարարքները», իսկ իրանցի մասնագետներին աղբյուրանցի հոգևորականները կոչ են արել հրաժարվել մզկիթի վերականգնման աշխատանքներին մասնակցելուց: Ներկայումս Արցախի թեմն ապահովում է մզկիթին հարող տարածքի մաք-

րությունը: Իսկ Շուշի քաղաքում գտնվող մեկ այլ մզկիթ՝ «Շեն» հիմնադրամի ջանքերով արդեն իսկ նորոգված է: Շուշիում կա երեք մզկիթ, որոնք վնասվել են պատերազմի ժամանակ, սակայն վերականգնվել և պահպանվում են<sup>3</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ աղբյուրանցիներն ակնատես են եղել Շուշիում գտնվող մուսուլմանական հուշարձանների բարձր վիճակին, երբ 2009թ. հուլիսին հայ-աղբյուրանական «ժողովրդական դիվանագիտության» շրջանակներում աղբյուրանցի քաղաքական և մշակութային մի շարք գործիչներ իրենց հայ գործընկերների հետ (պատվիրակությունների կազմում էին Ռուսաստանում Հայաստանի և Աղբյուրանի դեսպաններ Արմեն Սմբատյանն ու Փոլադ Բյուբյույոլդին) այցելեցին Լեռնային Ղարաբաղ, որից հետո եղան Երևանում և Բաքվում: Պարզ է դարձել, որ Բաքվի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու գմբեթի և զանգակատան վրա բացակայել են խաչերը, բակում չեն եղել երբևէ եղած խաչքարերը, հայկական արձանագրությունները պատերից ջնջված են եղել, բացայակել է պատմական փայտյա դուռը, իսկ ներսում ոչ թե գրադարան է եղել, այլ գրքերի պահեստ: Բացակայել են բակում կողք կողքի թաղված Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ Բագրատ վրդ. Թավաբալյանի (1850-1902թթ.) և Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի (1866-1915թթ.) տապանաքարերը<sup>4</sup>: Մեկ տարի անց՝ 2010թ. ապրիլի 26-ին, Հայաստանից Բաքու մեկնեց հայկական մեկ այլ պատվիրա-

<sup>1</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Ներդրումային անձնագիր-Շուշի. [http://www.shushi.org/factsheet/factsheet\\_arm.pdf](http://www.shushi.org/factsheet/factsheet_arm.pdf), էջ 5:  
<sup>2</sup> «Ազգ», 15.07.2009: Բաքվի նշված եկեղեցու մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան, Գևորգ (2009), Համառոտ ակնարկ Բաքվի սբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու պատմության, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3, էջ 45-59:

<sup>1</sup> Տե՛ս The Islamic Monuments of the Armenian Architecture of Artsakh. Publisher- Research of Armenian Architecture. Author- Samvel Karapetyan, Yerevan, 2010.

<sup>2</sup> Հարցազրույց Սամվել Կարապետյանի հետ, 2014թ. մայիս:

կույթուն, այս անգամ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի գլխավորությամբ՝ մասնակցելու Բարձուս կայանալիք Կրոնապետերի համաշխարհային գագաթաժողովին: Հենց նույն օրը Կովկասի մուսուլմանների վարչության փոխնախագահի ուղեկցությամբ հայկական կողմն այցելեց Բարձվի հայկական Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Մեզ հետ զրույցում Մայր աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, ով պատվիրակության կազմում էր, հիմնականում հաստատեց եկեղեցու մասին գոյություն ունեցող տեղեկությունը: Նա նշեց. «Եկեղեցին մաքուր էր, այնտեղ որոշ վերանորոգչական աշխատանքներ էին իրականացվել, սակայն բացակայում էին որմնանկարները, որոնք հրկիզվել են<sup>1</sup>: Պահպանված էր զանգակատունը, սակայն խաչը չկար: Եկեղեցին օգտագործվում էր որպես գրապահոց. այնտեղ կային հայկական հին և նոր գրքեր: Վեհափառ հայրապետի այն հարցին, թե որտեղ են եկեղեցու բակի շիրմաքարերը, պատասխանեցին, թե հայերը դրանք իրենց հետ տարել են: Գրապահոցի պատասխանատուն Գյուլի Մամեդովա անունով մի կին էր, ով հրաշալի տիրապետում էր հայերենին<sup>2</sup>: Հովակիմ եպս. Մանուկյանը նշեց, որ «հայկական այլ հուշարձաններ չեն այցելել, բայց տեղյակ են, որ Բարձվի հայկական գերեզմանատունը ոչնչացված է, Գյանջայի հայկական Սուրբ Հովհաննես եկեղեցու որմնանկարները ջնջված են, խաչը հանված է, և այն վերածված է

<sup>1</sup> Նշենք, որ եկեղեցին հրկիզվել էր 1989թ. դեկտեմբերի 25-ին Ադրբեջանում հակահայկական գործողությունների ժամանակ:

<sup>2</sup> Գ.Մամեդովան նախկինում աշխատել է հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Երևանի դպրոցներից մեկում:

համերգասրահի<sup>3</sup>: Ընդհանրապես, ադրբեջանցիները հայկական պատմամշակութային հուշարձանները<sup>2</sup> ներկայացրել են որպես աղվանական՝ վերացնելով դրանց հայկական հետերը<sup>3</sup>:

Վերադառնալով Ադրբեջանի արտաքին իսլամական քաղաքականությանը՝ նշենք, որ ԻՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում Ադրբեջանը ստորագրել է բազմաթիվ պայմանագրեր, որոնցից կարևոր է ԻՀԿ պետությունների միջև տնտեսական, տեխնիկական և առևտրային համագործակցության մասին պայմանագիրը: Ադրբեջանն ակտիվորեն համագործակցում է ԻՀԿ Ջարգացման իսլամական բանկի և ԻՀԿ-ին կից բազմաթիվ օժանդակ կառույցների հետ: ԻՀԿ-ն բազմաթիվ ծրագրեր է իրականացրել Ադրբեջանում, այդ թվում՝ փախստականների շրջանում:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի դիրքերն իսլամական աշխարհում զգալիորեն ամրապնդվել են: Եթե հետանկախության շրջանում Բաքուն մտահոգված էր Հայաստանի և արաբական երկրների միջև համագործակցության հարաճուն ընթացքից և գոհ չէր արաբական երկրների հետ Ադրբեջանի համագործակցության ծավալներից, ապա վերջին տարիներին Ադրբեջանին հաջողվել է զգալիորեն բարելավել հարաբերություններն արաբական իսլամական երկրների հետ:

<sup>1</sup> 2007թ. սեպտեմբերին ավերվել է Բարձվի Նարինանով փողոցի քրիստոնեական գերեզմանատունը, իսկ 2009թ. հունվարին Բարձվի 26 կամիսարների դամբարանը, քանի որ կամիսարներից 8-ը հայեր էին:

<sup>2</sup> Ադրբեջանում հայկական պատմամշակութային հուշարձանների մասին մանրամասն տե՛ս և Состояние армянских исторических памятников в Азербайджане и Арцахе. Автор-составитель С. Карапетян, Москва, 2012.

<sup>3</sup> Ջարգազրույց Հովակիմ եպս. Մանուկյանի հետ, մայիս, 2014:

Այսպիսով՝ Ադրբեջանն անկախությունից ի վեր փորձել է օգտագործել արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը ոչ միայն իր դիրքերն ամրապնդելու, արաբական իսլամական աշխարհի հետ համագործակցելու և նրա քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ներուժն օգտագործելու, այլև Հայաստանի դեմ քարոզչության և Ղարաբաղյան հարցում աջակցություն ստանալու նպատակով: Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունն արտահայտվել է Իսլամական համագործակցություն կազմակերպության հետ սերտ համագործակցությամբ:

Իսլամական համագործակցություն կազմակերպությունը հայ-ադրբեջանական հակամարտությանն անդրադարձել է միակողմանիորեն՝ հիմք ընդունելով միայն Ադրբեջանի ներկայացրած փաստերն ու փաստարկները: ԻՀԿ բանաձևերի համաձայն՝ զիջումներ պետք է անի միայն հայկական կողմը (որն Ադրբեջանի հետ ռազմական գործողություններում առավելությունների է հասել), իսկ Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հիշատակվել որպես հակամարտող կողմ: ԻՀԿ դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ կարելի է համարել ադրբեջանամետ:

ԻՀԿ-ն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ որևէ ծրագիր կամ հայեցակարգ առաջ չի քաշել: ԻՀԿ անդամ պետությունների և ԻՀԿ կառույցների շատ ներկայացուցիչներ իսլամական խնդիրների մասին խոսելիս Ղարաբաղյան հարցին չեն անդրադարձել, ինչը նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իսլամական աշ-

խարհում չունի այն հնչեղությունը, ինչ շատ այլ խնդիրներ: Այս առումով հետաքրքիր է Արաբական պետությունների լիգայի եվրոպական դեպարտամենտի տնօրեն Օմնիյա Տահայի դիտարկումը: Ադրբեջանցի լրագրողի այն հարցին, թե իսլամական աշխարհը՝ Ումման, Ղարաբաղյան խնդրի շուրջ ՄԱԿ-ում միասնական դիրքորոշում չունի, նա նշել է բառացիորեն հետևյալը. «Ես հասկանում եմ ձեր հիասթափությունը, որովհետև մի շարք արաբական երկրներ ձեզ չեն աջակցում: Կարծում եմ, որ (Ղարաբաղյան հարցը- Ա.Փ.) Ումմայի հարցը չէ, այլ պետությունների միջև հետաքրքրությունների հարց է...»<sup>1</sup>: Տպավորությունն այնպիսին է, որ Ադրբեջանի պատկանելությունն Ումմային շատ դեպքերում արաբական իսլամական աշխարհում համարժեք չի գիտակցվում:

Իսլամական համագործակցություն կազմակերպությունում Ադրբեջանի հաջողության պատճառներից մեկն այն է, որ իսլամական այդ ակումբում փաստաթղթերն ընդունվում են կոնսենսուսով: Այնտեղ չի գործում քվեարկության ընթացակարգ, բանաձևն առաջարկվում է, և եթե ոչ մի անդամ պետություն վետո չի դնում, այն ընդունվում է: Բնականաբար, որևէ պետություն միջազգային իսլամական այդ հարթակում չի կարող խախտել դրա հիմնարար սկզբունքներից մեկը՝ իսլամական համերաշխության գաղափարը, և վնասել իր պետության հեղինակությանը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս Ադրբեջանին Հայաստանի դեմ իսլամական օրակարգ ձևավորել:

<sup>1</sup> News.az interviews Omnia M. Taha, Director of the Arab League's European Department, <http://www.news.az> (19.03. 2012).

Հայ-աղորջանական հակամարտության վերաբերյալ ԻՀԿ բանաձևերը քարոզչական բնույթ են կրում: Հայաստանը շարունակում է համագործակցել ԻՀԿ անդամ մի շարք երկրների, այդ թվում՝ Օղոցի արաբական պետությունների հետ, որոնք հանգուցային դեր ունեն կազմակերպության ներսում: Իսլամական համագործակցություն կազմակերպության քաղաքականության մեջ նշմարվող երկակի չափորոշիչները վիճարկելի են դարձնում ԻՀԿ հեղինակությունն ու օրինակաբարությունը միջազգային հարաբերություններում:

***Իսլամական գործոնը Ղարաբաղյան պատերազմում.  
մոջահիդների մասնակցությունը***

Մոջահիդների ինստիտուտը, իր ժամանակակից ձևաչափով, կազմավորվեց 1980–1990-ականներին աֆղանական պատերազմի արդյունքում (1979–1989թթ.) և կապված էր «սատր պատերազմի» իրողությունների հետ<sup>1</sup>: Աֆղանական պատերազմի ողջ ընթացքում ԱՄՆ-ը, մասնավորապես՝ սաուդական և պակիստանյան հատուկ ծառայությունների միջոցով, ֆինանսական և ռազմական լայնածավալ աջակցություն ցույց տվեց խորհրդային բանակի դեմ կռվող ռազմական խմբավորումներին: Արդյունքում՝ արդեն պատերազմի ավարտից և Աֆղանստանից խորհրդային ուժերի դուրսբերումից հետո ձևավորվեց ռազմական գործողությունների մեծ փորձ ունեցող աֆղանցիների ու

<sup>1</sup> Իսլամում մոջահիդը (ծագում է արաբերեն ջահադա արմատից) հանուն Աստծո և հավատքի կռվող մարտիկն է: Իսլամական աշխարհում այս եզրը լայն տարածում ունի և բնորոշում է այն անձանց, ովքեր մասնակցում են ազգային, սոցիալական և կրոնաքաղաքական շարժումների:

նան՝ «արաբ աֆղանցիների»՝ ռեսուրսը: Այդ ռեսուրսը, հետագայում հատուկ նշանակություն տալով հանուն իսլամի մղվող պատերազմին (ջիհադին), մասնակցեց Ալժիրում, Կենտրոնական Ասիայում, Բալկաններում և Կովկասում ծավալվող ռազմական գործողություններին: Այդ նույն ռեսուրսը լավագույնս օգտագործվեց միջազգային մի շարք ահաբեկչությունների նախապատրաստման ու իրականացման ժամանակ:

Հատկանշական է, որ 1991–1994թթ., իսկ ավելի ակտիվ ձևով՝ 1993–1994թթ. ընթացքում (1994թ. մայիսին կողմերի միջև կնքվեց զինադադար) Ղարաբաղյան պատերազմին աղորջանական կողմից մասնակցեցին նաև Աֆղանստանից ժամանած մոջահիդներ: 1993թ., երբ ռազմական ուժերի հաշվեկշիռը փոխվեց հօգուտ հայերի, Աղորջանը (արդեն Հեյդար Ալիևի իշխանության զարուց հետո) քայլեր ձեռնարկեց պատերազմական գործողությունների մեջ ներգրավելու Աֆղանստանից հավաքագրված վարձկանների: Մոտ 1.500-2000 մոջահիդներ են մասնակցել ռազմական գործողություններին<sup>2</sup>:

Աֆղանստանցի վարձկանները հիմնականում կռվել են ցամաքային ուժերում: Նրանց պատրաստվածությունը շատ ավելի բարձր է եղել, քան աղորջանցիներինը: Աֆղանցիներն ապրել են առանձին և հազվադեպ են շփվել աղորջանցի զինվորների հետ, քանի որ նրանք չեն հետևել շարիաթով ամրագրված պկոհոլային խմիչքների արգելքին և իսլամի այլ պատվիրանների: Մոջահիդները բախումներ են ունեցել նաև տեղացի բնակիչների

<sup>1</sup> «Արաբ աֆղանցիներն» արաբական տարբեր երկրներից Աֆղանստանի քաղաքացիական պատերազմին մասնակցած մոջահիդներն էին:

<sup>2</sup> Demoyan, Hayk (2003), pp. 89–90.

հետ իսլամական նորմերի պահպանման հետ կապված: Նրանք հակակրանք են ունեցել նաև աղբբեջանական բանակում կռվող սլավոնական ծագմամբ վարձկանների նկատմամբ: Աղբբեջանական իշխանությունները փորձել են քողարկել ռազմական գործողությունների ժամանակ սպանված մոջահիդների փաստը: Խնդրին հնչեղություն չտալու համար ոչ բոլոր մահացածների աճյուններն են Աֆղանստան ուղարկվել<sup>1</sup>:

Հատկանշական է, որ Ղարաբաղյան պատերազմի ողջ ընթացքում Հայաստանի իշխանությունները փորձել են հակազդել իսլամական շրջանակներից Աղբբեջանին ցույց տրվող ռազմաքաղաքական օժանդակությանը: Ասվածի ապացույցն է 1994թ. մայիսին Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի նամակն Աֆղանստանի նախագահ Բուրհանուդդին Ռաբանիին և վարչապետ Գուլբեդդին շեքմաթյարին, որտեղ անհանգստություն է հայտնել աղբբեջանական բանակի կողմից կռվող աֆղան մոջահիդների մասնակցության փաստի առիթով: Պատասխան նամակում Աֆղանստանի նախագահը դատապարտել է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ռազմական գործողություններում Աֆղանստանի քաղաքացիների մասնակցությունը՝ հույս հայտնելով, որ հակամարտությունը կլուծվի խաղաղ ճանապարհով<sup>2</sup>:

Այս առումով, ուշագրավ է նաև 1994թ. դեկտեմբերի 21-ին ՄԱԿ Վարձկանների զծով մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ զեկուցողին ուղղված Հայաստանի արտգործնախարարության նամակը, որում արտահայտված է Հայաստանի

իշխանությունների դժգոհությունը Լեռնային Ղարաբաղի պատերազմում լայնորեն ներգրավված և Աղբբեջանի կողմից հավաքված վարձկանների փաստի կապակցությամբ: Նամակում վարձկանների (ԱՊՀ-ից և այլ երկրներից՝ Իրանից, Թուրքիայից և Աֆղանստանից) մասին տվյալներն ամրագրված են համապատասխան աղբբություններով<sup>3</sup>:

Չնայած Աղբբեջանի իշխանությունները հերքել են ռազմական գործողություններին մոջահիդների մասնակցությունը, այն ապացուցված փաստ է, որի համար հիմք են դարձել ոչ միայն միջազգային անդրադարձները, այլև ռազմաճակատում գտնված մոջահիդների (իրենց ավանդական հագուստով) հայտնաբերված մարմինները, ինչպես նաև Աֆղանստանի պաշտոնական լեզուներով (ղարի և փուշտու) փաստաթղթերը, Աֆղանստանում և Պակիստանում հրատարակված կրոնական գրականությունը և այլ իրեղեն ապացույցներ, որ հայտնաբերվել են Ղարաբաղյան պաշտպանական ուժերի կողմից<sup>4</sup>:

Ղարաբաղյան պատերազմում մոջահիդների մասնակցության վերաբերյալ հետաքրքրական ուսումնասիրություն է իրականացրել իսպանական Real Instituto Elcano հետազոտական կենտրոնի աշխատակից Մ.Թարբերին<sup>5</sup>: Նա իր «Մոջահիդները Լեռնային Ղարաբաղում» հետազոտության մեջ շեշտադրում է մի քանի հարցեր՝ Ղարաբաղյան պատերազմին մոջահիդների

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 90-92:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 93:

<sup>3</sup>Մանրամասն տե՛ս Letter dated 21 December 1994 from the Deputy Minister for Foreign Affairs of the Republic of Armenia addressed to the Special Rapporteur of the Commission on Human Rights on the question of the use of mercenaries (<http://www.un.org/documents/ga/docs/50/plenary/a50-390add1.htm>).

<sup>4</sup>Demoyan, Hayk (2003), p. 89.

<sup>5</sup>Taarnby, Michael (2008).

մասնակցության հարցը և նրանց դերակատարությունը հետագա ջիհադական շարժումներում: Ըստ այդմ՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմին մասնակցած մոջահիդների մի մասը հաստատվեց Ադրբեջանում, իսկ մնացածները վերադարձան հայրենիք: Շատերն Ադրբեջանից հետո ներգրավվեցին միջազգային այլ հակամարտություններում, բայց հատկապես հակառուսական պայքարում՝ չեչենական պատերազմում, որտեղ ներդրվեց նաև Ղարաբաղյան պատերազմի փորձը: Մ.Թարընբին բերում է Սաուդյան Արաբիայից չեչենական ծագմամբ (կան տվյալներ նաև նրա չերքեզական ծագման մասին) հայտնի դաշտային հրամանատար, «արաբ աֆղանցի» Ալ-Խատտարի օրինակը, որն «աֆղանստանյան ջիհադից» հետո սկզբում մասնակցեց Տաջիկստանում հակակառավարական շարժումներին, այնուհետև՝ Ղարաբաղյան պատերազմին: Օգտագործելով Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ձեռք բերված կապերը՝ Խատտարն Ադրբեջանից անցավ Հյուսիսային Կովկաս (Չեչնիա և Դադեստան) և մինչև սպանվելը (2002թ.) ջիհադական շարժման ամենահանգուցային դեմքերից մեկն էր: Ի դեպ, 2005թ. իր հարցազրույցում ադրբեջանական բանակի գնդապետ Ազեր Ռուսթամովը նշում է, որ Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական բանակին օգնել են հարյուրավոր չեչեն կամավորներ, որոնց ղեկավարել են չեչեն դաշտային հրամանատարներ Շամիլ Բասանև ու Մալման Ռադուլը: Մակայն ունենալով մեծ կորուստներ՝ նրանք ստիպված են եղել հեռանալ<sup>1</sup>:

<sup>1</sup> «Я не хочу воевать, и другие не пойдут» говорит бывший командир бригады азербайджанской армии, <http://noev-kovcheg.1gb.ru/article.asp?n=83&a=13>

Մ.Թարընբին բավական հետաքրքիր մի դիտարկում է անում: Նա նշում է, որ Ղարաբաղյան պատերազմը որոշակիորեն դուրս մնաց միջազգային ջիհադական շարժման տեսադաշտից: «Մարտնչող իսլամի» հռետորաբանության մեջ այս խնդրին անդրադարձներ գրեթե չեղան: Հետագոտողի կարծիքով՝ դա առավելապես կապված է այն հանգամանքի հետ, որ Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական կողմը պարտություն կրեց: Բացի այդ, ինչպես նշում է Թարընբին, մոջահիդները մասնակցել են պատերազմին՝ առաջին հերթին որպես վարձկաններ, այլ ոչ թե կամավորներ:

Փաստորեն, հետխորհրդային տարածքում մոջահիդներն առաջին փորձարկումն անցան ղարաբաղյան ճակատում: Հայկական պաշտպանական ուժերը, ըստ էության, կարողացան հակազդել ջիհադական կառույցներին: Ադրբեջանը, ի թիվս այլ կովանների, լավագույնս օգտագործեց իսլամական ռեսուրսը՝ թե՛ ռազմական, թե՛ քաղաքական ոլորտում՝ Ղարաբաղյան հարցում հաջողության հասնելու համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր, հոդվածներ, ատենախոսություններ

## Հայերեն

1. Կնյազյան, Դավիթ (2008), Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920թթ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան:
2. Կոզմոյան, Արմանուշ (2003), Ղուրանը հայոց մեջ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան:
3. Հովսեփյան, Լևոն (2013), Գյուլենական շարժումն Ադրբեջանում. ներկա իրավիճակն ու միտումները, «Գլոբուս», #5, «Նորավանք» ԳԿՀ:
4. Նավասարդյան, Նազելի (2013), Ռուսաստանի քաղաքականությունը Իրանում (XIX դարի վերջ XX դարի սկիզբ), Ատենախոսություն, Երևան:
5. Շաքարյան, Արտակ (2011), Արարատից այն կողմ. ապակոդավորելով Թուրքիան, Երևան:
6. Ստեփանյան, Գևորգ (2009), Համառոտ ակնարկ Բաքվի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3:
7. Վարդանյան, Թամարա (2013), Ադրբեջանցիներ. ինքնության փնտրությունը հետխորհրդային շրջանում, «21-րդ դար», թիվ 3 (49), «Նորավանք» ԳԿՀ:
8. Չորանյան, Գայանե (2013), Իսլամի քաղաքական դերը հետխորհրդային Ադրբեջանում, «21-րդ դար», թիվ 2(48), «Նորավանք» ԳԿՀ:

9. Փաշայան, Արարս (2003), Իսլամական կոնֆերանս կազմակերպություն. նպատակները, կառուցվածքը, դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի նկատմամբ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան:
10. Փաշայան, Արարս (2013), «Ծաղրանկարային» պատերազմ. պայքար գլոբալ արժեքների համար, Ժամանակակից Եվրասիա: Եվրասիական իսալմերուկներ. նոր մարտահրավերներ, հ 2/2, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան:
11. Փաշայան, Արարս (2008), Իսլամական կոնֆերանսը՝ արդիականացման ճանապարհին, «Նորավանք» ԳԿՀ, <http://www.noravank.am> (14.04.2008):

## Ռուսերեն

12. Абасов, Али (2001), Ислам в современном Азербайджане: образы и реалии. В сборнике Азербайджан и Россия: общества и государства, Москва.
13. Алескерова, Несрин (2005), Ислам в Азербайджане: История и современность. В кн. Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, Heinrich Böll Stiftung.
14. Аль-Фаллах, Адель Абдулла (2007), Гейдар Алиев и национально-духовные ценности, Научный редактор Шейх-уль-Ислам Аллахшукюр Паша-заде, Баку.
15. Балджи, Байрам (2006), Судьбы шиизма в постсоветском Азербайджане. Этнографическое обозрение 2.
16. Васильев, Алексей (1985), Пуридания ислама. Академия наук СССР, Институт народов Азии. Москва: Наука.
17. Гаджи-Заде, Хикмет (1998), Свобода совести в Азербайджане. Центральная Азия и Кавказ, No. 16.
18. Ганкевич, Виктор (2001), Джадидистская реформа народного образования крымских татар в конце 19-начале 20 века. В кн. Ислам в Евразии, под редакцией М.В.Иордана, Москва.
19. Ганич, Анастасия (2009), «Поучение» Закавказского Муфтия и Председателя Закавказского Мусульманского Духовно-

- го Правления Суннитского учения (1892г.). Актуальные проблемы истории и этнографии народов Кавказа. Сборник статей к 60-летию В.Х. Кажарова. Нальчик: Институт гуманитарных исследований КБНЦ РАН.
20. Ганич, Анастасия (2013), Духовные правления мусульман Закавказья в Российской империи. XIX - начало XX в., Москва.
  21. Гасанов, Рафаэль (2003), Ислам в общественно-политической жизни современного Азербайджана, Социологические исследования, 3.
  22. Годс, Махмуд Реза (1994), Иран в XX веке, Москва.
  23. Ислам. Энциклопедический словарь, Москва, Наука, 1991. Институт Востоковедения Академии наук СССР.
  24. Исмаилов, Эльдар, Власть и народ. Послевоенный сталинизм в Азербайджане 1945-1953 гг. Баку, 2003, <http://ebooks.preslib.az/pdfbooks/rubooks/eldarismayvlast.pdf>
  25. Кулиев, Эльмир (2005), Азербайджан: иранский вектор религиозного возрождения, Центральная Азия и Кавказ, № 5 (41), 2005.
  26. Мотика, Раул (2001), Исламские сети в Азербайджане. В сборнике Азербайджан и Россия: общества и государства, Москва.
  27. Ланда, Роберт (1995), Ислам в истории России, Восточная литература РАН, Москва.
  28. Оганесян, Николай (1997), Карабахский конфликт: Этапы, подходы, варианты решения, Ереван.
  29. Петрушевский, Илья (1966), Ислам в Иране в VII—XV веках (курс лекций). Отв. редактор В.И. Беляев. Л.: Издательство Ленинградского университета.
  30. Полонский, Андрей (1999), Ислам в контексте общественной жизни современного Азербайджана. Особенности мусульманского возрождения в Азербайджане, "История", № 28.
  31. Светоховский, Тадеуш (2004), Ислам и национальное самосознание на пограничных территориях: Азербайджан. В сб. Религия и политика на Кавказе. Материалы международной конференции. Ред. А.Искандарян. Ереван, Кавказский институт СМИ: 8-31.

32. Состояние армянских исторических памятников в Азербайджане и Арцахе. Автор-составитель С. Карапетян, Москва, 2012.
33. Таги, Рафик (2011), Иран и неизбежность глобализации, <http://www.radioazadlyg.org>
34. Юнусов, Ариф (2004), Ислам в Азербайджане, Баку.
35. Юнусов, Ариф (2007), Запад как фактор дестабилизации Азербайджана. Иллюзии и реальность постсоветского периода, Столетия (08.10.2007).
36. Юнусов, Ариф (2012), Исламская палитра Азербайджана. Института Мира и Демократии, Баку.
37. Ярлыкапов, Ахмет, Современные формы ислама на Кавказе, <http://ethno-photo.livejournal.com/11139.html>, December 8, 2009.

#### *Աղաղթիկ*

38. Aliyev, Fuad (2012) The Gulen Movement in Azerbaijan. Current trends in Islamists Ideology 14. Hudson Institute. Center on Islam, Democracy and the Future of Muslim World.
39. Alstadt, Audrey (1992) The Azerbaijani Turks: Power and Identity Under Russian Rule, Hoover Institution Press, Stanford, 1992.
40. Badran, Margot (2009) Feminism in Islam: Secular and Religious Convergences, Oneworld publications, Oxford, England.
41. Balci, Bayram (2004) Between Sunnism and Shiism: Islam in Post-Soviet Azerbaijan. Central Asian Survey, 23 (2).
42. Bedford, Sofie (2009) Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context. Doctoral Thesis. Stockholm University, <http://www.diva-portal.org/smash/get/diva2:200259/FULLTEXT01>
43. Bennigsen, Alexandre & Wimbush Enders S. (1985) Muslims of Soviet Empire. A Guide, England.
44. Bennigsen, Alexandre and Wimbush, S. Enders (1985) Mystics and Commissars: Sufism in the Soviet Union. Berkeley: University of California Press.

45. Caucasus Research Resource Center (2013) Islam in Azerbaijan: A Sectarian Approach to Measuring Religiosity.
46. Cornell, Svante E. (2006) The Politicization of Islam in Azerbaijan. Washington and Uppsala: Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program.
47. Cornell, Svante E. (2011) Azerbaijan Since Independence, New York: M.E.Sharpe.
48. Demoyan, Hayk (2003) Karabakh Drama. Hidden Acts, Yerevan.
49. Dobroslawa, Wictor-Match (2010) Competing Islamic Traditions an Anthropological Perspective. Doctoral Dissertation. Faculty of Philosophy. Jagiellonian University, Cracow.
50. Faradov, Tair (2001) Religiosity in Post-Soviet Azerbaijan: A Sociological Survey, ISIM Newsletter 8/01, September.
51. Farideh Heyat (2008) The Resurgence of Islam in a Post-Soviet Azerbaijan, Azerbaijan in the World, Azerbaijan Diplomatic Academy 1 (13).
52. Geybullayeva, Arzu, IS AZERBAIJAN BECOMING A HUB OF RADICAL ISLAM?, [http://www.esiweb.org/pdf/esi\\_turkey\\_tpq\\_id\\_110.pdf](http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_110.pdf)
53. Goyushov, Altay (2008) Islamic Revival in Azerbaijan. Current Trends in Islamist Ideology 7. Hudson University: Center on Islam, Democracy, and the Future of the Modern World.
54. Goyushov, Altay and Askerov Elchin (2009) Islamic Education in the Soviet Union and its Successor States In Michael Kemper, Raoul Motika & Stefan Reichmuth. Central Asian Studies 168-223.
55. Grant, Bruce (2011) Shrines and Sovereigns: Life, Death and Religion in Azerbaijan, Comparative Studies in Society and History 53 (03). Cambridge University Press.
56. Hadjyzade, Hikmet (1998) A New Identity for a New Azerbaijan. Central Asia and the Caucasus 14.
57. Hajyzadeh, Hikmet (1996) Human rights and Religious Freedom in Azerbaijan. Presentation to Religion, Human Rights and Religious Freedom Program at Human Rights Center in Columbia University.

58. Heyat, Farideh (2002) Azeri Women in Transition: Women in Soviet and Post-Soviet Azerbaijan, June, 2002.
59. Heyat, Farideh (2008) New Veiling in Azerbaijan: Gender and Globalized Islam, European Journal of Women's Studies, vol. 15, no. 4.
60. Hiro, Dilip (2003) The Essential Middle East. A Comprehensive Guide, Carroll&Graf Publishers New York.
61. International Conference Proceedings - Muslim World in Transition: Contributions of the Gülen Movement, Dr. Ihsan Yilmaz, etc. /Eds./, Leeds Metropolitan University Press, London (2007).
62. Kotecha, Hema (2006) Islamic and Ethnic Identities in Azerbaijan: Emerging trend and tensions. A Discussion Paper. OSCE. Baku.
63. Mamedov, Eldar, Azerbaijan: Evaluating Baku's Attitude toward the Gulen Movement, <http://www.eurasianet.org> (16.02.1012).
64. Markham, Ian & Suendam, Birinci Pirim (2011) An Introduction to Said Nursi: Life, Thought, and Writings, England.
65. Mehranqiz, Najafzadeh (2012) Gender and Ideology: Social Change and Islam in Post-Soviet Azerbaijan. Journal of Third World Studies, March 22.
66. Meijer, Roel (2009) Global Salafism: Islam's New Religious Movement, New York: Columbia University Press.
